

ՍԵԼԵՍԿԵՐԻ ԴԻ

Ժ Խ Ա Խ Ո Տ Ի
ՉՈՐԱՑՈՒՄՆ
ՈՒ
ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Պատգմ. Հ. Մանգլ.

ԵՄԵԼՈՒՄ
ԽՈՐԱՑՈՒՄ
ՊԱՀՊԱՆՈՒՄ
ՀԵՐԱՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՈՒՍԻՍԱԿԱՆ ԿՈԼԼԵԿՏ
ՀԱՅՍՏԱՆԻ ՀԵՐԱՐԱԿԱՑՈՒՄ
ԵՍՍՐ

.633

U-36

ՀԵՐԱՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅՈՒՍԻՍԱԿԱՆ ԿՈԼԼԵԿՏ»
ՀԱՅՍՏԱՆԻ ՀԵՐԱՐԱԿԱՑՈՒՄ

1932

CA 279

633

U-36

ՍՆԼԵՍՈՒԹԻՒՄ

04 AUG 2010

Ծ Խ Ա Խ Ո Տ Ի

ՉՈՐԱՑՈՒՄՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Թարգմ. 2. Մարգ.

ԵՄԵԼԻՆ
ԻՆՏԵՐՆԱ
ԲՈՒԾՈՒՄԸ
Լոս-Անջելես
ՍՍՏՐ

Ի. Մ. Ա. ՄԱՇԿԻՆԻ
Ա. ՄԱՍԼՈՎՈՎԻ ԱՆՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՍ»

ԲՈՍՏՈՆ-ԴՈՆ

1932

30 JUL 2013

ՆԱԽԱԲԱՆ

Հյուսիսատեսիլային մեջ գյուղատնտեսական աշխատանքների կենտրոնական խնդիրն է կոլտնտեսային աշխատանքի արտադրողականության ընդհանուր բարձրացման հիմունքով իր ժամանակին ավարտել այդ աշխատանքները, ապահովել սրանց վորակը տեխնիկական և ագրո-կուլտուրական՝ պահանջների տեսակետից, վերջով միայն կարելի չի բարձրացնել բերքատվությունն և իրական պայքար մղել հորուստների դեմ:

(Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրագրված մասին ՀԱՅԲԻ յեվ ՀՀ Յերկրկուսի, Յերկրգործկուսի յեվ Յերկրկոլտնտեսության վորդուսից):

Ծխախոտի բերքահավաքն ու չորացումը—դա ամենապատասխանատու և լարված շրջանն է ծխախոտամշակման բոլոր աշխատանքների ընթացքում:

Ծխախոտի բերքահավաքը, նրա կանոնավոր չորացումն ու պահպանումը—վորով ապահովվում է հումուսի բարձր վորակը: Բերքահավաքման ժամանակ կորուստների վերացումը—անպիտան խնդիր, վորը բավականին մեծ է ու բարդ:

Ծխախոտագործական խորհրդային ու կոլեկտիվ անտեսություններում ծխախոտի հավաքման ու չորացման հսկայական աշխատանքն անհնարին է՝ առանց ընկ. Ստալինի պատմական վեց պայմանների լիովին ու գործնական կիրառման, առանց լայնորեն ծավալելու և ենինյան սոցիալ-գոյնն ու հարվածային:

1853 2
Պայքարել չորացման շրջանում կոլեկտիվ ծխախոտի համար—անա թե ինչը պիտի դառնա ծխախոտագործական խորհրդատեսությունների ու կոլտնտեսությունների լողունը: Այդ լողունը նրանք պետք է իրագործեն ծխախոտի բերքահավաքման ու չորացման ամբողջ ընթացքում:

Անցյալ տարվա բերքահավաքման փորձը պետք է լավ ուսումնասիրվի չորացման ծխախոտագործական աշխատում, վորպեսզի յեղած սխալները չկրկնվեն հնգամյակի ներկա—ավարտական տարում:

1931 թվականին ամբողջ Խորհրդային Միության մեջ տնկված էր 85600 հեկտար զեդին ծխախոտ: Սրանից անշնաս անց միայն 70000 հեկտար, կամ 82,6 տոկոսը:

Հյուսիսային Կովկասում տնկված էր 38 հազար հեկտար ծխախոտ: Մինչև բերքահավաքը տնկնաս անց 27555 հեկտար, կամ 73 տոկոսը:

Բացի դրանից, անշնաս անցած ծխախոտի բերքն էլ ցածր էր, այն պարզ պատճառով, վոր չեյին կատարվում ամենատարրական, հիմնական ագրո-տեխնիկական կանոնները:

Վորոնք եյին անցյալ տարվա բերքահավաքման կամ պանիայի հիմնական թերությունները,—ծխախոտի անժամանակ տերեհատը, ուրեմն նաև անժամանակ չորացումը, բանվորական ուշժի և արտադրություն միջոցներն ոգտագործելու և դասավորելու անկարողությունը:

Ծխախոտագործական աշխատանքները բավականաչափ ուշադրություն չեյին դարձնում աշխատանքների մեքենայացման վրա: Ծխախոտագործ-կոլտնտեսականների և խորհրդատեսային բանվորների միջև չեյ կատարվում կուլտուր-լուսավորական, դաստիարակչական ու կենցաղային աշխատանք:

Սակայն մյուս կողմից պետք է շեշտել հետևյալը.—աշխատանքի կուսակցական, խորհրդային, տնտեսական և հասարակական կազմակերպությունները, ինչպես և աշխատական ծառուրդ, գորահավաքելով կոլտնտեսային մասսաների ակտիվությունը, իսկապես վոր զգալի հաջողություններ

56125-66



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

և յին ունեւում սոցիալիստական ծխախոտագործութեան
բարձր բերքատուութեան գործում:

Ինչ հիմնական խնդիրներ են դրված մեր առաջ այս
տարի, ծխախոտի բերքահավաքն ու չորացումը հաջողու-
թյամբ անցկացնելու ասպարիզում:

1. Ամբողջովին կատարել Հ Կ (բ) Կ Կենտկոմի 1932 թ.
փետրվարի 4-ի վերջումը՝ կոլտնտեսութեանների կազմա-
մակերպչական-տնտեսական ամրապնդման մասին:

2. Ծխախոտագործական բրիգադները կազմակերպել ար-
տադրական սկզբունքով, տալով նրանց անհրաժեշտ դոր-
ծիքներ, արտադրութեան միջոցներ:

3. Ամենորոյա գործնական աշխատանքի ընթացքում լի-
ովին իրագործել ընկ. Ստալինի պատմական 6 պայման-
ները, վերոնք բոլոր քաղաքային-տնտեսական կառավարի-
անքի հաջողութեան հիմքն են կազմում:

4. Ծխախոտի բերքահավաքման ու չորացման արտադ-
րական պլանը կազմել իր ժամանակին, ճշտութեամբ Կոլ-
տնտեսականների արտադրական խորհրդակցութեաններում
և ընդհանուր ժողովներում մանրամասն քննել այդ պլա-
նը, հասցնել նրան մինչև յուրաքանչյուր կոլտնտեսականն ու
կոլտնտեսուհին:

5. Կոլտնտեսականների լաշն մասնաների, մասնավորե-
կանանց ու յերիտասարդութեան մեջ դաստիարակչական
ու կուլտ-լուսավորական լաշն աշխատանք կատարել:

6. Աշխատանքը ղեկավարել կենդանի և կոնկրետ կեր-
պով, այնպես վեր այդ ղեկավարութեանը լինի պարզ ու
հասկանալի յուրաքանչյուր կոլտնտեսականին:

7. Ծխախոտագործական կոլտնտեսութեաններին բացառ-
բեր, պարզաբանել, թե ագրո-տեխնիկան ինչ նշանա-
կութեան ունի ծխախոտագործութեան վերակառուցման,
բարձր բերքի և լավորակ հումույթի համար: Իսկ այդպիսի
հումույթ կարող են և պետք է տան ծխախոտի հումույթի
սոցիալիստական ֆարըկչները — խորհրդային կոլտնտեսու-
թեանները:

Անխնա պայքար պիտի մղել անտնտեսավարութեան
խնքնահոսի, անիրութութեան դեմ:

1932 թ. բերքահավաքման կամպանիայի լոկուսիզ
տի լինի՝ վերացնել բերքի կորուստները, ստանալ բարձր ու
լավ վորակի բերք:

Կատարել ծխախոտագործութեան պլանը, պայքարել 39,000
տոնն լավորակ հումույթի համար — ահա թե այս տարի
ինչը պիտի դառնա յուրաքանչյուր կոլտնտեսականի, մե-
նատնտես չքավորի ու միջակի պատվի, փառքի ու հերո-
սութեան պորձը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր այս գրքույկի հրատարակության նպատակն է՝ ոգնել ծխախոտագործներին, — ծխախոտագործական տպրանքային ֆերմաների վարիչներին, տեխնիկներին ու հրահանգիչներին, ծխախոտագործական հատուկ, արտադրական բրիգադներին վարիչներին, — բրիգադիւրներին, ինչպես և այն կոլանտեսականների ու կոլանտեսուհիների ակտիվին, վերոնք այդ բրիգադների մեջ են գտնվում:

Մեր հիմնական նպատակն է՝ մեր ընթերցողներին, — ծխախոտագործներին գործնական դիտելիքները հարստացնել տեսական հիմունքներով: Այսպիսով նրանք կկարողանան զորահավաքել կոլտեսուսային լայն մասսաներին՝ պայքարելու բարձր և լավորակ բերքի համար, անխնայքին և օխտեմատիկաբար պայքարելու կորուստների դեմ: Այսպիսով նրանք կծավալեն կոլանտեսուհիների ու կոլանտեսականների նախաձեռնությունը՝ ծխախոտի մշակման, բերքահավաքման, չորացման բոլոր աշխատանքները օպերիոնալիզացիայի յենթարկելու և մեքենայացնելու աստարիզում: Այսպիսով, նրանք կաշխատեն առաջին հերթին ուղիղ գառավորել բանվորական ույժը և վերջինս կրճատել՝ ի հաշիվ առանձին աշխատանքների մեքենայացման:

Հյուսիսային կովկասում աճող բույսերից միայն ծխախոտն է, վոր ամենից շատ աշխատանք է պահանջում: Յեվ չնայած այս հանգամանքին, մեքենայացման տեսակետից նա ամենահետամնացն է. ծխախոտի մշակման համարյա բոլոր աշխատանքները ձեռքով են կատարվում, առանց մեքենաների և նույնիսկ ամենապարզ գործիքների ոգտագործման:

Վորպեսզի լիովին կատարենք կուսակցության ու կառավարության առաջադրությունը, — վորով այս տարի մեր յերկրամասում պիտի տնկվեր 42315 հեկտար և հանձնվի 39000 տոնն ծխախոտ, — հարկավոր է ծախսել ընդամենը 12,5 միլիոն մարդ-որ:

Ծխախոտի բերքահավաքն ու չորացումն ամենից շատ աշխատանք են պահանջում: Միևնույն ժամանակ դրանք ծխախոտամշակման ամենապատասխանատու աշխատանքներն են: Բերքահավաքումն ու չորացումն իրենց պահանջած ժարդկային աշխատանքի քանակով առաջին տեղն են բռնում, — 40՝ տոկոս: Հետևապես այդ աշխատանքների համար հարկավոր է մինչև 5 միլիոն մարդ-որ:

Ծխախոտամշակման աշխատանքների այս մասը խիստ նշանակալից է նաև այն պատճառով, վոր ծխախոտի բերքահավաքն ու չորացումն առանձին ժամանակաշրջաններում կատարվում են չափազանց շատա, հետևապես շատ աշխատող ձեռներ են պահանջվում: Պատահում է, վոր յեղանակի շնորհիվ ծխախոտը արագ և ամբողջովին հասունանում է և հարկավոր է իսկույն և յեթ հավաքել: Ահա այստեղ է, վոր ղեկավար աշխատողները պետք է հանդես բերեն մի առանձին ձևունություն և ուշիմություն:

Ավելացրեք և այն հանգամանքը, վոր ծխախոտամշակման այդ լարված մոմենտին զուգադիպում են հացահատիկների բերքահավաքման վոչ պակաս լարված աշխատանքները (ծխախոտի տերեսատի առաջին շրջանում), ինչպես և շարքահերկ կուլտուրաների բերքահավաքը (տերեսատի վերջին շրջանում): Վերջապես, հաճախ ծխախոտի տերեսատի սկզբին վերջացած չի լինում նրա և շարքահերկ կուլտուրաների քաղհանը և անհրաժեշտ է լինում կատարել ծաղկահանումը: Ուրեմն բոլորովին պարզ է, թե այդ ժամանակաշրջանը վորչափ է լարված և հետևապես, պահանջում է մանրակրթիկա նախապատրաստություն, բոլոր անհրաժեշտ միջոցառումների վաղորոք քննություն, մանավանդ ուժերի գասավորման հարցերի քննություն:

Ինչ հետևանք կատարվի, յեթե բացակայե նախապատ-
րաստությունը ծխախոտամշակման այդ շրջանին և յեթե
լավ չքննարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցառումները—այն-
վոր մեծ բարդություններ առաջ կդնան այդ պատասխանատու-
կամպանիայի ժամանակ և, վոր գլխավորն է, ծխախոտի
բերքը մեծ կորուստներ կտա:

Սա առանձնապես պարզ կերպով ցույց և տալիս անցյալ
տարվա փորձը: Շնորհիվ բերքահավաքման բոլորովին ան-
բավարար նախապատրաստություն, աշխատանքի սխալ կազ-
մակերպություն, հավասարաբեին, ծխախոտի անժամանակ
բերքահավաքին,—յերկրամասի ծխախոտագործական կո-
տնտեսությունները հակառակն վնասներ կրեցին: Այդ վը-
նասների պատճառով խիստ տուժեց նրանց նյութական դը-
րությունը, վիժեցին մթերման պլանները և ծխախոտի ար-
դյունաբերություն արտադրական ծրագրերը:

Յերկրամասի ծխախոտագործություն մեծամասնակ բեր-
քահավաքման պատճառով ընդամենը փչացավ 5—6 հազար
տոնն ծխախոտ:

Այս վնասների պատճառներից մեկն էլ այն էր, վոր բեր-
քահավաքը սաստիկ ձգձգվեց: Ահա ձեզ յերկրամասի ծխա-
խոտարիքի հավաքման որոտկերը.—

Ոգոստոսի 1-ին հավաքված էր բերքի 2,5%-ը:	
Սեպտեմբերի 1-ին » » » 26,6%-ը:	
Հոկտեմբերի 1-ին » » » 73,2%-ը:	

Միայն նոյեմբերի 1-ին բերքահավաքը վերջացավ: Հետե-
վապես, ծխախոտի հիմնական մասը հավաքվեց սեպտեմբեր
ամսում,—46,6 տոկոս, հետո, մի ղզալի մասը—հոկտեմբերին
—26,8 տոկոս: Ավելի քիչ մասը հավաքվեց հուլիսին և ոգոս-
տոսին—26,6 տոկոս:

Ինչու այդպես պատահեց. վորովհետև անցյալ տարվա
ծխախոտատուներն ևս խիստ ուշացավ և, վոր գլխավորն է,
վատ էր բերքահավաքման կամպանիայի նախապատրաստու-
թյունն և այդ կամպանիան անկազմակերպ անցավ:

Բոլոր ծխախոտագործական կոտնտեսություններին, ծխա-
խոտապրանքային ֆերմաներին և սրանց ակտիվի խնդիրն այս
տարվա բերքահավաքման կամպանիայում հետևյալն է.—մի
քո մի հաշվի առնել անցյալ տարվա բերքահավաքման բո-
լոր սխալները, այս տարի նրանցից բոլորովին խուսափելու
համար, նախորոք և լիակատար հավով նախապատրաստվել
բերքահավաքին և, վոր ամենակարևորն է, ղորահավաքի
կոտնտեսուհիների և կոտնտեսականների լայն մասսաներին
կորուստների դեմ անխնայորեն պայքարելու համար, վոր-
պեսդի բերքը հավաքվի ամբողջապես և իր ժամանակին
հանձնվի արդյունաբերության:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐԲԱՀԱՎԱԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ —ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԲՆԵՐԸ

Ինչպես արդեն շեշտեցինք, ծխախոտի և այլ կուլտուրաների
բերքահավաքման ղուկադիպությունը, ծխախոտահավաքման
առանձին շտապողականությունը (վորից հաճախ կախված է
լինում բերքի մի ղզալի մասը) ծխախոտագործական ապ-
րանքային ֆերմաների առաջ դնում են մի առանձնապես
կարևոր ու պատասխանատու խնդիր,—վաղորդ մտածել
ու քննել բերքահավաքման նախապատրաստությունը բոլոր
անհրաժեշտ միջոցառումները: Սրանով է, վոր հիմնականում
կապահովվի կամպանիայի հաջողությունը:

Ծխախոտագործության մեջ կոտնտեսային շինարարու-
թյան առաջին յեզիու տարին ցույց տվին, վոր կոտնտե-
սությունները հաջողությամբ ղուլս բերին ծխախոտատու-
հի կամպանիան, բայց բերքահավաքման ժամանակ մեծ
կորուստներ ունեցան, վորովհետև բերքահավաքը շատ վատ
էր կազմակերպված: Հետևանքն այն յեղավ, վոր ստացվեց

քիչ քանակությամբ և անբավարար վերակի ծխախոտ, իսկ բերքի մի մասն եւ բոլորովին չհավաքվեց:

1930 թվականին Հյուսիսային Կովկասում, հոկտեմբերի 3—5-ին ցրտերից փչացավ ամբողջ բերքի 20—25 տոկոսը, իսկ 1931 թ. սեպտեմբերի 27-ի ցրտից—մոտ 7 տոկոս:

Յրտահար ծխախոտը քանակապես մեծ կորուստներ առ-վեց, իսկ վորակը բոլորովին տուժեց: Կոլտնտեսություն-ները միլիոնների հասնող ֆնանսներ ունեցան:

Անհրաժեշտ է այս տարի, մանրակրկիտ ու լավ նախա-պատրաստվելով բերքահավաքման, խուսափել անցյալ տար-վա սխալներից:

Քանի վոր ծխախոտի բերքահավաքը (տերևահատը, թե-լումը, և բոլոր մյուս աշխատանքները) կատարվում և բա-ցատապես ձեռքով և անպիսի քանակությամբ բանվորական ույժ և պահանջվում, ուրեմն դործի հաջողության դրավա-կանը հետևյալն է.—բանվորական ուժի ճիշտ կազմակեր-պումն ու դասավորումը, աշխատանքային ղեկավարումն և ծխախոտադաշտերում աշխատողների կուլտուր-կենցաղային լավ սպասարկումը:

Արդյոք այս ասպարիզում ինչ կոնկրետ ու դործնական խնդիրներ են դրված ծխախոտադործական ապրանքային ֆերմաների վարիչների, բրիգադիրների, հրահանգիչների և ագրո-տեխնիկների առաջ:

Ահա այդ խնդիրները.—1. Ծխախոտադործական ապրան-քային ֆերմաների և բոլոր բրիգադների արտադրական խորհրդակցություններում պետք է մանրամասնորեն քննել և վերջնականապես ճշտել արտադրութի նորմաները, վո-րոնք կիրառվելու յեն ծխախոտի բերքահավաքման ու չո-րացման ժամանակ:

2. Յեկնելով տնկված ծխատուտի տարածությունից և ա-գրոտեխնիկական կանոններով վորոշված բերքահավաքման ժամկետներից, մանրամասն մշակել ծխախոտադործական ապ-րանքային ֆերմաների բերքահավաքման որացույցային պլանը. վերջինս բաժանել ամենորյա առաջադրություններին:

որանց հասցնելով մինչև յուրաքանչյուր բրիգադ, ողակ, խմբակ, առանձին կոլտնտեսուհուն և կոլտնտեսականին, այն-պայման ցույց տալ շարժող աշխատանքի փնտհատումն աշ-խոտերով:

3. Ծխախոտատուների որացույցային պլանի և ընդունված արտադրութի նորմաների հիմունքով, ճշտորեն հաշվել, թե վորքան աշխատողներ ու լծկան կամ քաշող ույժ է պետք թե ամեն որվա և թե ամբողջ բերքահավաքման կամպա-նիայի համար: Մանրամասն քննել ու վորոշել ուժերի դասա-սավորությունն աշխատանքի ժամանակ:

4. Ծխախոտատուների որական առաջադրության հիմուն-քով հաշվել, թե վորքան ինվենտար և նյութեղեն է պա-հանջվում. որանք բաժանել բրիգադում, ողակների ու խրմ-բակների վրա, իսկ յեթե կարիք կա, նաև կոլտնտեսական-ները վրա: Պարզել թե վորքան ինվենտար և նյութեղեն է պահանջվում: Շտապ կատարել անհրաժեշտ վերանորո-գումը:

5. Ստուգել ծխախոտի բոլոր շենքերի թիվը, նրանց դը-րությունը (չորանոցներ, մարաղներ, վադոններ և այլն) և նրանց վերանորոգման համար շտապ միջոցներ ձեռք առնել:

Յեթե կան կառուցվող, բայց դեռ չավարտված շենքեր, շտապ կերպով արագացնել շինարարական աշխատանքները և վորքան կարելի յե շուտ ավարտել այդ շենքերը:

Յեթե պարզվում է, վոր յեղած շենքերի քանակությունն անբավարար է, պետք է իսկույն և յեթ անցնել նոր, հա-տարակ շենքերի կառուցման (չորանոցների ջերմոցային շրբ-ջանակներից, բողուններ, (БОГУНЫ) շարժական շրջանակ-ներ և այլն):

Առանձնապես պետք է ստուգել այն շենքերի թիվը վորոնք միանգամայն պետքական են չորացրած ծխախոտը պահելու համար:

6. Քննել աշխատանքի տեղերում հասարակական սնունդ կազմակերպելու հարցերը, վազորոք հաշվի առնել նրա ան-հրաժեշտությունը: Դրանք հարմար շենք, ինվենտար, կապ-

մակերպել միջերջանի մատակարարումը, այդ աշխատանքի համար մարդիկ նշանակել և այլն:

Հաշվի առնել բրիգադներում աշխատող կանանց յերեսաներին, վորոնց անհրաժեշտ և տեղավորել մանկամուկներում ու մանկահրապարակներում: Միջոցներ ձեռք առնել սրանց կազմակերպման ու կահավորման համար:

Պետք է նախատեսել դաշտում աշխատողների համար գիշերատեղի կազմակերպումը, յեթե դա անհրաժեշտ լինի: Այս նպատակով պետք է վաղորդք կարգի բերել ծխախոտողաշտերին մոտ դռնվող շենքերը:

Կոլտնտեսութեան վարչութեան հետ պայմանավորվել բրիգադների կուլտուր-կրթական սպասարկման համար (լրացրել, շրջիկ կենտեր, ազիտացիոն-գեղարվեստական խմբակներ և այլն):

Համաձայնութեան վաղ գյուղկոտայի հետ, վոր վերջինս շրջիկ խանութներ կազմակերպի անմիջապես բրիգադներում առաջին անհրաժեշտութեան միջերջաներ, իրեր և արդյունաբերական ապրանքներ վաճառելու համար:

Բոլոր վերահիշյալ միջոցառումները պետք է քննել վաղորդը:

Կոլտնտեսութեաններ, ծխախոտագործական ապրանքային ֆերմաներ, բրիգադների ղեկավար աշխատողների, ինչպիս և բոլոր ագրոտեխնիկական աշխատողների համար անպայման պարտադիր և խիստ կարեոր է հետևյալը. — բերքահավաքման կամպանիայի նախապատրաստութեան բոլոր հարցերը մանրամասն քննել կոլտնտեսականների արտագրական խորհրդակցութեաններում և ամեն մի կոլտնտեսուհուն և կոլտնտեսությանին անպայման իրազեկ անել այդ բոլոր հարցերին:

Յեր կոլտնտեսային լայն մասսաները ներգրավվում են աշխատանքի կազմակերպման, ուժերի ճիշտ դասավորման և արտադրութի նորմաների հարցերի քննութեան, զրոյնով քնդհանրապես ապահովվում և յուրաքանչյուր կոլտնտեսութեան աշխատանքի հաջողութեանը, իսկ ծխախոտաձուլ-

ման համար աղբյուրի ներգրավումը բացառիկ ու կարևոր նշանակութեան ունի. ինչպիս. վորովհետև այդ աշխատանքով մեծ քանակութեամբ մարդիկ են դբաղված և աշխտող բացակայում է մեքինայի կազմակերպիչ դերը:

Ծխախոտաձուլման ամենապատասխանատու կամպանիայի, — բերքահավաքման ու չորացման ընթացքում բոլոր կոլտնտեսուհիներին ու կոլտնտեսականներից պահանջվում է ուժերի և ուշադրութեան բացառիկ լարվածութեան, վոր պետի նրանք կարողանան իր ժամանակին և բարեխղճութեամբ կատարել բոլոր անհրաժեշտ աշխատանքները: Ամենաչնչին ձգձգումը, յեթե այդ տեղի ունենա տերահատի, թեկելու և չորացնելու գործում, — կարող է փշանալ ծխախոտը: Իրանից լինչ դուրս կգա. այն, վոր թե ամբողջ կոլտնտեսութեանը և թե յուրաքանչյուր առանձին կոլտնտեսականը անագին նյութական փաստ կունենան:

Կուսակցութեան ու կառավարութեան առաջադրած խնդիրը — 1932 թվականին Հյուսիսային Կովկասի դաշտերից տալ 39,000 տոնն լավ վորակի ծխախոտ, — պետք է կատարվի և անպայման կկատարվի միայն բոլոր կուսակցական ու խորհրդային կազմակերպութեաններ և կոլտնտեսային լայն մասսաների անընդհատ ջանքերով, լայնորեն ծավալելով աշխատանքի սոցիալիստական ձևերը — սոցմրցումն ու հարվածայնութեանը: Սակայն կոլտնտեսութեանների շատ ղեկավար աշխատողներ մինչև այսօր դեռ բավականաչափ պարզ և գիտակցել այդ մեթոդների նշանակութեանը, թե բազմահատուկ են այդ մեթոդները:

Հետևանքը, ծխախոտագործական ապրանքային ֆերմաներում և բրիգադներում սոցմրցումն ու հարվածայնութեանը շատ թույլ են դարգացած: Ավելին — հաճախ առանձին կոլտնտեսուհիների և կոլտնտեսականների իսկական հարվածային աշխատանքի որինակները ոպորտունիստորեն փաղվում են, ղիմազրկվում և չեն ժողովրդականացվում:

Ծխախոտագործական ապրանքային ֆերմաներում ու բրիգադներում խրախուսման, պարգևատրման հարցերն

ևս հետին տեղ են բռնում: Պարզեները սովորաբար տրվում են հեղափոխական տոներին, միանգամայն կտրված լինելով արտադրությունից, արտադրական առաջադրությունների կատարումից:

Պետք է փոխել այս դրությունը, պետք է պարզեները տալ վոչ թե ընդհանրապես, այլ հարվածային աշխատանքի յուրաքանչյուր նմուշի համար, հենց այդ աշխատանքի շըրջանում և, վոր կարեւոր է, այս կամ այն առաջադրությունը հարվածային տեմպերով կատարելուց անմիջապես հետո:

Ահա այդպիսի պարզեկատվությունն է, վորը կլինի աղ-դյունավետ, վորը հարվածային աշխատանքի խթան կզառնա և նրա ուղեւթյամբ անպայման կհեշտանա կոլտնտեսային մասնաների զորահավաքը՝ աշխատանքի նորմաները կատարելու և գերակատարելու համար:

Ընդհանրապես ծխախոտամշակման և մասնավորապես բերքահավաքի ու չորացման աշխատանքները խանդավու- են նրանով, վոր կոլտնտեսությունների, ծխախոտագործա-կան ապրանքային ֆերմաների ղեկավար աշխատողները, ինչպես նաև կոլտնտեսուհիների ու կոլտնտեսականների լայն մասնաները—բավականաչափ ծանոթ չեն ծխախոտա-գործության տարրական ագրո-տեխնիկական կանոններին: Նրանով նաև դժվարանում են նրանց ուղեւթով և արտադ-րական աշխատանքը:

Այդ կանոններին ծանոթանալու համար, գրքիս հետևյալ գլուխներում մանրամասն նկարագրվում է ծխախոտի բեր-քահավաքման ու չորացման ամբողջ ընթացքը:

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐԲԱՅԱՎԱԿԸ

Ա. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծխախոտագործության մեջ ամենակարևոր և միևնույն ժամանակ ամենից շատ աշխատանք պահանջող գործը—գա-րեքահավաքն է և հետագա մշակումը, այսինքն, ծխախո-

տի ապրանքային հումույթ ստանալը: Ծխախոտի բերքա-հավաքման, թեղելու և չորացնելու ժամանակը համեմատա-բար կարճ է, այս պատճառով մեր սոցիալիստական խոշոր տնտեսությունները, խորհրտնտեսություններն ու կոլտն-տեսությունները, պետք է իր ժամանակին կատարեն բո-լոր նախապատրաստական աշխատանքները,—պատրաստեն անհրաժեշտ նյութեղենը, վերանորոգեն ամբողջ դուղա-տնտեսական ինվենտարը, ծխախոտագործական շենքերը և ունենան այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ է բերքահա-վաքման նորմալ ընթացքն ապահովելու համար: Միայն այն ժամանակ խորհրտնտեսություններն ու կոլտնտեսու-թյունները կարող են ասել, թե ծխախոտը մերն է,—յերբ նա չորացվի և հավաքվի պահեստներում: Կորուստների դեմ մղվող պայքարը կարող է հաղթանակ բերել և խորհրտնե-սություններին ու կոլտնտեսություններին լրացուցիչ բերք տալ միայն այն ժամանակ, յերբ, մենք բերքահավաքմանը ղիժավորենք մտրականորեն և լավ նախապատրաստված:

Ծխախոտը հասունանում է անընդհատ: Մի տերևահա-տից մինչև մյուսը շատ կարճ ժամանակ է տնցնում—ըն-գամենը չորս-հինգ օր: Յեւ, վորովհետև ծխախոտատունը տեւում է մեկ ամիս կամ ավելի, ուստի տարբեր տերևահա-տերը սովորաբար զուգադիպում են իրար: Հուլիսի առաջին կեսից սկսած՝ աշխատանքի ընդհատումներ չեն լինում թե դաշտում և թե ծխախոտի շենքերում: Կատարվում է տե-րևահատը, թեղումը, չորացումը: Այս աշխատանքներն անընդհատ շատանում են և ոգոստոսի վերջին ու սեպտեմ-բերի սկզբին հասնում ամենաբարձր լարվածության: Այնուհետև այդ լարվածությունը հետզհետե իջնում է և հիշյալ աշխատանքները վերջանում են հոկտեմբերի սկզբ-ներին: Ծխախոտի բերքահավաքման այդպիսի ընթացքը սովորաբար նորմալ է լինում և հիմնականում կախված է հեռեւյալ պայմաններից.—1. ծխախոտատունից, 2. ծխա-խոտի տեման և հասունացման ժամանակ յեղանակի բնույ-թից և 3. ծխախոտի դաշտային խնամքից:

Էալ վորակով և առատ բերք և տալիս վաղ ծխախոտատունկը: Ասյիսի սկզբին տնկած ծխախոտն սրապ և զարգանում, հասունանում և ավելի չոր և շուր ժամանակի իսկ սրանով ապահովվում են ծխախոտի տերևների հավաքման ու չորացման հորմալ պայմանները:

Ծխախոտի աճման ու հասունացման տեղության համար մեծ նշանակություն ունի նաև յեղանակը: Գարնան վերջին և ամառվա սկզբին չափավոր տաքությունը և ուղի խոնավությունը նպաստում են ծխախոտի նորմալ աճման և լավ բերքատվության: Ամառվա կեսին ավելի չոր և տաք յեղանակը առանձնապես նպաստավոր ազդեցություն և գործում ծխախոտի հասունացման վրա և բարձրացնում և նրա վորակը:

Ընդհակառակը, գեթե ծխախոտն ուշ և տնկված, նա աճում-հասունանում և աշնանային որերին, վորոնք ավելի կարճ են, անձրևոտ և սյու ժամանակ սառը քամիներ են լինում: Հասկանալի չէ, վոր այսպիսի պայմանները վատ են ազդում ծխախոտի վրա: Նրա տերևները դանդաղ են հասունանում, չորացումը ձգձգվում և չնայած տաքացրած շենքերում չորացնելու միջոցով հաջողվում և լավ գույն տալ ծխախոտին, այնուամենայնիվ նա կորցնում և շատ բան իր վորակից:

Վերջապես, ծխախոտի բերքը բարձրացնելու և նրա հասունացումն արագացնելու տեսակետից վճռական նշանակություն ունի նրա դաշտային խնամքը: Իր ժամանակին կատարվող քաղհանը և հողի փխրացումը բույսին տալիս են արագ զարգանալու հնարավորություն: Վաղ ծաղկահատումը, յերկրորդական ճյուղերի կտրատումը, բույսի ներքևի սակավ պետքական տերևների կտրատումը արագացնում են հասունացումը: Ծխախոտը հետագա մշակման ժամանակ իր բոլոր բնական լավ հատկությունները կարող և պահել միայն այն ժամանակ, յեթե նա հավաքվում և համապատասխան հասունության շրջանում: Խորհունտեսություններն ու կտրանաեսություններն ամենից շատ կորուստ

ունենում են նրանից, վոր տերևատն անփուլից կերպով և կատարվում: Շատ դեպքերում տերևները կտրվում են կամ չափից դուրս հասունացած, կամ լավ չհասունացած: Թե մեկ և թե մյուս դեպքերում բերքը պակասում և 20—30 տոկոսով և ծխախոտի վորակն ևլ ցածր և լինում:

Այս նախնական դիտողություններից հետո համառոտ կերպով թվենք ծխախոտի տերևների հասունության արտաքին, հիմնական նշանները և անցնենք տերևահատման տեխնիկային և ծխախոտի հետագա մշակման ձևերին:

Ծխախոտի տերևները հասունանում են շնորհիվ այն հանգամանքի, վոր նրանց մեջ կուտակվում են զանազան որգանական նյութեր, առաջին հերթին ջրածխածային նյութեր, վորոնց թվում նաև ոսլա: Ծխախոտի հասունացման նշաններից մեկը, — տերևների գունատ-կանաչ գույնը հենց նրանով և բացատրվում, վոր կանաչ քլորաչեբտերում կուտակվում են ոսլայի սպիտակ մասնիկները, վորոնց շնորհիվ տերևը կորցնում և մութ-կանաչ գույնը և ստանում գունատ-կանաչ գույն: Տերևի հետագա դեղնությունը, վոր սկսվում և նրա ծայրերից և հետգհետ տարածվում ամբողջ տերևի վրա, լրիվ հասունության նշանն և և բացատրվում և նրանով, վոր դեղին գույն տվող նյութերը, քլորոֆիլի քայքայման հետևանքով, նկատելի յեն դառնում և դեղին գույն են տալիս տերևին: Վերջապես, հասունության նշաններից նաև մեկը — տերևների փխրությունը, նույնպես առաջ և գալիս նրանից, վոր տերևի վանդակների մեջ ոսլայի կուտակվում: Տերևի խոնավությունը բացատրվում և հետևյալով. — վորովհետև քլորաչեբտերը լցված են լինում ոսլայով, լուծվող ջրածխածնային նյութերը դժվարությամբ են անցնում ոսլայի մեջ, վորով ուժեղանում և տերևի խոնավությունը:

Բացի վերև հիշված նշաններից, կարևոր և հիշել նաև վի կարևոր հանգամանք. հասունացած տերևը չհասունացած, քնքույշ տերևից տարբերվում և նրանով, վոր նրա վրա հազիվ նկատվում են մազեր, վորոնք կպչուն նյութ են արտադրում, — և ամենից և խեղճով:

56125.66



Վերևում ասվածը միատեսակ չի վերաբերում բոլոր տերևներին, ինչպես և տարբեր հողերում մշակվող ծխախոտներին: Պետք է ի նկատի ունենալ, վոր պինդ հողերում աճող ծխախոտերը թույլ են արտահայտում մեր հիշած նշանները, ուստի նրանց պետք է հավաքել մի քիչ շուտ, այնպես, վոր բերքի քանակի ու վորակի կորուստ չլինի: Ստորին տերևները—այսպես կոչված դիպսարն ու խաշաման քիչ են գեղնում, չեն ծածկվում խեփով, ինչպես միջին և վերին տերևները, ուստի վորպեսզի նրանք չափից անց չհասունանան, պետք է հավաքվեն մինչև լրիվ դեղնելը:

Դեղին, գլանակային ծխախոտերի բերքը Հյուսիսային Կովկասում հավաքվում է մի քանի նվազ (4—5) Ծխախոտը հավաքվում է ներքևի տերևներից սկսած, յերբ հետզհետե հասունանում է: Կա նաև հավաքման մի յերկրորդ յեղանակ—ամբողջ բույսի մի անգամից հավաքումը, վորը մեղանում շատ քիչ է կատարվում, ուստի մենք կանգ կառնենք առաջին ձևի բերքահավաքման վրա:

Բ. ՏԵՐԵՎԱՀԱՏ

Ծխախոտի տերևները հասունանում են աստիճանաբար, սկսած ներքևի տերևներից: Գործնականում և տեսականում պարզված է, վոր ծխախոտի տերևների լավ հատկությունը կախված է այն հանգամանքից, թե նրանք ցողունի վոր մասի վրա յեն գտնվում: Ներքևի տերևները—դիպսարն ու խաշաման թե իրենց պնդությունը, թե գույնով, թե բուրմունքով և թե ընդհանրապես բոլոր հատկություններով ավելի վատ ծխախոտ են տալիս, քան վերևի տերևները: Այս հիմունքով էլ ծխախոտի բերքը մի քանի անգամ հավաքվում: Ամեն մի առանձին բույսից տերևները քաղվում են պարբերաբար, իսկ տերևահատի քանակը կախված է ծխախոտի տեսակից: Սովորաբար ցածրատեսակ, ինչպես և շուտ հասնող և մանրատերև ծխախոտը եկապորտային նշանակություն չունեցող ուսուցանողում քաղվում է 3 անգամ,—սկզբում ներքևի տերևները, հետո միջին և վեր-

ջապես, վերին տերևները: Եկապորտային ծխախոտ տվող ուսուցանողում, վորտեղ վորակավոր ծխախոտ է ստացվում, տերևահատը ավելի մեծ թվով է լինում—5 անգամ: Վերջապես, կան ուսուցանող (Ղրիմ, Աբխազիա), վորտեղ բարձր վորակի ծխախոտեր են աճում և վորտեղ տերևահատը կատարվում է 7—8 անգամ: Մեր ծխախոտի արդյունաբերությունը, յեղակետ ընդունելով ծխախոտի տերևի հատկությունները և նրա տեղը ցողունի վրա, Հյուսիսային Կովկասի ծխախոտերի համար ահմանել է հինգ տերևահատ և խոտորեն պահանջում է, վոր յուրաքանչյուր տերևահատ առանձին կատարվի և նրանից ստացված ծխախոտը հետագայում նույնպես առանձին մշակվի: Սակայն այստեղ բացառություն կարելի յե անել վերջին յերկու տերևահատի վերաբերմամբ, վորոնք կարող են միասին կատարվել: Պետք է նաև ի նկատի ունենալ, վոր տերևահատերի թվի կրճատումը թույլատրելի յե բերքահավաքումը ձգձգվելու դեպքում, յերբ ցրտերը վտանգ են սպառնում ծխախոտին: Սակայն խորհանտեսություններն ու կոտնտեսությունները պետք է գիտենան, վոր տերևահատերի կրճատման շնորհիվ ավելի քիչ և ավելի ցածր վորակի բերք է հավաքվում:

Ծխախոտի արդյունաբերության Համամիութենական Ինստիտուտի դաշտագործական բաժնի 1931 թվի տվյալներից* յերևում է, վոր—

Կրանողարում ամբողջ բերքը մի անգամից	
հավաքվելով, կազմել է	77,6%
Յերեք անգամ հավաքելիս	100 »
Սուխումում հինգ անգամ	100 »
չորս անգամ	93 »
յերեք անգամ	82 »
յերկու անգամ	69 »

Այս թվերը պարզ ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ կորուստներ են ունենում խորհանտեսություններն ու կո-

* Տվյալները վերցրած են Յե, Ա. Զուբկովի «Ծխախոտագործության ագրոտեխիկան» գրքից:

տնտեսությունները, յետք բավականաչափ խնամքով չեն հատարում բերքահավաքը: Ինչ վերաբերում է ծխախոտի վորակին, պետք է ասել, վոր տերևահատերը յերեք անգամ կատարվելու դեպքում, վորակն իջնում է մինչև 20 %, իսկ 1—2 անգամ կատարվելու դեպքում—մինչև 30—40 տոկոս: Թե քանակի և թե վորակի իջեցումը միանշանակն հասկանալի չէ, քանի վոր 1—2 անգամ տերևահատ կատարելիս, ստորին տերևները լինում են չափից դուրս հասունացած, իսկ վերին տերևները—դեռ չհասունացած: Թե մեկ և թե մյուս դեպքում, ծխախոտը չորացնելուց հետո, ավելի քիչ բերք կստացվի, քան թե նորմալ բերքահավաքման դեպքում: Ահա թե ինչու խորհրտնտեսություններն ու կոլտնտեսությունները չպետք է բաց թողնեն տերևների հասունացման մոմենտները, չպետք է ուշացնեն տերևահատը, վորպեսզի հետո, յերբ անցնում է բերքահավաքման ժամկետը, ստիպված չլինեն մի անգամից հավաքել բոլոր տերևները:

Կովկասում և Դրիմում յուրաքանչյուր տերևահատ ունի իր առածին անունը: Վորովհետև դրանակային ծխախոտ կուլտուրան մեզ մոտ յեկել է Թյուրքիայից, ուստի տերևատերի անուններն էլ գրեթե բացառապես թյուրքերեն են: Մեղանում, Հյուսիսային Կովկասում ընդունված են հետևյալ անունները.—1-ինը—դիպ (դիպսարի), 2-րդը—խաշլամա, 3-րդը—անաչ, 4-րդը—թորուկ-ալթի և 5-րդը—թորուկ: Երբք հավաքելիս յուրաքանչյուր տերևահատից ստացվում է հետևյալ քանակությունը—դիպ—8—10%, խաշլամա—12—15%, անաչ—45—46%, թորուկ-ալթի—25% և թորուկ—10%: Տերևների քանակն ու մեծությունը տարբեր է և կախված է ծխախոտի տեսակից: Բազմատերև ծխախոտի տերևները լինում են հետևյալ քանակով (միջին թվով).—դիպ—3—4, խաշլամա—5—6, անաչ—10—12, թորուկ-ալթի—5—6 և թորուկ—4—5: Անաչներն իրենց կշիռով ու մեծությամբ առաջինն են, դրա համար էլ բերքի մեջ ամենամեծ տոկոսն են կազմում:

Հասունացած ծխախոտը սովորաբար հավաքվում է որվա հով ժամերին—առավոտյան, յեթե ցող չկա և յերեկոյան: Ծխախոտը չպետք է հավաքել յերկարատև անձրևներից հետո, վորովհետև տերևները խոնավություն են ծծում, վատ են չորանում և ցածր վորակի ծխախոտ են տալիս: Ծոք ժամանակ հավաքված ծխախոտը լինում է թոշած, տերևները կաշում են իրար, ճմլվում են և մարագներում դրվար են յենթարկվում օդի դրական ազդեցության, ուստի և և հեշտությամբ են փչանում: Այդպիսի ծխախոտը թելելն ավելի դժվար է:

Մեր խորհրտնտեսություններում և կոլտնտեսություններում, բերքահավաքի յեռու ժամանակ բանվոր ձեռքերի պակասությունը և բերքը ամբողջությամբ հավաքելու անհրաժեշտությունն ստիպում են տերևահատը կատարել նաև դիշերները: Հատկապես խորհուրդ է տրվում տերևահատը կատարել լուսնյակ դիշերներին, այն ժամանակ, յերբ անձրևներ և ցող չեն լինում: Ցող լինելիս ծխախոտը չպիտի հավաքել, վորովհետև նա սևանում է, կորցնում իր վորակից և, բացի դրանից, թաց ծխախոտի տերևահատը անհաճելի չէ, կոլտնտեսուհիները թրջվում են և դժվարությամբ են աշխատանքի դնում:

Հյուսիսային Կովկասում ծխախոտի բոլոր տերևները հասունանում են 40—45 որվա ընթացքում: Այս ժամկետը, սակայն, կախված է նրանց արագ հասունացման հատկությունից և յեղանակից: Ծխախոտը շուտ է հասունանում տաք, լավ արևային յեղանակին և, ընդհակառակը, դառնալով է հասունանում, յեթե յեղանակը անձրևային է և ցուրտ:

Հյուսիսային Կովկասում սովորաբար տերևահատն ըսկավում է հուլիսի առաջին կեսից: Խորհրտնտեսությունները և կոլտնտեսություններն այդ ժամանակ դիտում են ծխախոտադաշտերը և վորոշում, թե առաջին հերթին ծխախոտը վորտեղ պիտի հավաքվի: Բերքահավաքը սկսվում է ստորին տերևներից—դիպսարից: Առաջ, անհատական մասը տրե-

տեսուօթյուններում, ստորին աշխուժանքը սովորաբար չեյին հավաքվում. դրանք կտրատվում ու գեն եյին գցվում: Խոշոր տնտեսության մեջ զիպսարը զգալի տեղ է բռնում — նա կազմում է բերքի 10%-ը: Բացի այդ, ծխախոտի պահանջը և զիպսարի համար սահմանված ձեռնտու գը- ները խորհրտնտեսություններին ու կոլտնտեսություններին հնարավորութիւն են տալիս հավաքել և ոգտադործել դիա- սարի բերքը: Բերքահավաքման ձևերը տարբեր են: Մանր անհատական տնտեսության մեջ, վորտեղ ծխախոտացանքի տարածութիւնը 0,5—1 հեկտարից ավել չէր, կատարվում էր ընտրովի բերքահավաքը—այսինքն՝ ամբողջ դաշտից ընտրվում ու հավաքվում եյին հասունացած տերեւները միատեսակ դարգացած բույսերի մեծ մասից: Խոշոր տնտե- սության մեջ տերեւահատի՝ ժամանակ այդ բանը ձեռնտու չէ և մեծ խորհրտնտեսություններում ու կոլտնտեսություն- ներում, չնչին բացառութիւններով, ընտրովի տերեւահատ չի կատարվում:

Կոլտնտեսությունը, վորը տնկել է 100 և ավելի հեկտար ծխախոտ, բերքահավաքման շրջանում միշտ ունենում է վոչ պակաս, քան 4—10 հեկտար հասած ծխախոտ, վորի այս կամ այն խմբի տերեւները (որինակ՝ ստորին, միջին և այլն) հասունացած են լինում: Յեւ հասունացած խմբի տերեւները հավաքում են ամբողջովին: Կարճ ժամանակից, 4—5 որից հետո այդ նույն հողամասում սկսվում է յերկրորդ տերեւ- հատը, միայլ հողամասում առաջինը և այլն: Այդպիսով բեր- քահավաքը հետզհետե սկսվում է ծխախոտի բոլոր դաշտե- րում:

Տերեւահատի ձևերն ու տեխնիկան բոլորովին բարդ չեն, սակայն իհարկե վորոշ վարժութիւն է հարկավոր ար- տադրույթի միջին նորման կատարելու համար (30—50 թել- նայած ծխախոտի տեսակին և տերեւների խմբին):

Տերեւահատողը դաշտում սովորաբար զբաղվում է յերկու շարքերի վրա: Ինքը գտնվելով շարքամիջում, հերթով թե- մեկ և թե մյուս շարքերից կտրում է հասունացած տերեւ-

ները: Տերեւահատն սկսվում է բույսի ներքեից, և, խմբա- վարի ցուցմունքների համաձայն, աշխատողը յուրաքանչուր բույսից կտրում է 3—4 և ավելի տերեւ: Նա մեծ մատով բռնում է տերեւի վերին մասը, ցուցամատով—ներքեի մասը մինչև պոչը և կտրում է ցողունից: Այսպիսով հավաքելով վորոշ թվով տերեւներ, դարսում է նրանց կարգով (պոչերը մի կողմը) և թողնում շարքերից մեկի վրա: Հասնելով մին- չև վորոշ տեղ (սայլի ճանապարհը), նա հավաքում է իր կտրած ծխախոտը, կամ թե այս աշխատանքը կատարում է հատուկ նշանակված մի վորեւ անչափահաս կամ վոչ վո- րակյալ կոլտնտեսուհի: Կտրողը շարունակում է իր աշ- խատանքը հետևյալ շարքերի վրա:

Փորձված կոլտնտեսուհիները քաղում են յերկու ձեռքե- րով, քիչ փորձվածները մի ձեռքով քաղում են, մյուսով հավաքում, ապա դարսում: Մրանով վերջանում է տերեւա- տը: Տերեւահատի ժամանակ պետք է կատարել աշխատան- քի վորակի հետևյալ ցուցիչները.—վոչ մի հասունացած տե- րեւ չթողնել, քաղել թե հասունացած և թե՛ հասունանալուն մոտ տերեւները, քաղած տերեւները չթողնել շարքերում, տե- րեւները տանելիս չթափթփել, այլ կանոնավոր ու խնամքով դարսել զամբյուղներում, արկղներում, սայլի վրա և այլն:

Գ. ԾՆԱՆՈՏԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՇՏԻՑ

Քաղված ծխախոտը հետզհետե տեղափոխվում է հետա- քս աշխատանքի տեղը—սովորաբար ծխախոտի մարագը: Յեթե կոլտնտեսութիւնը կամ խորհրտնտեսութիւնն ունեն բեռնափառ ավտո, կամ տրակտոր, սրանք պետք է ոգտա- դործվեն քաղած ծխախոտը տեղափոխելու համար, քանի վոր, նախ՝ տեղափոխութիւնը ավելի արագ է կատարվում, և յերկրորդ՝ ծխախոտն ավելի քիչ է ֆուսավում: Հյուսիսա- յին Կովկասում մեծ մասամբ դործ են ածվում արկղավոր սայլեր: Լեռնային վայրերում (Մեծ և Փոքր ծովափ, Հայ- կական ռայոն, մասամբ Ապշերոնյան ռայոն և այլն) դործ են ածում հատուկ զամբյուղներ, վորոնցով ծխախոտը դաշ-

տից տեղափոխվում են ձիերի, յիղների և մարդկանց միջոցով: Խորհանտեսություններն ու կոլտնտեսությունները ծխախոտը դաշտից մարագները տեղափոխելու համար, պետք է պատրաստի ունենան բավականաչափ դամբուղներ՝ և սայլերի վրայի հարմարեցումներ:

Շարքամիջից դուրս բերված ծխախոտը խնամքով ու կանոնավոր դարսվում է վորոշ տեղում և այստեղից բեռնվելով սայլերի վրա, տարվում է մարագ կամ մի այլ տեղ: Ամեն մի տերևահատող պետք է գիտենա այն տեղը, վորտեղ դարսվում է բեռնվելիք ծխախոտը: Դա հարկավոր է նրա համար, վոր տերևահատն ու թելումը միասին կատարելու դեպքում, նա իմանա իր քաղած ծխախոտի տեղը և կարողանա իսկույն սկսել թելումը: Այդպիսով կվաճականա դիմազրկությունը:

Կանաչ ծխախոտը բեռնելիս կամ իջեցնելիս նրա հետ շատ զգուշ պետք է վարվել: Չպետք է կոխոտել, ճվել, սխալ դարսել ծխախոտը, վորովհետև դրանից նա կիջանա և մեծ կորուստներ կտա: Կոխկրած ու ճվված ծխախոտի տերևներն իրար են կպչում և այս պատճառով թելումը դժվարանում է: Բացի դրանից, ծխախոտը ճվված տեղերում սևանում է և շատ բան կորցնում իր վորակից:

Ծխախոտագործական խորհանտեսություններում ու կոլտնտեսություններում կորստների դեմ մղվող պայքարն իր նպատակին կհասնի, յեթի, ինչպես հարկավոր է, կարգավորվի ծխախոտի տեղափոխությունը: Ահա այն հիմնական կանոնները, վորոնք պիտի պահպանվեն ծխախոտի տեղափոխման ժամանակ և դրանով ապահովվի բերքի քանակը և մանավանդ վորակը.—

ա) Տերևները խրճերը դարսել կարգով, պոչերը մի կողմ, չճմել, վերևից չսղմել դարսված ծխախոտը:

բ) Դարսել այնպես, վոր տերևների պոչերը լինեն դըրսից (յերբ նրանք դարսվում են վորևե բանի մեջ):

գ) Կեղտից, փոշուց կամ անձրևից տերևները անպայման ծածկել բրնձենաով կամ այլ թեթև ծածկոցով:

Ծխախոտը հասցնելով մարագ, պետք է զգուշությամբ դատարկել արեղները, սայլերը, դամբուղները և այլն և դարսել առանձին կույտերով, հետագա գործողության—թելման համար:

Դ. ԿԱՆԱՉ ԾԽԱՆՈՏԻ ԹԵԼՈՒՄԸ

Ծխախոտի թելումը, այսինքն նրա կանաչ տերևները թելի (թոկի) վրա շարելը ամենից շատ աշխատանք և վորակյալ աշխատողներ (կոլտնտեսականներ) պահանջող գործողություններից մեկն է: Սովորաբար տերևահատող կանաչ միկնույն ժամանակ թելողներ են: Բացառություն են կազմում պառավները և զրկի յերեխաներ ունեցող կանաչ, վորոնց տոկոսը մեծ է և վորոնք միայն թելելով են զբաղվում: Ծխախոտը թելելու աշխատանքը միշտ լարված է կատարվում և շատ հաճախ ուշանում է: Այս դրությունից դուրս գալու համար, խորհանտեսություններն ու կոլտնտեսությունները պետք է ձգտեն թելող մեքենաներ բանեցնելուն և կիրառեն բոլոր այն նոր մեթոդները, վորոնցով ծխախոտի չորացումը կատարվում է առանց թելելու: Այս հարցի վրա մենք այժմ կանգ չենք առնի: Նրա մասին մանրամասն կխոսենք զրբիս 6-րդ գլխում: Առայժմ, քանի վոր ծխախոտը ձեռքով է շարվում, նկարագրենք այդ աշխատանքի ձևերն ու ընթացքը.—

Ամենից առաջ պետք է շեշտել, թե վոր տեսակի ծխախոտն է իսկույն և յեթ շարվում (թելվում) և առհասարակ, մինչև թելելը վորքան ժամանակ կարելի յեթոդնել կուտակված ծխախոտը:

Անձրեվից կամ ցողից քրշված ծխախոտն իսկույն յեվ յեթ պիտի թելել յեվ կախել վագոնների, օջաճակների կամ այլ հառմաբեցումների վրա՝ հետագա գործողությունների—դեղնեցման ու չորացման համար: Դեռ ևս խոնավ, շատ թաք ծխախոտը թելելիս ճվվում է, վորովհետև նա շատ զդաշու է, ուստի պետք է քղկել, վառ մի փոքր բառամի: Վերջապես, նաև թե կոլտնտեսությունն ինչպես է մտածում դեղնեցնել

ծխախոտը, պետք է թելումը կատարել կամ անմիջապես նրան դաշտից տեղափոխելուց հետո, կամ ավելի ուշ:

Յիթե խորհանտեսությունը կամ կոլտնտեսությունն ունի բավականաչափ արհեստական չորանոցներ (տաքացվող շենքեր) վագոններ և աշխատող ձեռքեր, ավելի լավ է խուկույն սկսել ծխախոտի թելումը, թելած ծխախոտի դեղնեցումը և չորացումն արևի տակ կամ տաքացվող շենքերում: Յերբ պայմանները այդ չեն թույլ տալիս, մնում է ծխախոտը դեղնեցնել առանց թելելու, իսկ թելումը կատարել հետո: Սակայն կոլտնտեսությունները չպետք է մոռանան, վոր այս դործողությունը շատ պատասխանատու յե և պահանջում է արթուն հսկողություն: Ամենաչնչին անուշադրությունը կարող է փչացնել ահագին քանակությամբ ծխախոտ: Այսպես թե այնպես, ծխախոտն առանց շարելու 2—3 օրից ավելի չի կարելի թողնել: Բերքահավաքման յեռուհ որբերում, յերբ մարադները լցվում են քաղված ծխախոտով, ինչպես ել լինի պետք է պահպանել այդ կանոնը:

Ծխախոտը ձեռքով շարելիս դործ են ածում պողպատյա ասեղ, վորի յերկարությունը մինչև 50 սանտիմետր է: Ասեղով ծակում են տերևի կոթը (պոչը), նրա ծայրից մոտ 1, 2—2 սմ հեռու: Գործնականում գոյություն ունի թելելու յերկու ձև, վորոնք կախումն ունեն տերևի մեծությունից և նրա պոչերի հաստությունից: Ամբողջ Հյուսիսային Կովկասում ընդունված է մի ձև, տերևները շարվում են շիտակ կողմից, այնպես, վոր յուրաքանչյուր տերև իր շիտակ կողմով ընկնում է նախորդի թարս կողմի վրա: Յերկրորդ ձևը կիրառվում է Ղրիմում, «դյուբեկ» ծխախոտի համար: Սրա տերևը փոքր է, միջին յեքակը ավելի նկատելի յե թարս կողմից, ուստի թելումն ել թարս կողմից է կատարվում: Յերկու ձևերն ել հարմար են, սակայն ունեն մի ընդհանուր պահանջություն—չորանալու ժամանակ տերևները շրջվում են շիտակ կողմի վրա, ամուր ծավում են մեկը մյուսին և այս պատճառով նրանց միջին մասերը դանդաղ են չորանում:

Ինչպես է կատարվում թելումը: Սովորաբար թելող կինը նստում է հատակին, ծխախոտի մոտ, աջ ձեռքով բռնում է ասեղի մեջ-տեղից, վորը հորիզոնական դիրք է ունենում: Ձախ ձեռքով նա վերցնում է ծխախոտի տերևները, դնում ծակին և մեկ-մեկ ասեղում է, տերևի պոչն ամուր բռնելով մեծ և միջին մատներով, իսկ ցուցամատով թիթե պահում է տերևի պոչի ծայրը մոտ 2 սմ տարածության վրա՝ ասեղն անցկացնելու համար: Յերբ ծխախոտը շարված է ամբողջ ասեղի վրա, վերջինիս մեջ անց է կացվում թելը և ծխախոտը տարվում է թելի վրա: Ծխախոտը թելի վրա շարվում է վորոշ կարգով և պահանջված խտությամբ:

Ծովափնյա «Տրսպիգոն» ծխախոտը ասեղի վրա շարվում է նույն ձևով: Տարբերությունը միայն այն է, վոր թելի վրա անցկացնելու և տեղավորելու համար կա հատուկ բանվոր (յուրաքանչյուր 5—6 թելողներին—1 բանվոր): Այս ձևը խիստ հարմար է: Շնորհիվ լրացուցիչ բանվորի, թելումն արագանում է: Բանվորի աշխատանքն անհրաժեշտ է, քանի վոր ինքը, թելողը չի կարող տերևները միևնույն ժամանակ շարել—տեղավորել թելի վրա՝ առանց նրանց վնասելու: Թելի վրա ծխախոտի խտությունը կախված է նրա հատուկ թյունից և չորացման պայմաններից:

Թելումն ավելի խիս է լինում, յեթե՝ 1) ծխախոտը մանրատերև է, 2) յեթե ծխախոտն աճել ու հասունացել է չոր յեղանակին, 3) յեթե տերևները բանականաչափ չեն հասունացած և աճել են պինդ, բերրի հողերի վրա և, վերջապես, 4) յեթե ծխախոտն արհեստական չորանոցներում պիտի չորացվի:

Պեճ է նուր օտքի՝ 1) խոշորատերև ծխախոտերը, 2) խոնավ, անձրևային յեղանակին աճած տերևները, 3) չափից դուրս հասունացած կամ մինչև թելումը լավ դեղնած տերևները 4) այն տերևները, վորոնք պետք է արևի տակ չորացվեն:

Սովորաբար չափից դուրս խիտ շարված ծխախոտը փչանում է, իսկ չափից դուրս նոսր շարվածը շուտ է չորանում

և լավ չի դեղնում: Այս պատճառով թելոդներին պետք է վորոշ ցուցմանքներ տալ աշխատանքից առաջ, նայած ծխախոտի հատկութիւններին: Գործնականում պարզվել է, վոր 5 մետր յերկարությամբ ստանդարտ թելի վրա տերեւներ բռնում են 6—6½ ասեղի տեղ — յեթի չորացումն արեւի տակ է լինելու և 7 ասեղի տեղ, յեթե ծխախոտն արհեստականորեն է չորացվելու (ասեղի յերկարությունը—50 սմ): Այսպիսով կարելի յի սահմանել հետևյալ փոխ-հարաբերութիւնը.—Արեւային չորացման համար—1:1,5 և արհեստական չորացման համար—1:14: Այդ նշանակում է, վոր ասեղի վրա (50 սմ) շարած ծխախոտը թելի վրա փոխադրվելով պետք է մեկ ու կես անգամ ավելի տեղ բռնի, այսինքն 50 սանտիմետրի փոխարեն 75 սանտիմետր—յեթե ծխախոտն արեւով է չորացվելու և 70 սմ.—յեթե ցածրացվող շենքում է չորացվելու: Այս փոխ-հարաբերութիւնը բոլոր դեպքերում պարտադիր չի: Յուրաքանչյուր առանձին դեպքում, հաշվի առնելով ծխախոտի բնույթը, կարելի յի գործնականորեն վորոշել ու սահմանել այդ փոխ-հարաբերութիւնը: Թելի վրա ծխախոտի խտութիւնից կախված է նրա տերեւների քանակը: Այդ ուսումնական կախված է նաև տերեւների չափից և նրանց պոչերի հաստութիւնից: Որինակ, Կուբանի «Տրապիդոն №93» անաչի տերեւներից հինգ մետրանոց թելի վրա տեղավորվում է 750—800 տերեւ: Նույն տեսակ խտությամբ թելած և նույն տերեւահատի, բայց «Ծովափնյա Տրապիդոն» տեսակի տերեւներից տեղավորվում է 450—500 տերեւ: Իսկ մանրատերեւ ծխախոտերից (Տի-կուլակ, Արկադիա տի-կուլակ և Սամսոն)—մինչև 1000—1200 տերեւ:

Աշխատանքի վորակի ցուցիչներ թելման ժամանակ.—1) ասեղն անցկացնել յերակի միջով, պոչից 2 սմ տարածության վրա:

2) Տերեւները շարել ըստ կատարված տերեւահատի և մոտավորապես միեւնոյն մեծության:

3) Շարել միատեսակ ծխախոտ, չափից դուրս հասունացած և լավ չհասունացած տերեւները շարել առանձին թելերով:

4) Խստորեն պահպանել բրիզադիրի կամ գլուխատեսի ցուլց տված խտութիւնը:

Այս բոլորն անհրաժեշտ է պահանջել ամեն մի վորակյալ թելոդից:

Ե. ԹԵԼԱԾ ԾԽԱԽՈՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՂՆԵՑՄԱՆ ՈՒ ԶՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Յերբ ծխախոտն արդեն շարված է, պետք է կատարել հետևյալ աշխատանքները.—յեթե թելերի վրա ծխախոտը (տերեւները) մի փոքր թառամել է և սկսել է դեղնել, իսկույն էլ յեթ թելերը կախվում են վաղոնին, շրջանակներին, փայտիկներին և այլ հարմարեցումներին, վորպեսզի չորանա: Այդ չորացումը կատարվում է արևով, բերքահավաքման սկզբին, իսկ յեթե դա պատահում է բերքահավաքման վերջում, վաղոնները (ծխախոտով բռնված) տարվում են արհեստական չորանոց: Յեթե ծխախոտը մինչև շարելը չի դեղնեցրած, թելերը դարսում են սրահի հատակի վրա, դեղնեցնելու համար (հատակի վրա պետք է նախապես ձղոտփովի): Ծխախոտն այսպես մնում է 1—2 օր—նայած նրա դրության:

Ծխախոտի դեղնեցման ու չորացման մասին մենք կանդ կառնենք զրքիս հետևյալ գլուխներում:

Անհրաժեշտ է դեռ մինչև դեղնեցումն ու թելումը տեսակավորել ծխախոտի տերեւները: Այդ տեսակավորման և միատեսակ թելերը ջոկելու շնորհիվ ավելի հեշտ և ուղիղ կարելի յի կատարել հետագա դեղնեցման ու չորացման աշխատանքները:

Մեր կոլտնտեսութիւններն առաջ քիչ էին ուշադրութիւն դարձնում այս մոմենտների վրա: Թելում էլին գանազան մեծության, զանազան վորակի և հասունության տերեւներն իրար հետեից, Հետևանքն այն էր լինում, վոր դեղնեցնելու ժամանակ տերեւների մի մասը փչանում էր, մյուս մասը կորցնում վորակը և այլն: Արհեստական չորանոցներում գործն ավելի բարդանում էր: Զորացնողը չէր կարողանում վորոշել այնտեղ գտնված ծխախոտին անհրա-

ժեշտ ջերմությունն ու խոնավությունը: Ծխախոտը 30 և ավելի տոկոսով կորցնում եր իր վորակը, յերբեմն եւ ուղղակի խոտան եր դառնում:

Այս տարի պետք ե խուսափել անցյալի սխալներից, ծխախոտը կանոնավոր պատրաստել թելելու համար, խնամքով թելել, ջոկել միատեսակ թելերը, խնամքով դեղնեցնել և չորացնել: Այսպիսով միայն կարելի յե ստանալ լավ վորակի և բավականաչափ քանակությամբ բերք:

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

ԾԽԱԽՈՏԻ ԴԵՂՆԵՑՈՒՄԸ

Դաշտերից քաղված և հետագա մշակման համար պատրաստված ծխախոտը դեղնեցվում ե:

Ծխախոտի դեղնումը նրա նախնական մշակման առաջին շրջանն ե: Նախնական մշակում ասելով պիտի հասկանալ ծխախոտի, իբրև հումութի մշակումը, այսինքն այն բոլոր աշխատանքները, վորոնք թափվում են նրա վրա մինչև ծխախոտագործարաններին հանձնելը:

Բարձր վորակի ծխախոտ ստանալու համար ամենավճռական նշանակություն ունի հենց նրա դեղնեցումը:

Ծխախոտը քաղելու և դաշտից տեղափոխելու մի ամբողջ շարք պակասությունները (տերևների, տարբեր հասունություն, առողջ և վնասված տերևների խառնուրդ և այլն), վորոնք վատ են անդրադառնում ծխախոտի վորակի վրա,—կարող են ուղղվել լավ դեղնեցման միջոցով: Ընդհակառակը, յեթե դեղնեցումը սխալ ե կատարվում, խիստ տուժում ե ծխախոտի վորակը:

Այստեղից պարզ ե, վոր ամեն մի ծխախոտագործ-կոտնտեսական, ամեն մի աշխատող, վորն զբաղվում ե այս աշխատանքով—պետք ե հինգ մատի պես գիտենա ծխախոտը դեղնեցնելու կանոնները:

Հարկավոր ե դիտենալ դեղնեցման եյությունը, նրա ժամանակ ծխախոտի հետ կատարվող յերևույթները: Հակառակ դեպքում այն մարդը, վորին հանձնարարված ե դեղնեցումը, չի կարողանա գործից զլուխ հանել և ապահովել ծխախոտի բարձր վորակը:

Ծխախոտի դեղնեցման վրա աշխատող բրիգադիրն ու ծխախոտագործ-կոտնտեսականը պիտի աշխատեն հիմնովին տիրապետել դեղնեցման եյությանն ու տեխնիկային:

Ա. ԻՆՉՈՒՄՆ Ե ԴԵՂՆԵՑՄԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Ծխախոտի դեղնեցման ժամանակ հարկավոր ե ստեղծել այնպիսի պայմաններ, վոր տերևների պարունակած խոնավությունն արագությամբ չպակասի:

Տերևը քաղելուց հետո նրա մեջ դարձյալ տեղի յեն ունենում կենսական յերևույթներ—ավելի բարդ որդանական նյութերը (սպիտակուցներ, ջրածխածնային նյութեր, նիկոտին) վեր են ածվում ավելի պարզ նյութերի (ջուր, ածխաթթու, ամիակ): Դա կատարվում ե խոնավության միջոցով:

Նյութերի վերածումը տեղի յե ունենում շնորհիվ այն հանգամանքի, վոր ծխախոտի տերևը քաղվելուց հետո ևս շարունակում ե կենդանի մնալ: Յեվ հենց նյութերի վերածման միջոցով ե կատարվում ծխախոտի դեղնումը, վորով բարձրանում ե նրա վորակը:

Նյութերի կանոնավոր վերածման գլխավոր պայմանն այն ե, վոր ծխախոտի տերևները դանդաղ կորցնեն իրենց պարունակած խոնավությունը:

Բարդ նյութերի այդ վերածմանը նպաստում ե բույսի շնչառությունը:

Յիրք ծխախոտի տերևը շնչում ե, նրանից ածխաթթու յե դուրս գալիս:

Փորձը ցույց ե տվել, վոր տերևի շնչառությունն ուժեղանում և թուլանում ե՝ նայած նրա պարունակած ջրի քանակության:

Յեթի ջրի քանակը քիչ է, բույսի շնչառութիւնը վոչ թե ուժեղանում, այլ թուլանում է: Քանի պակասի խոնավութիւնը, շնչառութիւնն էլ կթուլանա և բոլորովին կզաղարի: Սրանով կդադարի նաև բարդ նյութերի վերածումը պարզ նյութերի և ծխախոտը պահանջված դեղնութիւն կստանա:

Փորձերը ցույց են տվել, վոր ծխախոտի տերէներն ուժեղ շնչում են հենց դեղնեցման ժամանակ, այսինքն նրանց մեջ տեղի յեն ունենում նյութերի բազադրութիւն ամենակաւն փոփոխութիւնները:

Մեր ասածներից յերևում է, վոր ծխախոտը դեղնեցնելու ժամանակ վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, վոր տերէներն արագութեամբ կորցնեն խոնավութիւնը:

Յեթի խոնավութիւնը (ֆուրը) արագ և գոլորշիանում, տերէի կյանքն էլ արագ և դադարում, նյութերի վերածումը կանգ է առնում, վորով կարող է զգալի տուժել ծխախոտի վորակը:

Ինչից է յերևում վորակի վատացումը: Նրանից, վոր տերէն չի դեղնում, այլ մնում է կանաչ, նրանից, վոր նրա մեջ մնում են ծխախոտի վորակի վրա բացասաբար ազդող սպիտակուցային և այլ բաղադրութիւններ:

Խոնավութիւն չափից դուրս դանդաղ գոլորշիացումն և ցանկալի չէ, վորովհետև դրանից վերջ ի վերջո բույսը կարող է փտել:

Ահա թե ինչու ծխախոտի դեղնեցման ժամանակ խոնավութիւն գոլորշիացումը և ողի ազդեցութիւնը կանոնավորելու հարցը չափազանց կարևոր նշանակութիւն ունի:

Խոնավութիւն աստիճանական կորուստը և ողի դրական ազդեցութիւնը կախված են դանդաղ պայմաններից—տերէների բնութից, դեղնեցման տեղից, ժամանակից և ընդհանուր պայմաններից:

Ծխախոտը դեղնեցնելու ժամանակ չափազանց կարևոր է ուշադրութիւն դարձնել ջերմութիւն վրա, վորի մեջ դանդում են տերէները:

Ջերմութիւնը մեծ ազդեցութիւն է ունենում տերէների շնչառութիւն և նյութերի վերածման, հետևապես նաև ծխախոտի դեղնեցման վրա:

Բարձր ջերմութիւնն արագացնում է նյութերի վերածումը: Վորոշ աստիճանից բարձր ջերմութիւնը վնասակար է ծխախոտի դեղնեցման համար:

Ծխախոտի դեղնեցումը նրա չորացման սկիզբն է: Դեղնելու հետ միասին տերէները նաև չորանում են:

Բ. ԾԽԱԽՈՏԻ ԴԵՂՆԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ

Դեղնեցվող ծխախոտի տերէները պետք է խոնավութիւնը կորցնեն այն աստիճան, վոր բոլորովին չչորանան մինչև դեղին գույն ստանալը:

Ջրի (խոնավութիւն) գոլորշիացման աստիճանը, կամ այսպես կոչված՝ դեղնեցման ենթադրան կախված են բազմաթիւ պատճառներից:

Թուլակաղմ տերէներն ավելի շուտ են դեղնում, քան պնդակաղմ տերէները:

Ներքին տերէներն ավելի շուտ են փոխում իրենց գույնը, քան վերին տերէները: Յաճախ ջերմութիւն տակ դեղնեցման ենթադրան դանդաղում է, իսկ տերէներն ավելի արագ են չորանում: Վերջին դեպքում ծխախոտը կարող է չորանալ առանց դեղնելու:

Բարձր ջերմութիւն տակ (մինչև վորոշ աստիճան) դեղնեցման ենթադրան, ընդհակառակն արագանում է: Ուրեմն այստեղից պետք է յեղրակացնել, վոր ծխախոտի դեղնեցման ընթացքի վրա ցածր ջերմութիւնը նպաստավոր ազդեցութիւն չի ունենում:

Լրիւ չհասունացած ծխախոտն ավելի դժվար է յերկար է դեղնեցվում, քան նորմալ հասունացած ծխախոտը:

Թրիպսից վնասված ծխախոտն ևս ավելի յերկար ու դժվար է դեղնեցվում, քան չվնասվածը:

Երբ քանի խոտը ամբողջ բույսով քաղված ծխախոտի դեղնեցման մասին:

Յիրը ծխախոտը դեղնեցվում է ցողունների հետ մի ասին բացի նյութերի վերածուսից, տեղի յե ունենում նաև սրանց տեղափոխությունը դեպի տերևի յերակներն ու ցողունը:

Հետևանքն այն է լինում, վոր տերևները համարյա յերկու անգամ ավելի չոր բաղադրություններ են կորցնում, հետագա չորացման ժամանակ պակաս փափուկ ու ձկուն չեն լինում, քան առանձին չորացրած տերևները:

Հենց միմիայն այս յերևույթի վրա հիմնվելով կարելի յե ասել, վոր ցողուններից բաժանված տերևների դեղնեցումն ավելի ձեռնառու յե, քան ցողունների հետ միասին չորացրած տերևներինը:

Գոյություն ունեն ծխախոտի դեղնեցման բաղմատեսակ ձևեր: Թե սրանցից վորը պետք է կիրառել, այդ կվորոշի այն անձնավորությունը, վորին հանձնարարված է ծխախոտի դեղնեցումը, յեթի, իհարկե, նա գիտե դեղնեցման եյությունը և նրա անցկացման հիմնական մոմենտները:

Դեղնեցման այս կամ այն ձևն ընտրելիս պետք է հաշվի առնել յեղանակը, ծխախոտի բնույթը և այն պայմանները, վորոնց մեջ պիտի կատարվի դեղնեցումը:

Մենք այստեղ կնկարագրենք դեղնեցման միայն այն ձևերը, վորոնք ամենից շատ են տարածված Հյուսիսային Կովկասում:

1. ԶԹԵԼՎԱԾ ԾԽԱԽՈՏԻ ԴԵՂՆԵՑՈՒՄԸ

Դաշտից բերված, նոր քաղած ծխախոտը, վորն իհարկե մի փոքր թառամած կլինի, դարսվում և շերտով՝ դեղնեցում համար:

Այդ շերտերի բարձրությունը 15—20 սմ ավելի չպիտի լինի:

Այստեղ հարկավոր է մատնանշել, վոր ծխախոտի տերևները դարսվում են վոչ թե հորիզոնական, այլ թեք դիրքով: Ավելի լավ է այնպես դարսել, վոր տերևների ծայրերը վերելից լինեն:

Դարսել հարկավոր է վորևե փռվածքի (ծղոտի, խսիբի) վրա: Փռվածքը ծծում է տերևների խոնավությունը:

Ծխախոտի դեղնեցման տեղը պետք է պաշտպանված լինի քամիներից ու ցրտից: Ամենալավ տեղերը ծխախոտի մարագներն ու նրանց միջանցքներն են, ծածկված տեղերը և այլն:

Դարսված ծխախոտի լրա պիտի փռել վորևե թիթե փռվածք, որինակ, ծղոտ, նոսր, բարակ խսիբ և այլն: Փռվածքի տակ ծխախոտը մի քիչ տաքանում է, իսկ այսպիսի պայմաններում նրա կանաչ գույնն ավելի արագ է փոխվում դեղին գույնի:

Գույնը փոխվում է շնորհիվ տերևի մեջ յեղած առանձին դարդ նյութի, այսպես կոչված՝ քլորոֆիլի քայքայման:

Պարզ է, վոր լավ, տաք յեղանակին ծխախոտը ծածկելն ավելորդ է, վորովհետև դեղնեցման ժամանակ ծխախոտն ավելորդ տաքությունից կարող է փչանալ:

Այս նույն նկատառումով ծխախոտը չի կարելի դարսել խիստ ջերմ արևի տակ:

Հակառակ դեպքում նա արագ թառամում է, քրտնում, կարող է սևանալ, հետևապես, փչանալ:

Ինչպիսի յերևում է մեր ասածներից, թաց ծխախոտը դեղնեցնելու համար, վոչ մի դեպքում չի կարելի շերտ-շերտ դարսել:

Ծխախոտի դեղնման ամբողջ ժամանակ պետք է հետևել շերտերի մեջ յեղած ջերմության և տերևների գունափոխման:

Չպետք է թույլ տալ, վոր դարսված ծխախոտը սաստիկ տաքանա, վորովհետև խիստ տաքությունից նա կփտի և կփչանա:

Սաստիկ տաքանալու դեպքում ծխախոտը պետք է շուտ առա, վորով նա հովանում է, այսինքն՝ շերտերի մեջ իջնում է տաքությունը:

Յեթե յեղանակը տաք է, դեղնեցումը տևում է 2—3 օր:

Վերևում մենք ասացինք, վոր դեղնեցման ժամանակա-միջոցը, բնույթն ու ձևը կախված են շատ պայմաններից:

Այստեղ մի անգամ ել հիշեցնենք ընթերցողին, վոր ծխախոտի խոնավ և թուլ տերևներն ավելի արագ են դեղնում քան պինդ և վոչ խոնավ տերևները, վորոնք հավաքված են չոր յեղանակին:

Յեթե յեղանակը տաք է, դեղնեցումն ավելի արագ է կատարվում՝ քան ցուրտ յեղանակին:

Այստեղից պարզ է, վոր յեթե դեղնեցումը կատարվի ցուրտ ժամանակ (վոր հաճախ լինում է վերին տերևները դեղնեցնելիս), ծխախոտը պետք է դեղնեցնել տաք և չոր շենքում:

Ծխախոտի դեղնեցման յուրաքանչյուր առանձին դեպքում անպայման պիտի պահպանվեն այն ագրո-տեխնիկական կանոնները, վորոնք այս տարի առաջադրված են ծխախոտագործական կոլտնտեսություններին (տես 1-ին և 2-րդ հավելվածները) ինչպես և աշխատանքի վորակային ցուցիչները (տես 3-րդ հավելվածը):

Յերբ տերևները ցանկալի դույն (թեթևակի դեղնություն) ստանան, պետք է իսկույն և յեթ շարվեն թիկերի վրա, հակառակ դեպքում նրանք չափից դուրս կդեղնեն, իսկ հետագա չորացման ժամանակ կփոխվեն կիրամանի գույնի: Նրանք չեն ունենա պայծառ-դեղին, մաքուր գույն, վոր առանձնապես պահանջվում է ծխախոտն ընդունելու և նրա դինը վորոշելու ժամանակ:

Յեթե հնարավոր չէ ծխախոտն արագ թեկել, պետք է անմիջապես դարձել փոքրիկ կույտերով և այդպիսով հովացնել նրան, այսինքն՝ դանդաղեցնել դեղնումը:

Այս բանը չպիտի կատարել շատ տաք յեղանակին, — ծխախոտը կարող է փչանալ:

2. ԹԵԼԱԾ ՅԵՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԾԽԱԽՈՏԻ ԴԵՂՆԵՑՈՒՄԸ

Այս ձևը նախորդից նրանով է տարբերվում, վոր ծխախոտը նախ թեկվում է, հետո դեղնեցվում:

Սրա առավելությունն այն է, վոր թեկելու ժամանակ ծխախոտի տերևները վորոշ չափով տեսակավորվում են

(փչացած տերևները բաժանվում են առողջներից, շատ հասունացածները քիչ հասունացածներից և այլն): Տեսակավորման շնորհիվ դեղնեցվող ծխախոտը միանման է լինում, հետևապես ավելի լավ է դեղնում:

Յուրաքանչյուր յերկու թիկ դրվում են առանձին, թեք դրությամբ, տերևների ծայրերը դեպի վերև: Ցանկալի է, վոր տերևների պոչերը ներքևից լինին:

Այս ձևի դեղնեցման պայմանները և նրա վրա հսկողությունը նույնն են, ինչ վոր նախորդ ձևի դեղնեցման ժամանակ:

Այս ձևի թերությունները. — ծխախոտի տերևներն ավելի շատ են ձմրվում, քան նախորդ ձևի դեպքում, — ձմրված տեղերն, ինչպես արդեն ասված է, սևանում են և մեծ մասամբ փտում:

Դեղնումը հավասարաչափ չէ: Դեղնելուց հետո հնարավոր չէ (աշխատանքի բարդության ու թանգության պատճառով) բաժանել շատ դեղնած ու կանաչ տերևները ցանկալի, նորմալ դույն ստացած տերևներից:

3. ԴԵՂՆԵՑՈՒՄ ԾԱՐԺԱԿԱՆ ԾՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՎՐԱ

Այս ձևն ամենատարածվածն է Հյուսիսային Կովկասում: Թեկած ծխախոտը կախվում է շրջանակների վրա, նորմալ խտությամբ:

Իրար մոտիկ տեղավորված շրջանակները մարագում պահվում են 3—4 օր:

Նախ քան այդ, նրանք միջանի ժամ պիտի գտնվեն զըր-տում, արևի տակ: Այստեղ նրանք յեթե հարկավոր է, պիտի ծածկվեն թեթև ծածկոցով (բարակ-նոսր խափներով, ռա-զոժով և այլն), վորոնք ծխախոտը պաշտպանում են արևի կիզիչ ճառագայթներից: Հաստ ծածկոցները (խափներ, բրե-դենտ և այլն) անպետք են, վորովհետև չեն անցկացնում տերևներից գոլորշիացվող խոնավությունը: Սա խանդարում է կանոնավոր դեղնեցման, վորովհետև ծխախոտը «քրտնում է», զրանից հետագայում չորանում և փտում:

Մտտալորապես այս ձևով կարելի չի ծխախոտը դեղնեցնել նաև բողոճներում:

Վերջին ձևն ավելի ոգտավետ է, յեթե կիրառվում է տաք յեղանակին: Իհարկե արդյունքները դրական են լինում, յեթե աշխատողները հմուտ լինեն իրենց գործին և հոգատար վերաբերմունք ցույց տան դեպի ծխախոտի դեղնեցումը:

Այս ձևով կատարվող դեղնեցումը խիստ մեծ կախումն ունի յեղանակից:

Աշխատային ցուրտ որերին այս ձևով ծխախոտը դեղնեցնելը շատ դժվար, համարյա անկարելի չի:

4. ԾԽԱՆՈՏԻ ԴԵՂՆԵՑՈՒՄԸ ՎԱԳՈՆՆԵՐԻ ՎՐԱ

Այս ձևը նույնպես շատ է տարածված Հյուսիսային Կովկասում, և նախորդից վոչնչով չի տարբերվում: Այն բոլորը, ինչ վոր մենք ասացինք նախորդ ձևի մասին, ամբողջովին վերաբերում է նաև այս ձևին:

5. ԴԵՂՆԵՑՈՒՄ ՏԱՔԱՅՎՈՂ ՇԵՆՔՈՒՄ

Վերևում մենք մատնանշեցինք, վոր ծխախոտի դեղնեցումը նրա չորացման սկիզբն է: Այն ռայոններում, վորտեղ ծխախոտը չորացվում է տաքացվող շենքերում, դեղնեցումն էլ հենց այսպեղ է կատարվում: Դրա համար հարկավոր է 30—37° ջերմություն ըստ Ցելսիուսի և 1—2 օր:

Դեղնեցման այս ձևն ամենալավն է, վորովհետև հարկավոր դեպքում կարելի չի վերցնել այս կամ այն տաքությունն ու խոնավությունը: Դեղնեցումը վոչ մի կախում չունի յեղանակից: Այս ձևն առանձնապես հարմար է աշխանը, յերբ լինում է ցուրտ, խոնավ և յերբ դեղնեցվում են ծխախոտի ամենաարժեքավոր, — վերին տերևները: Սակայն այս ձևն աշխատողներից պահանջում է բավականաչափ հմտություն ու փորձառություն:

6. ՎՈՐՉԱՓ ՊԵՏՔ Ե ԴԵՂՆԵՑՆԵԼ ԾԽԱՆՈՏԸ ՅԵՎ ՎՈՐՉԵՎՆ Ե ԱՄԵՆԻՑ ԼԱՎԸ

Հնարավոր է հշտությամբ մատնանշել ծխախոտի դեղնեցման աստիճանը, վորովհետև յուրաքանչյուր առանձին դեպքում դեղնեցումն անցնում է յուրահատուկ կերպով և կալված է բազմաթիվ պայմաններից:

Հիշենք միայն այն հիմնական մոմենտները, վորոնցով վորոշվում է դեղնեցման սկիզբն ու վերջը:

Յեթե յեղանակը խոնավ է և տաք, յեթե ծխախոտի տերևները խոնավ են և թույլ, կամ լավ հասունացած և յեթե ծխախոտը խոշորատերև է, դեղնեցումն ավելի շուտ պիտի դադարեցնել:

Ընդհակառակը, ծխախոտն ավելի յերկար է դեղնեցվում, յեթե տերևները լավ չեն հասունացած, ամուր են և քիչ խոնավություն են պարունակում և յեթե դեղնեցումը կատարվում է չոր, քամի յեղանակին:

Առաջին դեպքում դեղնեցումը համարվում է թույլ, վորովհետև ծխախոտը թեթևակի դեղնություն է ստանում:

Յերկրորդ դեպքում դեղնեցումը կոչվում է ուժեղ, վորովհետև ծխախոտը զգալի չափով դեղնում է:

Դժվար է ասել թե դեղնեցման ձևերից վորն է ամենալավը — բացի տաքացվող շենքերում կատարվող դեղնեցումից:

Մա հաստատվում է նրանով, ինչ վոր մենք ասացինք ծխախոտի դեղնության աստիճանի մասին:

Յերբ աշխատողները հասկանում են դեղնեցման եյությունը, յերբ նրանք լիովին տիրապետում են նրա տեխնիկային, կարող են կիրառել մեր նկարագրած ձևերից ամեն մեկը և ամեն մի դեպքում լավ արդյունքներ ստանալ: Յուրաքանչյուր ձև կալված է ծխախոտի բնույթից, յեղանակներից և շատ ուրիշ պայմաններից:

Դեղնեցման արդյունքները մենք լավ ենք համարում, յերբ հետագա չորացումից հետո ստացվում է բարձր վորակի ծխախոտի հումութ:

ԾԽԱԽՈՏԻ ԶՈՐԱՅՈՒՄԸ

Ծխախոտի չորացումն ամենապատասխանատու աշխատանքն է նրա նախնական մշակման մեջ:

Չորացման ընթացքում թույլ տրված սխալներն աքղեն անկարելի յե ուղղել ծխախոտի հետագա մշակման ընթացքում:

Յեթե չորացումն ուղիղ է կատարվում, յեթե պահպանվում են աշխատանքի վորակի բոլոր ցուցիչները, ապա ծխախոտի վորակն էլ լավ է լինում (այդ վորակային ցուցիչները մասին տես 3-րդ հավելվածը):

Մասնակի կերպով դեղնացած ծխախոտը յենթարկվում է աշխատանքի հետևյալ մասին—չորացման:

Ծխախոտի չորացման նպատակն է կանաչ կամ քիչ դեղին գույնի վոխարեն, ամբողջովին դեղին գույն տալ ծխախոտին:

Դրա համար հարկավոր է, վորպեսզի դեղնեցումից, այսինքն՝ տերևների հավասարաչափ դեղին յերանգ ստանալուց հետո, խոնավությունն արագությամբ՝ դուրըջիանա:

Իսկ յեթե չորացման ընթացքում տերևների մեջ յեղած խոնավությունը դանդաղ է դուրըջիանում, այդ դեպքում դեղնավուն գույնը կփոխվի կարմրավուն կամ կինամոնի գույնի, մի բան, վոր բոլորովին ցանկալի չէ:

Ծխախոտի չորացման համար դոյուլթյուն ունեն դանազան ձևեր, կատարվում են դանազան աշխատանքներ և կան այլ և այլ տեսակի չորացումներ:

Մեր յերկրամասի ծխախոտագործական ուսյոններում մշակվում է բացառապես տաճկական դեղին ծխախոտ, վորի համար կիրառվում են չորացման հետևյալ տեսակները.—

1) Արևի տակ, 2) տաքացվող շենքերում, 3) դանազան ձևի չորացում:

Դրքիս այս գլխում մենք կաշխատենք մանրամասն նկարագրել չորացման այդ ձևերը, վորոնք կիրառվում են Հյուսիսային Կովկասում:

Ա. ԾԽԱԽՈՏԻ ԶՈՐԱՅՈՒՄԸ ԱՐԵՎԻ ՏԱԿ

Ծխախոտը արևի տակ չորացնելու համար ամենաանհրաժեշտ, տեխնիկական հատուկ կառուցվածքը, ծխախոտի մարագն է:

Յերկրորդ անհրաժեշտ կառուցվածքը—դա շարժական շրջանակները—վազոններն են, վորոնց համար պիտի լինեն հատուկ ճանապարհներ (ոելսեր),—կամ սովորական շարժական շրջանակները:

Ներկայումս մեր յերկրամասի ծխախոտագործական կուտեստություններում «Սեվկավսելսորոյի» նախագծով կառուցվում են ծխախոտամարագներ, վորոնք ունեն հինգ բաժանմունք կամ «աչք»։ Ամեն մի աչքում տեղավորվում է 30 վազոն, ուրեմն ամբողջ մարագում 150 վազոն։ Յուրաքանչյուր վազոնի մեջ տեղավորվում է 25 թել ծխախոտ, հետևապես ամբողջ մարագում տեղավորվում է 3750 թել, այսինքն մոտավորապես 3 հեկտարի բերք:

Ավելի նպատակահարմար կլիներ մարագները կառուցել 6 բաժանմունքից, ամեն մեկում 25 վազոն։ Ինչո՞ւ դա ավելի նպատակահարմար է—այդ մասին կխոսենք ստորև, ծխախոտը տաքացվող շենքերում չորացնելու բաժնում:

Մի կողմ թողնելով ծխախոտամարագի կառուցվածքի մանրամասն նկարագրությունը, մենք կմտնանք միայն, թե ի՞նչ նպատակներով են կառուցվում մարագները, ի՞նչ աշխատանք է կատարվում այնտեղ:

Սովորաբար մարագներում տեղի յեն ունենում ծխախոտի թելումը, դեղնեցումը, ծխախոտաթելերի կախ տալը վազոնների կամ շրջանակների վրա։ Այնտեղ արդեն չորացված ծխախոտը հավաքվում է վազոնների վրայից, փունջ է կապվում և առաստաղի տակ կախվում է ու պահպանվում հետագա մշակման համար:

Դիշերը և անձրևային յեղանակին ծխախոտով բեռնված շրջանակները տարվում և մարագ: Այստեղ սովորաբար պահվում են զանազան ինվենտարն ու նյութեղենը:

Վագոնների համար ընդունված և հետևյալ չափը.—յերկարությունը 5,6 մետր, լայնությունը—2,8 մետր:

Իրիսերը, վորոնց վրայով շարժվում են վագոնները, պետք է գետնից 0,7 մետր բարձր լինեն:

Շրջանակները կամ վագոնները մարագի մի բաժանմունքից մյուսը տեղափոխելու համար անպայման պետք կառուցվեն ճանապարհներ, իսկ սրանց վրա պիտի յերթնեկին կիսավագոնները («տրամվայ») վորոնց վրա պիտի տեղափոխվեն շրջանակները:

Մարագի դիրքն ամենից լավ է այն դեպքում, յերբ նրա ճակատը նայում է դեպի արևմուտք, յերկարությունը ձրգվում է հյուսիսից հարավ: Այսպիսով ծխախոտով բեռնված վագոնները, վորոնք ճանապարհների վրա յեն գտնվում, բոլոր կողմերից հավասարաչափ լույսի տակ են ընկնում:

150 վագոն պարունակող մարագը միայն արևային չորացման դեպքում կարող է սպասարկել 12 հեկտարի, յերբ մեկ հեկտարից ստացվում է 1200 թել ծխախոտ:

1. Ծխախոտի չորացումը բարձրագույն օրջանակների վրա

Սովորաբար այս շրջանակները շինվում են թեթև, եփան փայտեղենից (հաստ տախտակեղենից):

Յուրաքանչյուր շրջանակի յերկարությունը պետք է համապատասխանի ծխախոտաթելի յերկարության, իսկ բարձրությունը սովորաբար 2 մետր է լինում:

Շարժական շրջանակը մենք մանրամասն չենք նկարագրի, քանի վոր ամեն մի կոլտնտեսական—ծխախոտադործ շատ լավ ծանոթ է նրա կառուցվածքին:

Կարևոր է հիշել հետևյալը.—շրջանակի կողքի քառակուսի տախտակները 25 սանտիմետր ցած պետք է լինեն հորիզոնական ձողից և այդպեսով շրջանակը պիտի ունենա վոտներ, վորոնք և կղրվեն գետնի վրա:

Շրջանակի կողքի քառակուսի տախտակներին ամրացված տախտակները պետք է լինեն ամուր, հաստատուն, վորովհետև նրանք շրջանակի պատերը պահում են թեք դիրքով, իսկ այդպիսի դիրքը նրա համար է, վոր ծխախոտն ամբողջովին լինի արևի լույսի տակ:

Յեթե յեղանակը լավ է, ծխախոտն էլ լավ է չորանում շարժական շրջանակների վրա:

Յեթե յեղանակը լավ չէ (սաստիկ քամի, անձրև, ցուրտ և այլն), չորացման այս ձևը չի կիրառվում:

Յուրաքանչյուր շրջանակի վրա միջին թվով տեղավորվում է 12 ծխախոտաթել: Յեթե հաշվենք, վոր սեզոնի ընթացքում շրջանակը կարող է ոգտագործվել ամենաքիչը 4 անգամ, ապա դժվար չէ իմանալ, վոր միջին բերքի դեպքում, ամեն մի հեկտար ծխախոտի համար հարկավոր է 20—35 այդպիսի շրջանակ:

Շրջանակները չպետք է դիշերը թողնել բացողյա տեղերում. ավելի լավ է տանել մարագ. պետք է ասել, վոր սա ծխախոտի արևով չորացման եյական թերությունն է:

Վորոնք են ծխախոտը շարժական շրջանակների վրա չորացնելու հիմնական կանոնները:

1. Շրջանակները մարագից պետք է չորացման բակը դուրս բերվեն այն ժամանակ, յերբ ցողը չքանա, ողն ու հողը տաքանան:

2. Չորացման բակը պետք է լավ մաքրված ու պաշտպանված լինի քամիների, մանավանդ հյուսիսային ցուրտ և արևելյան քամիների ազդեցությունից:

3. Մարագ, վորտեղ տեղավորվում են շրջանակները, չպիտի լինեն միջանցիկ քամիներ, վորովհետև նրանցից ծխախոտն ավելի արագ է չորանում, քան պետք է:

4) Շրջանակները, վորոնց վրա գտնվում է լավ թառամած, բայց դեռ ևս թաց ծխախոտը, դիշերը չպետք է իրար շատ մոտիկ դնել: Այդ շրջանակները չոր յեղանակին ավելորդ ժամանակ չպետք է մնան մարագում, իսկ յերեկոյան,

մանավանդ յերբ ողբ խոնավ ե, չպետք ե ավելորդ ժամանակ պահել բակում:

Ընդհակառակը վարվել այն դեպքում, յեթե ծխախոտը քաղականաչափ կամ բոլորովին չի գեղնեցված:

5. Յեթե ինչ-ինչ պատճառով ծխախոտի տերևների դեռևս կանաչ ծայրերն սկսում են չորանալ, շրջանակները պետք ե յերեկոյան ավելի յերկար պահել բակում, կամ նույնիսկ այնտեղ թողնել ամբողջ գիշերը, վորպեսզի ծխախոտը խոնավանա:

6. Որվա շոգ ժամերին ծխախոտով նոց բեռնված շրջանակները պետք ե տանել մարագ, կամ ավելի լավ ե նրանց վրա թեթե ծածկոց փռել:

7. Միայն ամառավա տաք գիշերներին, յերբ ցոլ չի լինում, կարելի յե բակում թողնել ծխախոտով բեռնված շրջանակները:

8. Շատ թե քիչ ուժեղ քամու ժամանակ ավելի լավ ե շրջանակները տանել մարագ, վորպեսզի ծխախոտը չփչանա, չչորանա կանաչ դրուծյամբ:

9. Յեթե տերևները չորանում են, հարկավոր գուշն ատանում, իսկ նրանց յերակները լրիվ չեն չորանում, ծխախոտը պետք ե հանել շրջանակներից ե չորացնել փնջերով: Հակառակ դեպքում արևի ազդեցության տակ ծխախոտի գուշնը կվատանա:

Բակում շրջանակները պետք ե տեղավորել այնպես, վոր թելերի մեկ ծայրն ուղղված լինի դեպի հյուսիս, իսկ մյուսը—դեպի հարավ, վորովհետե ծխախոտը միայն այս կերպ հավասարաչափ կընդունե արևի լույսն ու տաքությունը:

Շրջանակների վրա ծխախոտը սովորաբար կախվում ե արևելյան կողմից:

Անհրաժեշտ ե հիշել, վոր յերբ տերևները, բացի նրանց պոչերից ու յերակներից, արդեն չորացել են, շրջանակները առավոտվանից պիտի դրվեն այնպես, վոր տերևի պոչերն ու յերակներն ուղղված լինեն դեպի արևելք՝ չորանալու համար:

Շարժական շրջանակների վրա ծխախոտը չորացվում ե 7—30 օրվա ընթացքում:

Չորացման տևողության վրա ազդում են բազմաթիվ պատճառներ—յեղանակը, արևի շերմության աստիճանը, ծխախոտի դրուծյունը, նրա խտությունը թելերի վրա, կախ տված ծխախոտաթելերի խտությունը ե այլն:

Վերև ասածներից յերևում ե, վոր շարժական շրջանակների վրա ծխախոտի չորացումը պահանջում ե մեծ հմտություն, վոր ծխախոտագործական-ապրանքային ֆերմաներում ե կոլտնտեսություններում ծխախոտի չորացումը պետք ե հանձնարարաբել մասնագետ ծխախոտագործներին, ազրո-տեխնիկներին ե փորձված կոլտնտեսական-ծխախոտագործներին:

2. Ծխախոտի չորացումը վագոնների վրա

Չորացման այս ձևը նախորդից վոչնչով չի տարբերվում նախորդ ձևի մասին մեր բոլոր ասածները վերաբերվում են ե այս ձևին:

Տարբերությունը նրանումն ե, վոր առաջին դեպքում շրջանակները դրվում են գետնի վրա, իսկ վագոնները—ռելսերի վրա:

Յուրաքանչյուր վագոնի վրա տեղավորվում ե 25 ծխախոտաթել, հետևապես 1 հեկտար ծխախոտի համար հարկավոր կլինի 10—12 վագոն, այսինքն՝ շարժական շրջանակներից յերկու անգամ պակաս:

3. Չորացումը փայտիկներով

Ծխախոտի չորացման այս ձևը կիրառվում ե միայն Ղերմում: Այնտեղ ամեն մի ծխախոտաթել կախվում ե փայտիկից, վորի յերկարությունը հավասար ե ծխախոտի թելի յերկարության: Փայտիկները տեղավորվում են ծխախոտի մարագներում, վորտեղ դրա համար հարմարված են հատուկ քառակուսի տախտակներ: Մենք այս ձևը մանրամասն չենք նկարագրի, քանի վոր նա Հյուսիսային Կովկասում չի կիրառվում:

Այդ ձևը շատ հասարակ է, եփան է նստում, բացի ջողերից և քառակուսի տախտակներից, ուրիշ վոչինչ չի պահանջում և լավ արդյունքներ է տալիս:

Ահա թե չորացման ինչպիսի ձևի մասին է մեր խոսքը.—

Արևոտ, քամիներից պաշտպանված տեղում հյուսիսից դեպի հարավ, հողի մեջ ամուր տնկում են 3 շարք ձողեր, վորոնցից յուրաքանչյուրն ունի 8—10 սմ հաստություն:

Շարքերի միջև տարածությունը հավասար է մոտ 1 մետր 80 սանտիմետրի:

Շարքի մեջ ձողերն իրարից հեռու յեն 4 մետր:

Միջին շարքի ձողերի բարձրությունը պիտի լինի 1—2 մետր, իսկ կողքի շարքերի բարձրությունը—0,7 մետր:

Ամեն շարքի ձողերի գլխին, նրանց յերկարությամբ ամրացվում են քառակուսի տախտակներ:

Վերջիններիս ամրացվում են լայնությամբ դգված նույնպիսի տախտակներ. ստացվում է յերկտակ կտուր, վորը քաժանված է ողակների, սրանցից ամեն մեկը 4 մետր յերկարությամբ:

Անձրևից ավելի լավ պաշտպանվելու համար, կողքի քառակուսի տախտակներին անպայման պետք է ամրացվին տախտակներ, իսկ վերևից, այդ նույն նպատակով, կտուրի ծայրին իրար վրա դրվում են ջերմոցային աղակյա շրջանակներ: Վերջիններս պետք է ամրացված լինեն ալյախս, վոր քամին նրանց չպոկի և միևնույն ժամանակ կարիք յեղած դեպքում հնարավոր լինի հանել նրանց:

Թխախոտաթելերն այս կտուրի վրա կախվում են կամ նրա յերկարությամբ, կամ լայնությամբ:

Առաջին դեպքում, ծխախոտի թելի միջին մասը ցած չընկնելու համար, ամեն մի ողակի յերկարությամբ դգված քառակուսի տախտակներին ամրացնում են թեթև ձողեր, իրարից միատեսակ տարածության վրա:

Յերկրորդ դեպքում, թելերի միջին մասը կախվում է յերկաթալարից շինված կեռերից, միջին քառակուսի տախտակի վրա:

Թե առաջին և թե յերկրորդ դեպքում ծխախոտաթելերը կախվում են քառակուսի տախտակների և թեթև ձողերի վրա խժած մեխերից, կամ նրանց վրա հատուկ շինված տեղերից:

Ավելի հարմար է համարվում ծխախոտի թելերը կախ տալու առաջին ձևը:

Յուրաքանչյուր յերկկողմանի, 8 շրջանակավոր կտուրի վրա տեղավորվում է մոտավորապես 30—40 ծխախոտաթել:

Յեթե չորացման սեզոնի ընթացքում յուրաքանչյուր կտուրն ոգտագործվում է 3—4 անգամ, հեշտ է հաշվել, վոր մեկ հեկտար ծխախոտ չորացնելու համար, միջին բերքի դեպքում, բավական է ունենալ 7—8 այդպիսի կտուրներ և նրանց վրա 50—60 շրջանակներ:

Կտուրների վրա 1¹/₂—2 անգամ ավելի ծխախոտ կարելի յե չորացնել, յեթե ծխախոտաթելերը կախ տրվեն 2 շարք և յեթե նրանք տեղավորվեն նաև կտուրի լայնությամբ:

Վերջին դեպքում կտուրները պիտի շինվեն ավելի բարձր ձողերի վրա:

Կտուրների վրա չորացվելիք ծխախոտը պետք է նախապես դեղնեցվի, հակառակ դեպքում նա կչորանա ու կմնա կանաչ գույնով:

Զերմոցային աղակյա շրջանակներ չլինելու կամ նրանց պակասության դեպքում, կարելի յե կտուրները ծածկել դրվազաթերթով, խսիրով, բրնձենտով և այլն:

Չորացման վերոհիշյալ յեղանակի պակասությունն այն է, վոր նա այնքան ել հարմար չե աշխատային որերի և բացի այդ, աղակյա շրջանակներն անպայման պետք է ունենան ուրիշ հարմարեցումներ, կարկտից պաշտպանվելու համար:

Ծխախոտի լարված բերքահավաքման ժամանակ, յեթե պակասում են տեխնիկական-պլանտացիոն կառուցումները և յեթե յեղանակը լավ է ու տաք,—պետք է կիրառել չորացման այդ յերկու յեղանակները:

Մի քանի խոսք ծխախոտը պատերի վրա չորացնելու մասին:

Նախ և առաջ այս նպատակով չի կարելի ոգտագործել հյուսիսակողմի պատերը, մասամբ նաև արևելյան կողմի պատերն այն ռադիոններում, վորտեղ արևելյան քամիներ են փչում:

Պատերի վրա ծխախոտի չորացումը շատ նման է վրանների վրա կատարվող չորացման, վորի վրա մենք կխոսենք ստորև: Յերկու տեսակի չորացումն էլ միևնույն թերություններն ունեն

Լավ յեղանակի դեպքում, պատերի վրա կատարվող չորացումը բավարար արդյունքներ է տալիս: Աննպաստ յեղանակի դեպքում նա անպետք է և զգալի քանակությամբ ծխախոտ կարող է փչանալ:

Այդ փչացման առաջը կաշիլի յե առնել, յեթե թելած ծխախոտը կապվի ձողերի, վորպեսզի հնարավոր լինի աննպաստ յեղանակ սկսվելու դեպքում, կամ գիշերը պահելու համար մարդ տանել (յեթե գիշերը ցող է սպասվում): Սակայն սրանով բարդանում է չորացման այս ձևը:

Ծխախոտի չորացումը վրաններում: Չորացման համար ընտրված տեղում, արևմուտքից դեպի արևելք տնկում են մի շարք ձողեր, 2,5 մետր բարձրությամբ և իրարից 5 մետր հեռավորությամբ:

Այս շարքին զուգահեռաձև, նրանից մեկ մետր հեռու տնկում են ձողերի մյուս շարքը՝ 2 մետր բարձրությամբ: Յերկու շարքերի ձողերն անպայման պետք է լինեն ձիշա իրար դիմաց:

Շարքերի յուրաքանչյուր զույգ ձողերը վերևից ամրացվում են 1,5 մետր յերկարությամբ փայտեր, այնպես, վոր

սրանց մի մասը 50 սանտիմետրով դուրս գա բարձր ձողերի գծից:

Փայտերի վրա ամրացվում են տախտակներ կամ խաիրներ, իսկ սրանց վրա վորեն նյութից կտուր է սարքվում:

Բարձր շարքի յուրաքանչյուր յերկու հարևան ձողերի միջև միատեսակ տարածությամբ 3—4 ուրիշ ձողեր են դրվում, կախված ծխախոտաթելերը պահելու համար:

Վրանների բարձր կողմը, վորտեղ կախված են ծխախոտաթելերը, պետք է ուղղված լինի դեպի հարավ, վորպեսզի ամբողջ ուրը ծխախոտը լինի արևի տակ:

Նախ քան վրանից կախելը, ծխախոտը պետք է լավ դեղնացված լինի:

Ծխախոտաթելերը սկսում են կախվել վերևից: Ամենից ներքև գտնվող ծխախոտաթելի տերևները պետք է գետնից բարձր լինեն 20—25 սանտիմետր:

Ամեն մի տերևի ծայրը պետք է ծածկված լինի նրանից ներքև գտնվող տերևի պոչով, — 4—5 սանտիմետրի չափ:

Թելերն այս ձևով կախ տալը նրանով է բացատրվում, վոր տերևների պոչերը կնդուռեն զգալի քանակությամբ արևի տաքություն և այդպիսով կարագանա նրանց չորացումը:

Հենց վոր ծխախոտի տերևներն ստանան անհրաժեշտ դեղին դույն (լավ յեղանակի դեպքում այդ տեղի կունենա 4—5 ուրվա մեջ), տերևները շուտ են արվում, մյուս կողմը չորացնելու համար:

Վրանների վրա կարելի յե կախ տալ 10—15-ական ծխախոտաթել: Յեթե հաշվենք, վոր յուրաքանչյուր վրան սեզոնի ընթացքում կչորացնի 36—40 թել, հեշտ է վորոշել, վոր միջին բերքի դեպքում մեկ հեկտար ծխախոտի համար կպահանջվի 30—33 վրաններ:

Մի կտուրի տակ շինում են մի քանի վրաններ:

Ամառային լավ, անքամի յեղանակին այսպիսի չորացումը միանգամայն բավարար արդյունքներ է տալիս:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր վատ յեղանա-
կին դրական արդյունքներ չեն ստացվի:

Բ. ԾԽԱԽՈՏԻ ԶՈՐԱՅՈՒՄԸ ՏԱՔԱՅՎՈՂ ՇԵՆՔԵՐՈՒՄ

Լավ վորակի հումուլթ ստանալու տեսակետից արևով
կատարվող չորացումը դրական արդյունք է տալիս միայն
նպաստավոր յեղանակին:

Ահա թե ինչու յեր հարկավոր գտնել չորացման այն-
պիսի ձև, վորը բոլորովին կախված չլիներ յեղանակից:

Այդ ձևը ծխախոտը առաջացվող շենքերում չորացնելն է:
Այստեղ դրվում են վառարաններ, վորոնց տաքությունից
չորանում է ծխախոտը:

Մեր յերկրում, ծխախոտի հումուլթ տվող մեր սոցիալիս-
տական ֆաբրիկներին—խորհանտեսությունների ու կոլտն-
տեսությունների համար արհեստական չորացման հարցը
բացառիկ նշանակություն ունի:

Ծխախոտի արևով չորացումը, վորն այնպես լայն չա-
փերով կատարվում էր ծխախոտագործական անհատական
տնտեսություններում, չի կարող բավարարել մեր ծխախո-
տագործական խորհանտեսություններին ու կոլտնտեսութ-
յուններին:

Նրանք պետք է գլխավորապես կիրառեն արհեստական
(տաքացվող շենքերում կատարվող) չորացումը, իսկ արևի
ջերմությունն ու լույսը պետք է ոգտագործեն վորպես ոժան-
դակ միջոց: Այս ճանապարհով մենք մեծ դարկ կտանք
ծխախոտի հումուլթի արդյունաբերության:

Վորոնք են արհեստական չորացման առավելություն-
ները՝ արևով չորացման հանդեպ:

Արհեստականորեն չորացրած ծխախոտն ողից շատ քիչ
խոնավություն է ընդունում: Ուրեմն չորացումից հետո պահ-
վելով, նա ավելի քիչ չափով է յենթակա բորբոսներուն ու
փչացման:

Արհեստականորեն չորացրած ծխախոտը մոտավորապես
5 տոկոսով ավելի լավ է չորանում, քան արևի տակ:

Արհեստականորեն չորացրած ծխախոտը լինում է մա-
քուր, պայծառ-դեղին գույնի: Տաքացվող շենքերի շնոր-
հիվ արագանում է ծխախոտի դեղնումն ու չորացումը՝ շնոր-
հիվ բարձր ջերմության:

Արհեստական չորացումն իհարկե վոչ մի կախումն չունի
յեղանակից:

Նրանից ստացված ծխախոտի ֆերմենտացիան ընթա-
նում է նորմալ, բայց ավելի քիչ ինտենսիվ է լինում, ա-
վելի յերկարատև, քան արևով չորացված ծխախոտի ֆեր-
մենտացիան:

Յնթե յեղանակները լավ են, արևով չորացումը տալիս
է մեծ քանակությամբ 1-ին տեսակի ծխախոտ, վորը ծխե-
լիս լավագույն հատկություններ է ունենում, իսկ արհես-
տական չորացումը դուրկ լինելով դրանից, ուրիշ շատ մեծ
առավելություններ ունի արևով չորացման հանդեպ:

Սոցիալիստական ու կոլտնտեսային մասսաների, բան-
վոր գյուտարարների, գիտական-փորձական հիմնարկների
ծխախոտագործության մեջ աշխատողների առաջ մի շատ
կարևոր խնդիր է դրված.—գտնել արհեստական չորացման
այնպիսի ձևեր, վոր ծխախոտն իր բոլոր հատկություն-
ներով գերադանցի արևային չորացումից:

Ծխախոտի արդյունաբերության Համալիութենական
Ինստիտուտը (վորը գտնվում է Կրամնոդարում) այս խնդիրը
հիմնականում արդեն լուծել է: Հարկավոր է միայն նոր
գտնված ձևերի մասսայական ստուգում կատարել:

Այս ապարիղում ոգնել Ինստիտուտին, անցկացնել այդ
մասսայական ստուգումը—ահա ծխախոտագործական խորհ-
անտեսությունների ու կոլտնտեսությունների աննիւթը:

Ներկայումս գոյություն ունի արհեստական չորացման
2 մեթոդ, վորոնց հիման վրա չորանոցներ են կառուցվում:
Առաջին—յերբ չորանոցում ողի հոսանքը բարձրանում է,
յերկրորդը—յերբ իջնում է:

Մի ամբողջ շարք տեսաբանական վեճերից, կարծիքնե-
ներից, ողի վերոհիշյալ հոսանքներն առաջացնող չորա-

նոցները փորձելուց հետո պարզվեց, վոր յերկու մեթոդներն ել, ճշտությամբ կիրառվելով, միևնույն տեսակի բավարար արդյունքներ են տալիս:

1931 թվականի հոկտեմբերի 3-ին Ծխախոտի արդյունաբերության Համամիութենական Ինստիտուտին կից տեղի ունեցավ մի խորհրդակցություն, վորը նվիրված եր զանազան սիստեմի արհեստական չորացումների փորձարկման հարցերին: Խորհրդակցությունը գտավ, վոր ամենաընդունելին, գործնականորեն բավարար և մասսայական շինարարության համար պետքականը ինժ. Յորդանսկու չորանոցի նախագիծն է, պայմանով, յեթե այդ չորանոցում բացի արդեն աշխատած ողի ներքին արտամղման սարքավորանքից, լինի նաև նրա վերին արտամղման սարքավորանք:

Այս չորանոցի առավելությունները նրանում են կայանում, վոր նա եժանե նստում, հրդեհից միանգամայն ապահովված է և ծխախոտի չորացումից հետո կարող է ոգտագործվել զանազան տնտեսական նպատակներով:

Ծխախոտի արդյունաբերության Համամիութենական Ինստիտուտը փորձեց նաև Պոտոկինի սիստեմի չորանոցը, վառարանի կառուցման մասում մի փոքր շեղվելով նախագծից: Փորձը ցույց տվեց, վոր այս չորանոցը ավելի լավ հատկություններ ունի, քան Յորդանսկու չորանոցը, բայց առաջինի ինքնարժեքը յերկրորդի համեմատությամբ շատ բարձր է:

Մենք մանրամասն կանգ կառնենք Յորդանսկու սիստեմի վրա, քանի վոր հենց այդ տիպի չորանոցն է հանձնարարվում մասսայական շինարարության համար:

Նախապես սի քանի խոսք ասենք չորանոցների կառուցման առաջիկա խնդիրների և չորացում կատարելու մասին:

Վոչ Յորդանսկու և վոչ ել Պոտոկինի չորանոցները վերջին խոսքը չեն ծխախոտի չորանոցների շինարարության ասպարիզում:

Նրանք դեռևս մի ամբողջ շարք փոփոխություններ և ուղղումներ են պահանջում:

Հերթի յե դրված նաև ծխախոտի փայտե վառելիքը ուրիշ վառելիքով—նավթով և ածխով փոխարինելու հարցը: Առաջիկայում պետք է լուծվի նաև ծխախոտի չորացման համար ելեկտրականության ոգտագործման խնդիրը:

1. ԻՆՏԵՆՔ ՅՈՐԴԱՆՍԿՈՒ ՍԻՍԵՄԻ ՁՈՐԱՆՈՑ

Մենք մանրամասն չենք նկարագրի այդ չորանոցի կառուցվածքը, քանի վոր դա անշուշտ հայտնի յե ծխախոտագործական խորհատնետությունների բանվորների և ծխախոտագործ կոլտնտեսությունների մեծամասնության:

Կանգ առնենք միայն չորանոցի կառուցվածքի հիմնական մոմենտների և այդ չորանոցի ոգտագործելու կանոնների վրա:

Յորդանսկու չորանոցը տեղավորում է 50 շրջանակ (վազոն), վորոնցից յուրաքանչյուրի վրա կախվում է 25 ծխախոտաթել: Ուրեմն ամբողջ չորանոցում տեղավորվում է 1250 ծխախոտաթել:

Չորանոցի մեծությունն ըստ նախագծի հետևյալն է.— յերկարությունը՝ 19,07 մետր, լայնությունը—8,3 մետր և բարձրությունը—3,6 մետր:

Պատերը շինվում են ցախից և հարդախառն աղյուսից:

Կտուրը ծածկվում է տաշեղներով կամ փայտյա թիթեղով:

Չորանոցն ունի ցախերից գործած առաստաղ:

Ծխախոտի չորացումն ավարտելուց հետո, փունջ կապելու ժամանակ չենք լավ լուսավորելու համար շինվում է 10 լուսամուտ, վորոնց ընդհանուր տարածությունը 19,8 քառակուսի մետր է:

Ծխախոտի չորացման ժամանակ լուսամուտների արտաքին փեղկերը փակվում են: Չորանոցն ունի 2 վառարան:

Գազերը վառարանից գնում են աղյուսե անցքի միջով, վորոնք շինված են չորանոցի կողքերին, հետ են դառնում դեպի ծխի խողովակը: Գազերը վերադառնում են 2 յեր-

կաթյա խողովակներով, վորոնք գտնվում են յուրաքանչյուր աղյուսե խողովակի վրա, նրա վերեվից:

Այս յերկու խողովակների ծայրերին, ծխատար խողովակի մոտ կան խուփեր:

Սուփերի միջոցով կանոնավորվում է ողի ու դաղերի ընթացքը, բռնկվում են վառարանները, ուժեղացվում են ողի ու դաղերի արտադրումը: Յեղը արտաքին ողի ջերմությունը գրեթե հավասարվում է չորանոցի ողի ջերմության, բացվում է վառարանի միայն ծխատար խողովակը:

Ողի արտադրման սխեման բաղկացած է յերկու անցքերից, վորոնք փորված են չորանոցի յերկարությամբ և հատակի հետ միևնույն մակերևույթի ունեն:

Մեկ անցքը յերկու անգամ յերկար է մյուսից:

Անցքերը փակվում են կափարիչով: Յերբ վերջիններս բարձրացվում են, ողը ներս է ծծվում նրանց մեջ:

Թափ ողի հոսանքի համար, պատերի մեջ, ներքևից շինված են 20 սանտիմետր բարձրությամբ անցքեր:

Այս անցքերը շինված են ամբողջ պատի յերկարությամբ:

Չորանոցի մեջ ողի շրջանառությունը կատարվում է հետևյալ կերպ—տաքացած ողը, անցնելով ծխախոտի միջով, բարձրանում է չորանոցի վերին մասը:

Ծխախոտի միջով անցնելիս, ողը նրանից վերցնում է խոնավությունը, դրանից սառչում է, ծանրանում և իջնում: Ներքև, վորտեղից դուրս է գալիս արտադրման սխեմայի միջոցով:

Ներքև իջած ողի մի մասը խառնվելով արտաքին ողի հետ,—վորը ներս է հոսել պատերի մեջ յեղած անցքերից,—նորից տաքանում է աղյուսե խողովակներից և դարձյալ վերև բարձրանում:

Չորանոցի հիմնական պակասություններից մեկն այն է, վորնա չունի վերին արտադրման անցք:

Այդ անցքի բացակայության շնորհիվ և չորանոցիներս ու դրսի գրեթե հավասար ջերմության ժամանակ ծխա-

խոտը կարող է յենթարկվել շոգու ազդեցության, վորովհետև հնարավոր չի լինի արագությամբ դուրս մղել խոնավ ողը:

Այդ անցքի բացակայության պատճառով կարող է ձգվել նաև ծխախոտի թեթևակի խոնավացումը (չորացումից հետո), յեթե նույն իսկ շենքի դռները բաց լինեն: Իրանով նաև ձգձգվում է շենքի դատարկումը և այսպիսով դանդաղում չորացումը:

Չորանոցի պակասություններից մեկն էլ այն է, վոր արտադրման անցքը գետնի մեջ է դնվում: Այստեղ մի փոքր սառչում է ծխախոտի միջով անցած ողը, բայց վերջինս լավ չի քաշվում, վորով դարձյալ ծխախոտը կարող է յենթարկվել շոգու բացասական ազդեցության,—յերբ մեծ չե ներսի և դրսի ողի ջերմության տարբերությունը:

Վառարաններում վորոշ հարմարեցման բացակայության պատճառով, սառն ողը չի թափանցում վառելիքի բոլոր շերտերի մեջ, վորի հետևանքով ավելի շատ վառելիք է ծախսվում և վառարաններում գաղերի մի փոքր սառնում թյուն է առաջ գալիս:

2. ՅՈՐԴԱՆՍԿՈՒ ՅՈՐԱՆՈՑՈՒՄ ԾԽԱԽՈՏԸ ՉՈՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՆՈՆԵՐԸ

1. Ծխախոտի չորացումը մեծ փորձառություն է պահանջում, ուստի չորանոցներում աշխատելու համար, պիտի նշանակվեն փորձառու կամ համապատասխան դասընթացքներ ավարտած կոլտնտեսականները:

2. Ծխախոտը չորացվում է այսպես—

Մենք արդեն ասել ենք, վոր ծխախոտի չորացման ամբողջ գործը յերկու մասից է բաղկացած,—դեղնեցում և անբոլջակացում: Ծխախոտի չորացումը տարբեր կերպով է կատարվում և կախված է ծխախոտի տերևների դրությունից, նրանց պնդությունից, խոնավությունից, տերևվահատից և այլն: Մանրատերև ծխախոտերի ներքևի տերևներն ավելի քիչ են դեղնեցվում: Նրանց հարկավոր է բնական ավելի քիչ են դեղնեցվում: Նրանց հարկավոր է ծխախոտերը, նախ չորացնել: Ընդհակառակը, խոշորատերև ծխա-

նրանց վերին տերեւները ավելի յերկար (24 ժամ և 7 ավելի) են դեղնեցում: Դեղնեցումն ավարտելուց հետո պետք է անցնել չորացման: Ծխախոտը չորացվում է այնքան, մինչև վոր բոլորովին չորանան նրա յերակները և պոչերը: Դժվար է վորոշել, թե արդյոք չորացել է ծխախոտը, վորովհետև կանոնավոր չորացրած ծխախոտի յերակներում խոնավութուն է պարունակվում:

3. Չորանոցների մեջ ամեն անգամ պետք է տեղավորել միևնույն տերևահատի և միևնույն ժամանակ քաղված ու թելած ծխախոտը: Զի կարելի չորանոցում չորացնել դանազան, — խոշորատերև, մանրատերև, թարմ, կիսաչոր ծխախոտեր:

4. Չորանոցում ծխախոտը տեղավորելիս պետք է հետևել, վորպեսզի վազոնների միջև բավականաչափ տարածութուն լինի և յերկու հարևան վազոնների ծխախոտը չխառնվի իրար:

5. Վառարանների և բոլոր խողովակների ծակերը չորացումն սկսելուց առաջ պետք է ծեփվեն կավով:

6. Վառարանը վառելու համար բացվում է համապատասխան խուփը, վորը շինված է այնտեղ, ուր ծուխն ու գազերը վառարանից անցնում են աղյուսե խողովակի մեջ: Բացելով խուփը, մենք վրանով գազերն անմիջապես մղում ենք ծխախողովակի մեջ: Ընդհակառակը, փակելով խուփը, մենք գազերը մղում ենք դեպի աղյուսե խողովակները և ջերմախողովակները:

Վառարանները վառելիս խուփն անպայման բացվում է վառելիքի բռնկումը հեշտացնելու համար: Հենց վոր վառարանում վառելիքն այրվում — թեժանում է, պետք է փակել խուփը: Այսպիսով տաքութունն անցնում է չորանոց:

7. Խուփը բանալու միջոցով վառարանը քաշում է չորանոցի ողը, այսինքն, այնտեղ ողափոխութուն է կատարվում:

Այդ ողափոխութունը տեղի է ունենում շնորհիվ այն հանգամանքի, վոր ծխախողովակը գտնվում է սրտամղիչ

խողովակի ներսում և իր տաքութունը տալիս է չորանոցից դուրս յեկող ողին, վորն ավելի թեթեւանում է:

Ողի արտավառումն ուժեղացնելու համար, խուփը պիտի ողտադործել ամառային շոգ ժամանակ, յերբ չորանոցի ներսի յեկ դրսի ողի մեջ չկա առանձին տարբերութուն (որինակ ծխախոտի դեղնեցման ժամանակ): Մնացած ժամանակ չպետք է ողտվել վերը հիշած խուփից, հակառակ դեպքում ավելի շատ վառելիք կծախսվի:

8. Ծխախոտը չորանոցում տեղավորելուց հետո վառվում են վառարանները: Հետդհետե (5—6 ժամվա ընթացքում) ջերմութունը բարձրացվում է մինչև 20 աստիճան, հետո յուրաքանչյուր ժամը մեկ աստիճան, մինչև 25 աստիճան՝ ըստ Ցելսիուսի:

Ջերմութունը մինչև 25 աստիճան բարձրացնելու հետ մեկտեղ սկսվում է ողափոխութունը, խոնավ ողը դուրս մղելու համար: Միևնույն ժամանակ պետք է աշխատել, վոր ողում պահվի 20—80 տոկոս խոնավութուն: Խոնավ ողն առանձնապես հավաքվում է փոշորատերև թաց ծխախոտները դեղնեցնելիս: Այս պատճառով նրանց դեղնեցնելու ժամանակ ողափոխութունը պիտի սկսել վառարանները վառելու հետ միաժամանակ, հետևելով վոր ողը շատ խոնավ չլինի:

9. Ողափոխության համար բացվում են ողաքարշ յերկաթյա անցքերը: Արտաքին անցքերը թարմ ող ընդունելու համար բացվում են՝ նախած ծխախոտի դրության, դրսի ողի խոնավության ու ջերմության:

Հատակում գտնվող ներքին ողանցքի կափարիչները բացվում են այնպես, վորպիսզի ամբողջ չորանոցի ողը հավասարաչափ դուրս հոսի:

10. Վորպեսզի խոնավ ողը հավասարաչափ դուրս մղվի, ներքին ողանցքի կափարիչները և արտաքին անցքերը բացվում են այնպես, վոր վառարանի կողմում այդ բացվածքն ավելի էի լինի, քան դրան մոտ:

Այստեղ անպայման պիտի հետևել, վոր չորանոցում կայուն ջերմութուն լինի և վերջինս չտառանվի, հետդ-

Ետե, մինչև ծխախոտի դեղնեցման վերջը, բարձրացնելով
մինչև 35—37° ըստ Ցելսիուսի, իսկ ողի մեջ պահպանելով
մինչև 90—70 աստիճանով։ Խոնավութուն։

Արտաքին անցքերը քառու կողմից քիչ ծածկվում են :
Նրանք ծածկվում են ցուրտ գիշերներին :

11. Միսխոտի ղեղնեցումն ավարտելուց հետո, սկսում են հետզհետե բարձրացնել չորանոցի ջերմությունը—մեկ ժամում 1—2⁰։ Միևնույն ժամանակ խոնավ ողը բոլորովին դուրս է մղվում մանավանդ դեղնեցումից չորացման անցնելու մոմե նսիմ։ Ամառվա շոգ ժամանակ, չորանոցն արագ ոգափոխության յենթարկելու համար, պետք է բանալ լուսամուտները։ Ոգափոխությունից հետո լուսամուտները պետք է ամուր փակվեն։

12. Զերմությունը հետզհետե հասցնելով մինչև 40, ապա մինչև 45⁰ ըստ Յելսիուսի, չորացվում են ծխախոտի տերևները (առանց յերակների և պոչերի):

13. Այնուհետև չորացվում են տերևների յերակներն ու պղնձերը: Դրա համար չորանոցի ջեր մութ յունը աստիճանաբար (1 ժամում ²⁰) բարձրացվում է մինչև 55⁰, իսկ ոդի խոնավությունը 40—45⁰/₁₀ ից ավելի չպիտի լինի: Վառելիքի ավելորդ ծախքից խուսափելու համար, արտաքին անցքերը փակվում են: Այսպիսի ջերմության մեջ չորացվում են յերակները:

Յերբ արդեն յերակները չորացել են, չորանոցի տաքու-
թյունը բարձրացվում և մինչև 60°—ամբողջովին փակվում
են արտաքին անցքերը, ինչպես և ներքին վառարանների
անցքերը և դադարեցնում են վառարանների վառվելը:

Զորանոցն այս զրուժյամբ մնում է մինչև այն ժամանակ, յերբ բոլորովին կչորանան ծխախոտի տերևները յերակներն ու պոչերը:

3. Ինչ անելովոր արշեսպանորեն ջորսցվող Խանութն Իր Գոհնով
Յեվ Վորսվող ՀԱՎԱՍԱՐԿԻ ԱՐԵՎՈՎ ջորսցվող Խանութն

1. Այն ռայոններում, վորտեղ ծխախոտը չորացվում է արևով, արհեստական չորացման նպատակն է կրճատել ձեռ-

քի աշխատանքը և աշնան անձրևային յեղանակներին նոր-
վալ վերակով ձխախոտ ստանալ:

2. Ինկատի ունենալով ծխախոտի բնորոշ գույնն ու վորակը պահպանելու անհրաժեշտությունը, այս ռադիոնուկլիդները արհեստական չորացումը մի քիչ տարբերվում է Կուբանում ու Մայկոպում կատարվող նույնպիսի չորացումից: Կուբանում ու Մայկոպում չորացումը կատարվում է արագ, ոգտագործելով 60—65 աստիճան ջերմությոնը:

Վերը հիշված նախատակով չորացումը տեղի յե ունենալով
յերկու կերպ.—

ա) Ծխախոտն ամբողջովին դեղնեցելուց և արմարանալուց, իսկ չորանոցում՝ չորացվում են զլխավորապես տերևների խոտակներն ու պոչերը: Վերջին գործողությունը կատարվում է դանդաղ, վորպեսզի ծխախոտը կարողանա ավելի չորանալ, վորպեսզի գույնը սեռանալ: Չորանոցում ծխախոտը թողնվում է 3—4 օր և տաքությունն աստիճանաբար բարձրացվում է մինչև 45—50° ըստ Ցելսիուսի, պահպանելով ողի մեջ 50% խոնավություն: Յեթե հարկավոր է, չորացրած ծխախոտը 2—3 օր դուրս է դրվում թեթի ցողիկներից դեպքում, հետո դրվում է արևի տակ:

բ) Յերմուկի ձևը կիրառվում է այն ժամանակ, յերբ
յեղանակն անձրևային եւ հնարավոր չէ ծխախոտը դեղնե-
ցնել արևի տակ։ Չորանոցում տեղավորվում է թարմ, չդեղ-
նած ծխախոտը, վորտեղ նա 2—3 որվա ընթացքում, 35—
37° ջերմության տակ դսնդալ թառամում է, մինչև վոր
բոլորովին դեղնի։ Դեղնեցումից հետո, ասփնամաբար բարձ-
րացնելով ջերմությունը, անցնում են չորացման, վորը
կատարվում է աշնպես, ինչպես ասված է նախորդ «ա»
կետում։ 2—3 որվա ընթացքում ջերմությունը դանդաղ
բարձրացնում են մինչև 45—50°, իսկ դեղնեցումից չորաց-
ման անցնելու մոմենտին մի փոքր ուժեղացնում են ոգա-
ծխախոտի չորացումը։

59

Յեթե հարկավոր է ավելի ցանկալի գույն տալ ծխախոտին, ծխախոտի թելերով բեռնված վագոնները դուրս են բերվում չորանոցից, թողնվում են դրսում թեթև ցողի ժամանակ և ապա դրվում արևի տակ:

4. ԻՆՁՊԵՍ ԶԱՓԵԼ ԶՈՐԱՆՈՅԻ ՈՂԻ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Վորովհետև չորանոցում ողի ջերմությունը լինում է 20—60°, ուստի այդ ջերմությունը հափելու համար կարող են գործածվել ամեն տեսակ ջերմաչափեր, նաև սենյակների ջերմաչափերը: Սակայն ավելի լավ է չորանոցում գործածել փայտե պատվանդան ունեցող ջերմաչափերը:

Չորանոցում ջերմաչափը պետք է փակցնել այնպես, վորպեսզի նա վորքան կարելի չէ ձիշտ ցույց տա ջերմության աստիճանը, — այսինքն նա չպիտի փակցվի վառարանի կամ ջերմատար խողովակների, կամ դռան մոտ (առաջին դեպքում նա ջերմությունն ավելի ցույց կտա, իսկ վերջին դեպքում — պակաս):

Ջերմաչափի ամենալավ տեղը չորանոցի ձիշտ մեջտեղն է, բայց այստեղ ծխախոտն է գտնվում: Ընդհանրապես խորհուրդ է տրվում ջերմաչափը տեղավորել վագոնների տակ, ողատար անցքի վրա, վորքան կարելի չէ չորանոցի մեջտեղում:

2. Ողի խոնավությունը հափելու համար գործ է ածվում Ավգուստի խոնավաչափը: Այս գործիքը հեշտությունը կարող է սարքել ծխախոտ չորացնողը — 2 ջերմաչափից և մի բաժակ ջրից: Մետաղաթելի վրա կախվում է 2 ջերմաչափ և ջրով լի բաժակ: Ջերմաչափերից մեկի, այսպես կոչված թաց ջերմաչափի սնդիկը չի հասնում մինչև ջրի մակերևույթը (բաժակի մեջ), այլ թրջվում է մարլայի կամ բատիստի միջոցով, վորով նա փաթաթված է 1—2 անգամ: Բատիստի կամ մարլայի ծայրը գտնվում է բաժակի ջրի մեջ, ինչպես այդ ցույց է տրված նկարում: Խոնավությունը վորոշելու համար դիտում են յերկու ջերմաչափերը: չոր ջերմաչափը սովորաբար ավելի բարձր ջերմություն է ցույց տալիս, քան

թացը: Յերկու ջերմաչափերի ցուցիչների տարբերությունը, և չոր ջերմաչափի ցույց տված տաքությունը գիտենալով, մեր գրքում բերված աղյուսյակից կարող ենք գտնել ողի խոնավության աստիճանը:



Որինակ. չոր ջերմաչափի ջերմությունը 50° է ըստ Ցելսիուսի, իսկ թաց ջերմաչափինը — 45°. Տարբերությունը $50 - 45 = 5$: Յերկրորդ աղյուսյակում (տես 5-րդ հավելված) «Ջերմության տարբերությունը» սյունյակում մենք գտնում ենք 5 թիվը. վերևից գտնում ենք չոր ողի ջերմության աստիճանը — 50, իսկ այդ յերկու սյունյակների հատման կետում գտնում ենք ողի խոնավությունը — 73%:

Ինչպես վերևում ասացինք, խորհուրդ է տրվում խոնավաչափը կախել ծխախոտի (վագոնների) տակ, ողի արտամղման անցքի վրա, վորքան կարելի չէ, չորանոցի կենտրոնում: Այս դեպքում կարիք չկա չորանոցի ջերմությունը հափելու համար առանձին ջերմաչափ պահել, ջանի վոր նրան փոխարինում է խոնավաչափի «չոր» ջերմաչափը:

Յուրաքանչյուր չորանոցին կից անպայման պետք է լինի ծխախոտի մարագ, վորը մենք արդեն նկարագրել ենք (տես այս գլխի «Ծխախոտի չորացումն արևի տակ» բաժինը):

Մեր կարծիքով նպատակահարմար է մարագը կառուցել վոչ թե 5 բաժանմունքով, ամեն մեկը 30 շրջանակի (վագոնի) համար, — այլ 6 բաժանմունքով, ամեն մեկը 25 վագոնի համար:

Սա թելադրվում է այն գործնական անհրաժեշտությամբ, վոր մարագի յուրաքանչյուր յերկու բաժանմունքի վագոնների թիվը (50) կադմում է վորոշ նորմա: Այսպիսով, չորանոցում ծխախոտ տեղավորելիս, վագոնների շփոթություն չի լինի:

Մեր յերկրամասի շատ ձխախոտագործական ինդուստրիա-
տու թյուններում կան գյուղացիական տիպի արվեստական
(տաքացվող) չորանոցներ: Այստեղ ձխախոտը չորացվում է
ողի բարձրացող հոսանքի միջոցով:

Վառարանը շինվում է դրսից: Չորանոցում, ձխախոտի
տակ գտնվում են յերկաթե խողովակներ և փոքրիկ աղյուսե
ձխանելույղներ:

Աղյուսե և յերկաթե խողովակների ջերմությունը տա-
քացնում է ողը, վորը վերև է բարձրանում, իսկ չորանոցի
կաուրին կան անցքեր, կամ տախտակներից շինվում են
խողովակներ, խոնավ ու թեթևացած ողը քաշելու
համար:

Յեթե գյուղացիական տիպի չորանոցները ճիշտ և լավ
են կառուցված և յեթե այնտեղ հմուտ ու փորձված մարդ
է աշխատում,—նրանք իրենց տված արդյունքով պակաս
չեն Յորդանսկու չորանոցից: Սրա ապացույցն են Ծխախոտի
արդյունաբերության Համամիութենական Ինստիտուտի
փորձակայանների չորանոցները, վորոնք գտնվում են Մայ-
կոպի և Աբխազի ռայոններում:

Գյուղացիական տիպի չորանոցների խոշոր թերություն-
ներից պետք է հիշել հետևյալները.—

1. Շատ դժվար է կանոնավորել չորանոցի ջերմությունն
ու խոնավությունը:

2. Այդպիսի չորանոցներն այնքան էլ ապահովված չեն
հրդեհներից:

3. Շատ դժվար է նրանց ոգտագործել ձխախոտի մշակ-
ման աշխատանքների համար:

ԱՅՍ ԶՈՐԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԾԽԱԽՈՏԸ ԶՈՐԱՑՆԵԼՈՒ ՇԻՄԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՇԵՏԵՎՅԱԼՆԵՐՆ ԵՆ.

1. Ամեն անգամ չորանոցում պիտի տեղավորել միևնույն
տեսակի և տերևահատի ձխախոտ:

2. Ամեն անգամ ձխախոտը տեղավորելուց առաջ բոլոր
անցքերը պետք է ծեփվեն, փչացած խողովակները փոխա-
րինվեն նորերով, խողովակների միացման տեղերը պետք է
նայվեն և կարիք յեղած դեպքում ծեփվեն կավով:

3. Յեթե շինքում տեղավորված ձխախոտը միատեսակ
չէ, վառարանի մոտ տեղավորվում է այն ձխախոտը, վորն
ավելի շուտ պետք է չորացնել: Ընդհակառակը, յեթե հար-
կավոր է ավելի յերկար պահել ու դեղնեցնել ձխախոտը, նա
տեղավորվում է դռան մոտ:

Չորանոցում ջերմության ու խոնավության այս կամ այն
չափը պետք է վերցնել՝ նայած թե շրջանակների մեծ մասի
վրա ինչ գրությամբ է գտնվում ձխախոտը:

4. Յեթե չորանոցում շրջանակները տեղավորվում են
թեք դիրքով, ապա նրանց պետք է իրար մոտեցնել այն-
պես, վոր մեկ շրջանակի ձխախոտը դիպչի հարևան շրջա-
նակին և վոչ թե պառկի վերջինիս վրա:

5. Ծխախոտի դեղնեցումը, վոր տևում է մոտ 0,5—2 օր,
կատարվում է՝ պահած 30° ջերմությունից մինչև 37° (ջեր-
մությունն ավելացվում է աստիճանաբար): Խոնավու-
թյունն այդ ժամանակ պիտի լինի 79% և 85%-ից վոչ
ավելի:

6. Յերե ձխախոտի տերևները հավասարաչափ դեղին
դույն են ստանում, պետք է անցնել նրանց չորացման
(առանց յերակների և պոչերի), ջերմությունը հասցնելով
մինչև 40—50 աստիճանի ըստ Յելսիուսի: Խոնավությունը
պետք է իջեցնել մինչև 60—65%: Չորացման այս շրջանը
տևում է մոտ 16—20 օր:

7. Չորանոցի խոնավությունը կանոնավորվում է ողափո-
խությամբ: Կարելի է խոնավությունը չափել Ալգոլուսի
խոնավաչափով, վորը մենք արդեն նկարագրեցինք: Իսկ
խոնավաչափի չկա, չորանոցի խոնավության աստիճանը
կարելի է չափել հետևյալ կերպ.

Յեթե չորանոց մտնելիս կարելի է թեթև շնչել, ուրեմն
կարիք չկա ուժեղ ողափոխություն կատարել, հակառակ

դեպքում, յեթե ծանր եւ շնչում, պետք ե ուժեղացնել
ողափոխությունը:

8. Յերբ տերեւները, բացի յերակներէից ու պոչերից, ար-
դեն չորացել են, ջերմությունը պիտի բարձրացնել մինչեւ
56°, վերջինների լավ չորացման համար: Ողափոխությունն
այդ ժամանակ դադարեցվում ե:

Չորացման այս շրջանը տևում ե 12—30 օր:

6. ԱՊԱԿՅԱ ԶՈՐԱՆՈՅՆԵՐ

Իր ժամանակին կատարվող չորացումը կրճատում ե
ծխախոտի բերքի կորուստները, քանի վոր նա նպաստում
ե բերքի ամբողջովին ե իր ժամանակին իրացման:

Այս նպատակին հասնելու համար հարկավոր ե, վոր խորհ-
տնտեսություններն ու կոլտնտեսությունները, բացի իրենց
ունեցած պլանտացիոն-տեխնիկական կառուցումներից, ող-
տադրծեն նաև բոլոր միջոցներն ու ձևերը ծխախոտը ժա-
մանակին չորացնելու համար:

Այդ միջոցներից են նաև ապակյա չորանոցները, վորոնք
շինվում են ջերմոցների ապակյա շրջանակներից:

Ներսում շինվում են նստարաններ յերկաթե խողովակ-
ներով:

Դռները վոչ այլ ինչ են, յեթե վոչ նույն շրջանակները,
վորոնք կախվում են ողակներից կամ դեմ են տրվում չորա-
նոցին:

Վորպես որինակ, նկարագրենք մի ապակյա չորանոց,
վորն ունի 500 ծխախոտաթելի տարողությունը, յուրաքան-
չյուր թելը 4,27 մետր յերկարությամբ:

Չորանոցի համար ընտրված տեղում տնկվում են 3 շարք
գերաններ, յուրաքանչյուր շարքում 6 հատ: Յուրաքանչյուր
գերանի տրամագիծը հավասար ե 13,2 սմ:

Դրսի շարքերի սյուների բարձրությունը 5,8 մետր ե,
միջին շարքի—3,56 մետր: Դրսի շարքերի գերանների միջև
թողնվում ե 14 մետր տարածություն, այսինքն ամեն մի
յերկայնքի պատում տեղավորվում ե 14 շրջանակ:

Շրջանակները վերևից ու ներքևից ամրացվում են հա-
մապատասխան հարմարեցումներով:

Կառուրը յերկանջ ե, ամեն կողմից ունի 14 շրջանակ:
Հատուկ հարմարեցման միջոցով կաուրի շրջանակները ներքևի
ծայրից կարող են բարձրացվել ողափոխության համար:

Լայնքի պատերի վրա կան 4-ական շրջանակներ: Սրանցից
2-ը ծառայում են իրեն դռներ:

Այսպիսի չորանոցի համար հարկավոր ե 64 շրջանակ:

Ծխախոտի թելերը տեղավորվում են չորանոցի լայնու-
թյամբ 6—8 հորիզոնական շերտով:

Այսպիսի չորանոցների համար հարկավոր են նոսր խսիր-
ներ, շոգ ժամանակ ե գիշերը ծածկելու համար:

Վառարանները շինվում են չորանոցի կողքերից: Սողո-
վակները դետեղվում են չորանոցի լայնքով:

Ապակյա չորանոցներում ծխախոտը չորացնելու համար
պետք ե պահպանել հետևյալ կանոնները.—

1. Շոգ օրերին, չորանոցներում պահանջված բարեխառ-
նությունը պահպանելու համար, նրանց պետք ե ստվերել
արևից:

2. Յերեկոյան պետք ե վառարանները վառվեն: Հակառակ
դեպքում ծխախոտը կսառչի եւ նրա վրա գոլորշի կնստի:

Անհրաժեշտ ե նաև չորանոցները ծածկել խսիրներով:

Այս չորանոցների թերությունները հետևյալներն են.—

1. Ջերմության ե խոնավության անհավասարաչափու-
թյուն:

2. Դժվար ե ցուրտ ե քամի որերին բարձր ջերմություն
առաջացնել:

3. Սովորական տաքացվող շենքերի (արհեստական չորա-
նոցների) համեմատությամբ, ծխախոտի չորացումն ուշա-
նում ե 2—3 օրով:

4. Ծխախոտը դժվարությամբ ե տեղավորվում ե դուրս
հանվում:

5. Չորացումից հետո ծխախոտի թեթեակի խոնավաց-
ման համար յերկար ժամանակ ե պետք:

Դ. ՉԱՆԱՉԱՆ ՁԵՎԵՐԱԿ, ՉՈՐԱՅՈՒՄԻ

Այսպիսի չորացումը նրանումն է կայանում, վոր ծխախոտը մասամբ դեղնեցվում է ու չորացվում արևով, այնուհետև տեղափոխվում արհեստական չորանոցը: Չորանոցում ծխախոտը մնում է 2—3 օր: Հետևապես սեղոնի ընթացքում ավելանում է չորանոցի բեռնավորման ժամանակը:

Չուտ արվեստական չորացման համեմատությամբ, այս ձևի չորացումը ձեռնառու է: Նրա համար հարկավոր են շատ մարագներ, շրջանակներ (վաղոններ), ճանապարհներ, չորացման բակի մեծ տարածություն և շատ աշխատանք:

Դ. ԾՆԱՆՈՏԻ ԹՓԵՐԻ, ՖԻԼԻՉՆԵՐԻ ՅԵՎ, ԳԱԶԵԼՆԵՐԻ ՉՈՐԱՅՈՒՄԸ

Թփերով հավաքված և դեղնեցման համար փայտիկների վրա շարված ծխախոտը դրվում է կիսականգնած դիրքով, ցողունների ծայրերը ներքև, փափուկ ծոցով վրա, վորպեսզի տերևները չճմլվեն:

Ծխախոտը տեղավորվում է անորոշ յերկարությամբ ու լայնությամբ կույտերով, սովորաբար մեկ մետրի վրա:

Դեղնեցումը վերջացած է համարվում, յերբ ավելի հասուն տերևներն ստանում են լավ նկատելի դեղին յերանգ, իսկ վերին տերևներն այդ ժամանակ դեղնում են ծայրերից:

Հարկավոր է շարունակ հետևել դեղնացման, դիտելով կույտի մեջտեղը: Տաք յեղանակին դեղնեցումը տևում է 2 օր:

Յեթե յերկար ժամանակ ծխախոտը չի դեղնում, առանց դրան սպասելու նա պետք է կախվի չորանալու համար: Հակառակ դեպքում յերկար մնալով կույտի մեջ, նա կարող է սևանալ և վերցնելիս տերևները կթափթվին: Դրանով կստեղծվի ավելորդ աշխատանք—թափված տերևների հավաքումն ու շարելը:

Դեղնեցրած ծխախոտը կախվում է հատուկ մարագներում վորոնք պետք է լավ ոդափոխվեն և միևնույն ժամանակ ապահով լինեն վատ յեղանակի ազդեցությունից:

Այսպիսի մարագում փայտիկներին շարված ծխախոտը տեղավորվում է մի քանի շարք գերանների վրա:

Ներքևի շարքը գետնից պետք է բարձր լինի մեկ մետր:

Շարքերի միջև տարածությունը պիտի լինի 1—1,5 մետր: Շարքերում փայտիկների միջև, յեթե սրանք կախված են, բավական է 10—20 սմ տարածություն: Յեթե չորացնելու համար կախվում է թարմ, չդեղնեցրած ծխախոտ, փայտիկները կախվում են ավելի խիտ, մարագի շուրջ անցքերը փակվում են:

Մեկ տոնն չոր տերև և ցողուն ստանալու համար հարկավոր է 143 խորանարդ մետր՝ յերկու անգամ չորացնելով, իսկ մեկ տոնն միմիայն չոր տերև ստանալու համար—286 խոր. մետր տերև:

Իսկ սովորական, արևով չորացման ժամանակ, մեկ տոնն չոր տերևներ ստանալու համար սրանցից հարկավոր է 133 խորանարդ մետր 4 անգամ չորացնելու դեպքում:

Թփերով հավաքված ծխախոտը կարելի է չորացնել նաև տաք ցողուններում, վորոնց բարձրությունը 1,25 մետրից պակաս չպիտի լինի:

Արհեստական չորացման պայմանները նույնն են, ինչ վոր ցողուններից կտրված տերևների չորացման ժամանակ:

Ֆիլիչները չորացման համար պատրաստվում և չորացվում են այնպես, ինչպես և գլխավոր տերևները:

Բայց, վորովհետև ֆիլիչները քերքահավաք տեղի յեռանում գլխավորապես աշանը, ուստի ֆիլիչներն արհեստականորեն են չորացվում:

Գազելներն անմիջապես չորացվում են նրանց բուսած տեղում, յեթե ցրտերից հետո յերկար ժամանակ տաք յեղանակ է լինում:

Հակառակ դեպքում գազելները չորացվում են տաքացվող շենքերում, համարյա նույնպես, ինչպես և ծխախոտի տերևները:

**ԱՇԽԱՏԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՈՒՅԺԵՐԻ
ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐԲԱՀԱՎԱԲՄԱՆ
ՈՒ ՉՈՐԱԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

Բերքահավաքման ժամանակ կատարվում են մի շարք
չափազանց կարևոր աշխատանքներ, վորոնցից կախված է
ամբողջ տնտեսական տարվա հաջողությունը:

Բերքահավաքման ժամանակ հիմնական աշխատանքներն
են՝ ծխախոտի տերևահատը, տեղափոխությունը, թելումն
ու չորացումը: Այս աշխատանքների մի մասը կատարվում է
գաշտում, իսկ մյուս, մեծ մասը—ծխախոտի շենքերում:

Ծխախոտի բերքահավաքն ու չորացումը սովորաբար
տևում է 40—60 օր:

Այս շրջանում ամբողջ բրիգադներն զբաղված են աշխա-
տանքներով: Նույնիսկ ֆերմաների վարիչներն ու կոլտնտ-
վարությունները աշխատանքի ժամանակ ուրիշ մասնա-
ճյուղերից կոլտնտեսականներ են ուղարկում ծխախոտի վրա
աշխատելու համար:

Մենք արդեն ասել ենք, վոր իր ժամանակին հավաքված
ծխախոտն ավելի լավ վորակի յե լինում է ավելի շատ բերք
է առլիս է, ընդհակառակը, կոլտնտեսությունը քանակի
ու մանավանդ վորակի կորուստ է ունենում, յերբ ուշաց-
նում է տերևահատը,—տերևները հասնում—չորանում են
և շատ բան կորցնում իրենց կշիռից ու վորակից:

Հյուսիսային Կովկասում ծխախոտը հասունանում է սո-
վորաբար հուլիսի 2-րդ կեսից և այս ժամկետից սկսած
փոքրիկ ընդմիջումներով (4—5 օր) տեղի յե ունենում նրա
բերքահավաքը: Վերջինս ավարտվում է սեպտեմբերի վեր-
ջերին:

Խոշոր տնտեսություններում—խորհրդային ու կոլեկտիվ
տնտեսություններում, վորտեղ ծխախոտի տարածություն
ները մեծ են և նրա տունկը մի ամիս է տևում, թե դաշ-

տային և թե այլ աշխատանքները (տերևահատ, թելում,
վախ տալը, չորացում, վունջ կապելը և այլն) կատարվում
են անընդհատ, մեկը մյուսի հետևից կամ միաժամանակ:
Այս շրջանում աշխատանքների բարդությունն ու բազմա-
զանությունը պահանջում են խորհրդատեսություններից ու
կոլտնտեսություններից՝ իր ժամանակին և լավ պատրաստ-
վել բերքահավաքման կամպանիային: Կոլտնտեսությունների
ու բրիգադների աշխատանքների պլանները, ագրոպլան-
կացագրերը պետք է կազմվեն հուլիսի առաջին կեսին և
մինչև տերևահատի սկիզբը մանրամասն քննվեն կոլտնտե-
սականների ժողովներում:

Բերքահավաքի աշխատանքների պլանում պետք է նա-
խատեսել՝ 1) տերևահատի ժամկետերը, բ) ծխախոտի բեր-
քահավաքի ու չորացման կազմակերպման կազմը, գ) ինչքան
աշխատող, ինքնետար, քարշող ույժ է նյութիղեն և հար-
կավոր, դ) հասարակական սննդի, մանկամուկների կազ-
մակերպում և այլն:

Յուրաքանչյուր բրիգադ կոլտնտեսություն աշխատան-
քային պլանի հիման վրա կազմում է ագրոպլան կարգա-
դիր, վորն իրագործվում է՝ կոլտնտվարությունյան կողմից
հաստատվելուց հետո: Այս տարի յուրաքանչյուր բրիգադ
այնպես հմուտ կերպով պիտի կազմակերպի բերքահավաքն
ու չորացումը, վորպեսզի կոլոստներ չլինեն: Կովկ կո-
լտոտների դեմ—անա յուրաքանչյուր բրիգադի, խմբակի,
կոլտնտեսականի լողունքը: Ամեն մի ծխախոտագործ բրի-
գադ դա կարող է իրագործել, յեթե ճիշտ կազմակերպի աշ-
խատանքը և կարգավորի յուրաքանչյուր կոլտնտեսականի
աշխատանքի քանակի և վորակի ճիշտ հաշվառը:

Ինչպես շենքիցինք, բերքահավաքման ժամանակ արտադ-
րական բրիգադն իր հողամասի վրա աշխատում է ամբողջ
կազմով: Այս հանգամանքը խիստ կարևոր է: Բրիգադի ան-
դամ կոլտնտեսականների հարյուր տոկոսով աշխատանքի
գնալը, խմբակների ճիշտ կազմակերպումն ու դասավորու-
թյունը հողամասերում ու ծխախոտի շենքերում—այս բոլորը

կապահովե բերքի հավաքումն իր ժամանակին և դրանով
կբարեկամե թե ամբողջ կոլտնտեսութեան և թե յուրաքան-
յուր առանձին կոլտնտեսականի դրությունը:

Անցնենք այն հարցին, թե ինչպես պիտի դասավորե-
ույթերը բերքահավաքման ու չորացման ժամանակ: Նախ և
առաջ աշխատանքը պիտի բաժանել այնպիսի մասերի, վո-
րոնք կարող են կատարել առանձին կոլտնտեսականները
կամ խմբակները: Աշխատանքների այսպիսի բաժանումը
հնարավորութիւնն է տալիս վորոշելու, թե գործավարձի
վճիռն ձևն ալիքի ձեռնառու յե կիրառել:

Բերքահավաքման սկիզբը տերևահատն է: Շատ կոլտն-
տեսութեաններում տերևահատի ժամանակ կիրառվում եր
աշխատանքի կազմակերպման հետևյալ մեթոդը. — կադմակերպ-
վում էյին կոլտնտեսականների կամ կոլտնտեսուհիների
ինքնուրույն խմբակներ, վորոնք և կատարում էյին տերևա-
հատի աշխատանքները: Այս խմբակների քաղած ծխախոտը
տարվում եր ծխախոտի մարագը, վորտեղ թելումը կատարում
եր ուրիշ կոլտնտեսուհիների խմբակ՝ սովորաբար պառավներ
կամ գրկի յերեխա ունեցող կանայք, վորոնք չեն կարող
դաշտային աշխատանքի գնալ: Այսպիսով զիմարդկութեան
համար առատ հող կար: Միևնույն ժամանակ տերևահատով
գրադվածները նաև թելում էյին, որվա ընթացքում կատա-
րելով թե մեկ և թե մյուս աշխատանքը:

Սե ծովի ափի և նախկին Կուբանի շրջանի կոլտնտեսու-
թյունները, ցանկանալով կիրառել գործավարձը տերևահատի
ընթացքում և քաղողներին վարձատրել ըստ ծխախոտաթե-
լերի քանակութեան, գործադրում էյին տերևահատի և թե-
լելում մի այլ մեթոդ: Յուրաքանչյուր յերկու թերթի ամբա-
ցնում էյին մի քաղողի: Ամեն մի քաղողի կտրած ծխախոտն
առանձին եր դարսվում և տեղափոխվում: Թելողները թելում
էյին և այսպիսով հնարավոր եր դառնում հաշվի առնել թե
նրանց և թե դաշտում աշխատողների աշխատանքի քանակը:

Կա նաև գործավարձի կիրառման մի յերրորդ ձև, վորը
մեր կարծիքով ամենահարմարն է: Չպետք է յիշարկեց բա-

ժանեկ տերևահատի և թելելու աշխատանքները: Չե վոր
ծխախոտի տերևահատը չի կարելի կատարել վաղ առավոտից
մինչև յերեկո: Ճաշից հետո, շուր ժամերին, յերը ծխախոտը
թողնած է, չի կարելի քաղել: Թելումն էլ շատ լավ կարելի
յե կատարել գիշերը, յեթե չենք լավ լուսավորված է: Այս
ընդորը ցույց է տալիս, վոր տերևահատն ու թելումը պետք
է հանձնվեն միևնույն խմբակին. ուրիշ խոչընդոյ, խմբակն
ինքն է թելում իր քաղած ծխախոտը և աշխատանքի որա-
կան արտադրութի հաշվով ել գրվում և աշխատանքային
որը:

Սկզբնական շրջանում, յերը այս կամ այն խմբակը
կատարում է «ղիպսարի» ու «խաշլամայի» տերևահատը, մի
որվա ընթացքում կկարողանա գլուխ բերել թե տերևահատը,
և թե թելումը:

Հետագայում, յերը կծավալվի մասսայական տերևահատը,
յերը կսկսվի քաղվել նաև անաչը, յերը, վերջապես, ծխա-
խոտը կհասունանա բոլոր դաշտերում, ձեղքված քներից
խուսափելու և քաղած ծխախոտն առանց թելման չթողնելու
համար, պետք է լայնորեն կիրառել զիշերային աշխատանքը
(թելումը), պետք է ոգտագործել պառավների և այն կոլտն-
տեսուհիների աշխատանքը, վորոնք այս կամ այն պատճա-
ռով չեն կարող դաշտում աշխատել: Վերջիններին նույնպես
պետք է ամբացնել վորոշ խմբակներին:

Տերևահատի ժամանակ պետք է կիրառվի մանր-խմբա-
կային, իսկ թելելու ժամանակ — գլխավորապես անհատական
գործավարձը:

Անցնենք մյուս աշխատանքներին և տեսնենք, թե բրի-
դաղը, բացի քաղողների և թելողների խմբակից, ել ինչ
խմբակներ պիտի կազմեն: Աշխատանքը ճիշտ ոգտագործե-
լու և ամբողջ բերքահավաքը նորմալ անցկացնելու համար,
բրիդաղը պիտի կազմակերպի յերկու խմբակ: Մեկը — ծխա-
խոտը տեղափոխելու համար, մյուսը, վոր ալիքի մեծաթիվ
պիտի լինի — չորացնելու համար: Առաջին խմբակի պարտա-
կանութեանն է դաշտում կանաչ (քաղած) ծխախոտը բռնե-


առաջին, տեղ հասցնել և դատարկել թիկնու համար, ու
քաջի այդ, չորանոցի համար փայտ կրել: Չորացման խմբակը
պարտավոր ե՛լ ընդունել կանաչ ծխախոտը (թելած կամ չթե-
լած), ծխախոտաթիկերը կախել շրջանակների, վազոնների
կամ այլ հարմարեցումների վրա, դեղնեցնել, չորացնել արևի
տակ կամ տաքացվող շենքերում, բռնավորել ու դատարկել
չորանոցը, ներս ու դուրս տանել շրջանակները և այլն:
Չորացումից հետո այս նույն խմբակը դատարկում և չորա-
նոցը, ծխախոտը փունջ և կապում և կախում նշանակված տեղե-
րում, կարգի յե բերում չորանոցը, մարաղը և այլ շենքերը:
Ծխախոտը տեղափոխող խմբակում կիրառվում է ան-
հատական գործավարձը. հաշվի յե առնվում, թե ամեն
մեկը քանի սալ ծխախոտ կամ փայտ է տեղափոխել:

Չորացման խմբակում կիրառվում է մանր-անհատական
գործավարձը: Աշխատանքը հաշվի յե առնվում ըստ չորա-
ցրած ծխախոտաթիկերի քանակության: Արտադրույթի
նորմաների հիման վրա հեշտ և հաշվել խմբակների անդամ-
ների քանակը:


Ծխախոտագործ բրիգադը, վորի արտադրական գործու-
նեյությունը տեղի յե ունենում 25 հեկտար ծխախոտի
սահմաններում, պետք է բաղկացած լինի 45 կուտնտեսա-
կաններից: Այսպիսի բրիգադին ամրացնում են տաքաց-
վող չորանոցը և հինգ աչքանի մարաղը: Բերքահավաքման
շրջանի համար կարելի յե առաջարկել խմբակների անդամ-
ների հետեվյալ թիվը.—բերքահավաքման հիմնական խմ-
բակում—քաղողների ու թելոցների խմբակում պետք է
լինի 6 հոգի, իսկ բոլոր խմբակների թիվը 5 է: Այսպիսի
խմբակը կատարում է ծխախոտի տերեվահատն ու թիկումը,
—ինչպես վերել ասացինք, ափելի լավ է, վոր միևնույն
խմբակը թիկի իր քաղած ծխախոտը: Այնտեղ, ուր դա դժ-
վար է իրագործել և այդ յերկու աշխատանքները տարբեր
խմբակներ կամ կուտնտեսականներ են կատարում, քաղող-
ների ու թելոցների խմբակը կարող է բաժանվել յերկու
յենթախմբակների—2 քաղող և 4 թելոց: Սորհուրդ է տրե-

վում աշխատանքն այնպես դասավորել, վոր յենթախմ-
բակների անդամները մասնակցեն թե տերեվահատին և թե
շաբելուն: Այս պետք է անել հետեվյալ նկատառումներով.—

Միևնույն կուտնտեսությունների մշտական մասնակցու-
թյունը տերեվահատին, դաշտերում, վորտեղ աշխատանքն
ավելի ծանր է մանալանդ աշնանային որերին,—առաջ է
բերում արդարացի զգոհություններ և տրտմանքներ. ըս-
տացվում է անցանկանալի հետեվանք,—աշխատանքի չյե-



խմբակները ֆայում ու քիւում են



6 կուտնտեսականներից բաղկացած խմբակը բաժանված է յերկու
յենթախմբակների


ներու դեպքեր: Ահա թե ինչու կուտնտեսականները դաշտա-
յին աշխատանքը պետք է հերթով կատարեն,—դաշտում
աշխատողներն անցնեն շաբելուն, շաբողները—դաշտ, քանի
վոր վերջիններես աշխատանքն ավելի թեթեվ է: Բացառու-
թյուններ կլինեն իհարկե: Արտադրություն շահն աչքի

առաջ ունենալով, վորակյալ թելոդ կանանց չպետք է քաղելու ուղարկել և ընդհակառակը:

Տերեվահատը կատարողների պարտականության մեջ են մտնում նաև ծաղկահատման ու ֆիլիչների կտրատման աշխատանքները: Վերջիններս կարող են կատարվել տերեվահատի ընդթիջումների ժամանակ և մեծ ծախքեր չեն պահանջում:

Մեր բերած սքեմաները ցույց են տալիս, թե ինչպես պիտի կազմվեն քաղողների և թելոդների խմբակները՝ ըստ կոլտնտեսության սահմանած բերքահավաքման ու թելելու ձևերի:—

Բրիգադն, ինչպես ասացինք, կազմում է տեղափոխման խմբակ: Սա բաղկացած է սայլապանից և մեկ անչափահասից, վորը ծխախոտ է կրում: Յերեք այսպիսի խմբակ-



Ծխախոտագործ բրիգադի ուժերի դասավորությունը ծխախոտի բերահավաքման ժամանակ

ները կարող են սպասարկել բոլոր տերեվահատող և թելոդ խմբակներին, ինչպես և փայտ մատակարարել չորանոցներին: Վերջապես, չորացման խմբակը բաղկացած է 12 կոլտնտեսականներից, վորնցից յեքիսուն ամբացվում են տաքացվող չորանոցին, հերթով աշխատում են զիշերն ու ցերեկը: Մնացածներից յուրաքանչյուր յեքիսուն ամբացվում են ծխախոտի մարագի մի բաժանմունքին (աջերին):

Բերքահավաքումն ու չորացումն ամենապատասխանատու մոմենտներն են ծխախոտի նախնական մշակման ընթացքում: Այս շրջանում կատարված սխալները հետագայում անուղղելի չեն և բերքի կորստի մեծ պատճառ են դառնում: Իսկ այս աշխատանքների ճիշտ և խնամքով կատարումն, ընդհակառակը, բարելավում է արտադրանքի վորակը և ապահովում հետագա աշխատանքների հաջողությունը: Բերքահավաքումն ու չորացումը ժամանակին կատարելու համար անհրաժեշտ է բարձրացնել արտադրությունի նորմաները և աշխատանքի արտադրողականությունը: Սոցիալիստական մրցույթյունն ու հարվածայնությունը— լավագույն գրավականներն են կորուստների դեմ պայքարելու, կոլտնտեսության աշխատող ձեռները նպատակահարմար կերպով ոգտադործելու և բարձր բերք, վորակավոր ծխախոտահումույթ ստանալու համար: Սոցիալիստական ժրջմանը պետք է մասնակցեն թե առանձին խմբակները և թե կոլտնտեսականները:

Ծխախոտի բերքահավաքման և չորացման շրջանում յուրաքանչյուր կոլտնտեսականի, խմբակի և ամբողջ բրիգադի հիմնական լոզունդը պիտի լինի:—

Պայքարել կորուստների դեմ, պայքարել սոցիալիստական բերքի պահպանման համար:

ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐԲԱՅԱՎԱԿՄԱՆ ՈՒ ՉՈՐԱՑՄԱՆ ԱՃԻՍՏԱՆԲՆԵՐԻ ՄԵԲԵՆԱՅԱՑՈՒՄՆ ՈՒ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ

Աշխատանքի պրոցեսների մեքենայացումը մեզ համար այն նոր և վճռական ուժն է, առանց վորի անկարելի չէ իրագործել վոր մեր տեմպերը, վոր եւ արտադրությունն ու արդյունքները:

Ծխախոտագործությունի մեքենայացման և ռացիոնալացման հարցին ներկայումս շատ մեծ նշանակություն է տրվում:

Ծխախոտի և մախորկայի աշխատանքների մեքենայացման առաջին համամիութենական համագումարը, վորը տեղի ունեցավ Մոսկվայում, 1931 թվականի նոյեմբերի 24—27-ին, —տվեց ծխախոտագործության մեքենայացման ու ռացոնալացման հանրագումարը և մատնանշեց այն հիմնական ուղիները, վորոնցով պիտի հետադաշուվ ընթանա բանվորների ու կոլտնտեսականների դյուտարարական միտքը:

Համագումարը շեշտեց, վոր «ծխախոտի կոլչոսուրայի մեքենայացումը անհմարից է կապիտալիստական ճնշեցության օրգանակներում, մանր, անհասական գյուղացիական ճնշեսուրյուններում, առաջին անգամ ամբողջ աշխարհում հնարավոր է խոսոր խորճեսուրյան ու կոլչեսեսուրյան մեջ»:

Սոցիալիստական ծխախոտագործության զարգացման «նեղ տեղը» հանդիսանում են՝ բանվորական ուժեր, մեքենաների բացակայությունը, վորի պատճառով ահագին քանակությամբ աշխատող ձեռքեր են պահանջվում: Ծխախոտագործական ուսյոններում, խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում ստեղծվում է աշխատանքի չափից դուրս լարվածություն, մանավանդ վոր հաճախ բացակայում է այդ աշխատանքի լավ կազմակերպությունը և ուժերի ճիշտ դասավորումը:

Այսօրվա հիմնական խնդիրն է՝ ծխախոտագործության մեջ ձեռքի աշխատանքը փոխարինել մեքենայականով, մանավանդ ծխախոտի բերքահավաքման ու չորացման աշխատանքները, վորոնք ահագին ճիգ ու ջանք են պահանջում, ներկայումս ինչ դրության մեջ են գտնվում ծխախոտի բերքահավաքման ու չորացման մեքենայացումն ու ռացիոնալացումը:

«Մոյուզտարակ»-ի դյուտարարական բրիգադը քննել է թելող մեքենաների 130 նախագիծը: Պատրաստվել է 300 հատ թելող մեքենա, վորի նախագիծը տվել է ընկ. Մելի-պովը: Մակայն այս մեքենայի արտադրողականությունը մեծ է, —մոտավորապես որական 25—30 թել:

Հյուս. կովկասի Ղրիմի ռայոնի Նորը կայարանի մոտ գտնվող № 6 ծխախոտագործական խորհտնտեսության մեջ փորձնական թելող մեքենաներ են պատրաստվում ընկ. Շեկեստի և Պոտոպովի ջանքերով:

Մրանք պետք է փորձվեն 1932 թվի բերքահավաքման կամպանիայի ժամանակ: Այս մեքենայի արտադրողականությունը, դյուտարարների ասելով, հավասար կլինի որական 1000 թելի:

«Տարակսիրյո»-յի Հյուսիսային կովկասի յերկրային գրասենյակն ավարտում է ընկ. ընկ. Լիսաչենկոյի և Ռուդիկովի—Ապշերոնյան ռայոնի Տվերեկայ գյուղի կոլտնտեսականների թելող մեքենաների գծագրությունը:

Գծագրություն ավարտելուց հետո, Ռոստովի գործարաններից մեկին պատվեր կարվի այդ մեքենայից մեկ-յերկու հատ պատրաստելու համար, վորոնք փորձի կյենթարկվեն:

Մեծ ուշադրության են արժանի ընկ. ընկ. Լեյբովսկու և Տեմազովի թելող մեքենայի նախագծերը:

Ընկ. Լեյբովսկու հնարած մեքենան 10 ժամվա ընթացքում շարում է 40—50 թել և նրա վրա մեկ բանվոր է աշխատում:

Ընկ. Տեմազովի մեքենան, համաձայն նախագծի, յերկու բանվորով սպասարկվելու դեպքում, որական շարում է 800—1000 թել:

Բայց և այնպես, այս տարի ծխախոտը թելելու հարցը չի կարելի լուծված համարել:

Ծխախոտի բերքահավաքման մեքենաների մի քանի նախագծերից չկա մեկը, վորը գործնականապես ռզտագործվի: Բացառություն է կազմում գյուղաանտես Մորոկովի հնարած տերեվահատիչ մեքենան, վորն այժմ փորձի յե յենթարկվում:

Բերքի հավաքման վերաբերող ռացիոնալիզատորական առաջարկներից պետք է հիշել այն առաջարկը, վորով ծխախոտի բերքահավաքը ավելի պարզ ձևով է կատարվում

(քաղվում եւ ամբողջ բույսը, կրճատվում եւ տերեւահատը —5—6-ի փոխարեն մինչեւ 3 տերեւահատ)։ Այդպիսի տերեւ-
վահատը նկարագրված եւ գրքիս յերկրորդ, «Ժխախոտի
բերքահավաքը» գլխում։

1931 թվականին ծխախոտագործական Համամիութենա-
կան Ինստիտուտի փորձերը ցույց են տվել, վոր բերքահա-
վաքման պարզացրած բոլոր ձեւերից ավելի շատ չոր ծը-
խախոտ եւ տալիս այն ձեւը, վորով տերեւները հավաքը
կատարվում եւ 3 անգամ։

Պետք եւ ինկատի ունենալ, վոր ծխախոտի բերքահավաքի
հեշտացման խնդիրները դեռեւս բավականաչափ մշակված չեն,
ուստի և հնարավոր չեւ փորձակի բան ստել այդ հեշտացման
ձեւերի մասին, վերջիններս դործնականում կիրառելու մասին։

Այստեղ դեռեւս շատ անելիք ունեն գիտական-հետադո-
տական հիմնարկները, խորհրդատեսությունների բանվոր-
ների ու կոլտնտեսականների, ծխախոտագործության մաս-
նադեւաների միտքը։

Առանձին հետաքրքրության եւ արժանի այն հարցը,
թե արդյոք կարելի՞ յեւ ծխախոտի տերեւները չորացնել
առանց թեւելու։

Ահա այդ մասին ինչ եւ դրում Արմավիրի ապկորտնո-
ւթության ազրո տեխնիկ Ընկ. Պաղերյանը.—

«Ծխախոտագործական հիմնական ուսյոններում, բան-
վոր ձեռքերի պակասության պատճառով, ծխախոտի մի
մասը չհավաքվելու սպառնալիք եւ ստեղծվում։ Ծխախոտի
բերքահավաքման շրջանում բանվորական ույժը և նյութ-
թեղները ինայելու, չոր ծխախոտի մշակումն արագացնելու
նպատակով ձեր ուղղորդությունն եւ հրավիրում իմ հետեւ-
յալ առաջարկի վրա, վորն եյապես փոխում եւ ծխախոտա-
գործական ուսյոններում մինչեւ այժմս գործադրվող բեր-
քահավաքման, չորացման և հետագա մշակման ձեւերը։

Ինչպես հայտնի յեւ, ծխախոտի թելումն այն աշխա-
տանքներից մեկն եւ, վորը շատ բանվորական ուժ, այն
եւ վորակյալ ուժ եւ պահանջում։ Յեթե մեկ հեկտարից մի-

ջին թվով ստացվում եւ 1300 թել և թելոդները համար
սահմանված եւ միջին թվով որական 20 թել, ապա հարկա-
վոր եւ 65 աշխատանքային ուր։ Վորքան ինձ հայտնի յեւ,
մինչեւ այժմ ծխախոտագործության ապրիոնալիդատորներն
աշխատել են մեքենայացնել աշխատանքի առանձին տե-
սակները, մասնավորապես հնարել այնպիսի մեքենաներ,
վորոնք կարող են փոխարինել ձեռքով կատարվող թելումը։
Արդեն հնարված այդպիսի մեքենաների մի քանի տեսակները
դեռեւս գրական արդյունք չեն տվել։ Իսկ յեւ առաջարկում
եւ՝ ծխախոտի բերքահավաքման ու չորացման բոլորովին
ուրիշ մեթոդ, վորը վերացնում եւ թեւ ծխախոտի շարելը թելի
վրա, թեւ թելած ծխախոտը վադոնների վրա կախոտելը և թեւ
մի ամբողջ շարք ուրիշ մանր աշխատանքներ։

Ունենալով ծխախոտամշակման մի քանի տարվա փոր-
ձառություն, ուսումնասիրելով աշխատանքների առանձին
մասերը՝ սրանց մեջ պարզություն մոցնելու նպատակով,
յեւ դիտողությունների շնորհիվ յեկա հետեւյալ յեղրակա-
ցության—առաջացրած չորանոցում, վորտեղ հենց նոր եւ
ծխախոտ գրված, թաց ծխախոտի պատահամբ ընկած տե-
քեվը յեթե դրվի գերանի կամ մի այլ տաարկայի վրա,
այսինքն, կախված չլինի, կչորանա ձիշտ նույնպես, ինչպես
և թելերի վրա գտնվող տերեւները։ Այսպիսով տերերը
և չորանում եւ անկախ նրանից, թեւ նա կախված եւ, թեւ մի
վորեմբ բանի վրա դրված։

Ցանկանալով ստուգել դիտողությունս, յեւ փորձի հա-
մար վերցրի յերկու թել ծխախոտ և նույնքան քանակու-
թյամբ չթելված ծխախոտ, յերկու մասն եւ միատեսակ տե-
րեւահատից և միջիննույն հասունությամբ, և դրի հատկա-
պես շինված արկղի մեջ։ Արկղի հատակի փոխարեն դրված
եւ քամհար մեքենայի դատարկ մաղը։ Արկղի պատերի
25—30 սանտիմետրի (միշակ
բարձրությունը հասնում եւր
տերեւի յերկարությունը), իսկ արկղի ամբողջ յերկարությամբ
դրվազաթերթից շինված եյին նույնպիսի բարձրությամբ
միջապատեր մեկ-մեկուց 5—6 սանտիմետր հեռու։

ինչպես արկղի յերկու հակադիր պատերը, այնպես եւ միջապատերը մի փոքր թեքված ելին և նրանց մեջ յես տեղավորեցի չթելած ծխախոտը, պոչերը ներքեվից: Արկղը տեղավորեցի չորանոցում: Նրա կողքին կախեցի թելած ծխախոտը: Հենց վոր ծխախոտը չորացավ, յես նախեցի թե կախված և թե արկղի մեջ դրված տերեւները և նրանց վորակի մեջ եյական տարբերություն չգտա:

Այս փոքրիկ փորձից յես համոզվեցի, վոր յեթե լայն մասշտաբով անցնենք իմ ասած մեթոդով ծխախոտի չորացման, մի ամբողջ շարք աշխատանքներ ավելորդ կդառնան, որինակ, դաշտից բերած ծխախոտի դարսելը, թելումը, թելերի կախ տալը վագոնների վրա և այլն: Կենա յերեք աշխատանք.— տերեւների կտրատելը, արկղների մեջ դարսելը և չորացնելը:

Հիմնվելով վերոհիշյալի վրա, յես առաջարկում եմ ծխախոտն առանց թելելու չորացնել այն բոլոր դայոններում, վորտեղ ծխախոտը չորացվում և տաքացրած չորանոցներում: Դրա համար հարկավոր և հետեւյալը.— ծխախոտադործական խորհրդատեսություններում ու կոլտնտեսություններում թելած ծխախոտը կախ տալու վագոնները վերածել աղիղ—վագոնների, վոնց վոր իմ փորձնաչան արկղը: Այդ արկղ վագոնների հատակը պիտի լինի յերկաթալարերից շինված խիտ ցանց, կամ խիտ ծակոտիներով ստվարաթուղթ, վորպեսզի ողջ հավասարաչափ անցնի: Արկղ-վագոնների կողքի պատերը կարելի յե շինել բարակ տախտակներից, իսկ յերկու հակադիր պատերը պետք և քիչ թեքված լինեն: Արկղ-վագոնի մեջ հարկավոր և ստվարաթղթից կամ այլ նյութերից միջապատեր շինել, իրարից 4—5 սանտիմետր տարածությամբ և 30 սանտիմետր բարձրությամբ: Միջապատերը նույնպես պետք և քիչ ծուրը լինեն: Ծխախոտի մարագներում և չորանոցներում մնացած բոլոր կառուցվածքները նույնն են մնում, միայն այն տարբերությամբ, վոր թե չորանոցներում և թե մարագներում արկղ-վագոնները պիտի տեղավորվեն հորիզոնական դիր-

քով, վորպեսզի նրանց ուրիշ դիրք տալիս ծխախոտը չըթափվի: Դրա համար անհրաժեշտ և թե չորանոցներում և թե մարագներում հորիզոնական դիրքով ամրացնել բարակ, քառակուսի տախտակներ, վորպեսզի չորանոցներն ու մարագները մեծ տարողություն ունենան (ինչպես տաքացվող չորանոցներում, վորտեղ վագոնները տեղավորված են հորիզոնական դիրքով և վորտեղ սովորաբար լինում են 6 շարք բարակ, քառակուսի տախտակներ): Վագոն-արկղները նույնպես տեղավորվում են այդ տախտակների վըրայով: Այսպիսով վերասարքավորելով վագոնները, բերքահավաքման աշխատանքները պետք և կայանան հետեւյալում.—

1) Ծխախոտի տերեւահատը, 2) Նրա տեղավորությունը դաշտերից դեպի մարագները, 3) Թաց ծխախոտի տեղավորումը վագոն-արկղների մեջ: Արկղ-վագոնների մեջ ծխախոտը տեղավորվում և հետեւյալ կերպ.— ծխախոտով բռնված ուսյը մոտեցնում են մարագին, դատարկ արկղ-վագոնը—սույին: Ծխախոտը հավասարաչափ դասավորվում և միջապատերի արանքում, արմատները ներքեւ: Վորովհետեւ միջապատերն, ինչպես վերելում ասացինք, մի փոքր թեք են շինված, ուստի նրանց վրա տերեւները կլինեն կիսապառկած դիրքով: Յերբ մի վագոն-արկղը լցվում և, նա տեղավորվում և չորանոց, կամ մարագի մի ազատ տեղ: Այնուհետեւ մոտեցնում են սույլին մի այլ դատարկ վագոն-արկղ և այլն:

Սակայն ծխախոտն առանց թելելու չորացնելիս, մեր առաջ կանգնում և նրա հետագա պահպանության և փուռնջ կապելու հարցը:

Յես առաջարկում եմ այդ հարցը լուծել հետեւյալ կերպով.— յուրաքանչյուր ծխախոտի պլանտացիայում, խորհրդատեսության կամ կոլտնտեսության մեջ տաքացվող չորանոցի կողքին պետք և ունենալ չոր ծխախոտը խոնավացնելու շենք, վորի համար կարելի յե հարմարեցնել չորանոցներից մեկը կամ մարագի մի բաժանմունքը: Այդ շենքի դրսից պի-

տի լինի վառարան և ջրով լի տակառ: Շենքում պիտի անցկացվեն մի քանի շոգեատար խողովակներ, ձխախոտը հավասարաչափ խոնավացնելու համար: Շենքի մեջ տարվում են չոր ձխախոտով լցված վագոն արկղները, վորոնք դուրս են բերվում ձխախոտի խոնավանալուց հետո:

Սոնավացման վրա աշխատում ե բանվորական ույժի այն մասը, վորն առաջ զբաղվում եր ձխախոտը թեկելով, թե-լած ձխախոտը կախելով ե այլ աշխատանքներով:

Ցածր տեսակի ձխախոտերը, վորոնք կարող են մշակվել հասարակ ձեւով, այսինքն, առանց խոնավացման, հակ են կապվում (ինչպես դիպարը 1930 թվականին): Ցեթե բանվորական ույժի պակասության պատճառով անհնար ե իսկույն և յեթ սկսել խոնավացումը կամ հակ կապելը, կամ յեթե անհրաժեշտ ե ձխախոտը պահպանել մինչև խո-նավացումը, կարելի յե խոնավացումից հետո ձխախոտը դարսել հատկապես շինված տախտակամածի վրա, ամուր փակվող պահեստներում կամ մարաղներում:

Իհարկե արհեստական խոնավացում պետք ե կատարել միայն այն դեպքում, յեթե հույս չկա, վոր ձխախոտը գի-շերվա ընթացքում կյենթարկվի խոնավ ոգի ազդեցության:

Անցնելով իմ առաջարկած բերքահավաքման, չորաց-ման ու ձխախոտի հետագա մշակման մեթոդին, մենք ահա թե վորչափ խնայողություն կունենանք թե բանվորական ուժի և թե բերքահավաքմանն անհրաժեշտ նյութերի ծախսման մեջ.—

1. Ցեթե մեկ հեկտարից ստացվում ե 1300 թեկ ձխախոտ և մեկ մարդու որական արտադրութի նորման 20 թեկ ե, խնայվում ե 65 մարդ-որ (այսինքն, կրճատվում ե 65 մար-դու մեկ որվա աշխատանքը):

2. Ցեթե նորմայի համաձայն 1 մարդն որական կախում ե ձխախոտի 100 թեկ, խնայվում ե 13 մարդ-որ:

3. Վերացվում են մի ամբողջ շարք աշխատանքներ, ո-րինակ, չչարված, մնացած ձխախոտի դարսումը, շարված ձխախոտի տեղափոխումն ուրիշ տեղ և այլն:

Թեկումը վերացնելու միջոցով մենք ընդամենը խնայում ենք 80—90 մարդ-որ:

4. Վերանում ե թեկերի, ասեղների կարիքը:

5. Թեկելու և կախ տալու դեպքում ձխախոտի տերեվ-ները ճմլվում են, պատռվում են վագոնների մեխերից, իսկ արկղների մեջ դարսելիս այդ չի լինում:

6. Վերացվում ե հրդեհի վտանգը: Թեկելու դեպքում հաճախ հրդեհ ե առաջանում նրանից, վոր թույլ ամբաց-լած տերեվներն ընկնում են տաք խողովակների վրա և բռնկվում:

7) Նոր ձեւի ամենակարեւոր առավելություններից մեկը նրանումն ե կայանում, վոր շնորհիվ այնպիսի մանրակր-կիտ աշխատանքների վերացման, ինչպիսին են՝ թեկումը, վախ տալը և այլն, ազատվում են աշխատող ձեռքեր, վո-րոնք կարող են ոգտագործվել չոր ձխախոտը մշակելու համար: Հետեւապես բերքահավաքն ու հետագա մշակումը կարող են կատարվել միեւնույն ժամանակաշրջանում և ավարտվել նոյեմբերի 1-ին: Սա հսկայական կարեւորու-թյուն ունի մթերող կազմակերպությունների համար, վո-րոնք կարող են ձխախոտի մթերումն ավարտել 5—6 ա-միս առաջ և տեղափոխել ձխախոտը մինչև ձմեռվա ճա-նապարհների հաղորդակցության դժվարանալը: Վերջապես առ մեծ կարեւորություն ունի նաև սոցիալիստական ար-դյունաբերության համար, քանի վոր ձխախոտն ավելի շուտ ե հասնում ֆարերիկներին:

Ծխախոտի չորացմանը վերաբերող ռացիոնալիզատորա-կան առաջարկներից մեկն ևս արժանի յե ուշադրության, այն ե՝ շրջանակները (վագոնները) հարմարեցնել փոքրիկ անիվների վրա, իսկ նրանց ճանապարհի վրա այս դեպ-քում պետք ե ձգվեն յերկաթե ձողեր:

Խորհատնտեսություններն ու կոլտնտեսությունները հեշ-տությամբ կարող են իրագործել այս առաջարկը: Կարեւոր ե գիտենալ, վոր այս դեպքում վագոնների տեղափոխման վրա աշխատողների թիվը կկրճատվի 50—60 տոկոսով:

Բոլոր մեր ասածները համոզիչ կերպով ցույց են տալիս, վոր ներկայումս ծխախոտի բերքահավաքման ու չորացման մեքենայացումը խիստ անբավարար է: Դեռ ևս կիրառվում են բերքահավաքման ու չորացման հին մեթոդները, վորոնք անագին քանակությամբ մարդկային ուժ են պահանջում:

Վերջին հանգամանքը բաբախում է նաև նրանով, վոր ծխախոտագործական ռալոններն այնքան էլ հարուստ չեն աշխատող ձեռներով: Հետեվանքն այն է լինում, վոր տուժում են ծխախոտի բերքի քանակն ու վորակը:

Պարզ է, վոր մեքենայացման ալալիսի գրության և բաղաալես ձեռքի աշխատանքի գործադրության պատճառով, շատ դժվար է խոսել ծխախոտի ինքնարժեքի իջեցման մասին:

«Յերեսով դեպի սոցիալիստական տիկնիկն», դեպի ծխախոտագործության ինդուստրացումը» — ահա ալսորվա լողունգը դիտական մաքի ներկայացուցիչների, բանվոր գլուտարարների և գիտական-փորձական հիմնարկութլունների, վորոնք աշխատում են ծխախոտագործության ասպարեզում:

ԳԼՈՒԽ ՅՈՐԹԵՐՈՐԴ

ԾԽԱԽՈՏԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՎՆԱՍՏՈՒՆԵՐՆ ՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ԿՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բերքի համար մղվող պալքարը սոցիալիստական յերկրագործության կենտրոնական խնդիրն է: Բարձր բերքի համար կիրառվող մեխուառումների շարքում նշանակալից չեր է խաղում սոցիալիստական բերքի պաշտպանութլունը վնասատուներից և հիվանդութլուններից:

Ծխախոտի վնասատուներն ու հիվանդութլուններն ամեն տարի միլիոնների համաող վնասներ են տալիս սոցիալիստական ծխախոտագործության, մեծ հափով պակասեցնելով բերքի քանակն ու վորակը:

Վնասատուների ու հիվանդութլունների դեմ՝ ծրագրված ու նիստեմատիկ պալքար մղելու համար, հարկավոր են ճշգրիտ տեղեկութլուններ յուրաքանչյուր ռալոնում, թե ալս կամ ալն վնասատուները յներ են յերեվում, ինչ հափով են տարածվում և ալն:

Ալս խնդիրը կատարում է մի խմբակ, վորը կազմակերպված է Ծխախոտագործության. Համամիութենական ժնստիտուտի ծխախոտի պաշտպանության բաժնին կից:

Իր աշխատանքների ընթացքում խմբակը պիտի հենվի՝

1) Հսկիչ կալանների վրա, վորոնք պիտի կազմակերպվեն բոլոր ծխախոտագործական ռալոններում և՝

2) Թղթակիցների վրա, վորոնք պիտի ընտրվեն յուրաքանչյուր խորհանտեսության, կոլտնտեսության մեջ և յուրաքանչյուր ծխախոտագործական ապրանքալին ֆերմալում:

Թղթակիցների և հսկիչ կալանների ցանցը կազմակերպելու համար, Ծխախոտագործական Համամիութենական ժնստիտուտին պետք է ոգենն խորհանտեսութլունները, կոլտնտեսութլունները, յերկրկոլտնամիութլունները, «Տաբակսերլո»-ի կազմակերպութլունները, ՀԿ(Բ)Կ, ՀամԼԿՅԵՄ քլիջները, Պաջը-Ավիաքիմը, գլուղատնտեսները, ուսուցիչները և ալն:

Վորքան լավ կազմակերպվի ու կատարվի ալս աշխատանքն, ալնքան լավ կպաշտպանվի ծխախոտը վնասատուներից և հիվանդութլուններից, ալնքան շատ բերք կատանաք մենք մեր խորհանտեսութլունների ու կոլտնտեսութլունների ծխախոտաղաշտերից:

Ծխախոտի բերքահավաքի և չորացման շրջանում մենք ինչ վնասատուների և հիվանդութլունների դեմ պիտի պալքարենք:

Ալգ վնասատուներից են՝

1. Մարգալին թիթեռ — փոքրիկ միջատ է, դեղին — գորշ գունի, առկի թևերի ծալրին ունի յերկու թուխ շերտ:

Մարգալին թիթեռը (пугавой матилло) ծխախոտի հատուկ վնասատու չե, բալց և ալնպես, նրա թրթուրը յեր-

բեմն զգալի ֆլաս և հասցնում ծխախոտին, ուտելով կամ ծախոտելով նրա տերևները:

Թռչելով մայիս ամսին, թիթեռը ձու յե դնում մոլախոտերի (թրթնջուկ, սագախոտ, թայլ և այլն) վրա:

Հունիսին յերևան են գալիս խիստ շարժուն և ազա՜ծ թրթուրները, վորոնք զգալի ֆլաս են հասցնում ծխախոտին:

Մեծացած թրթուրներն ունենում են մինչև 35 միլիմետր յերկարություն: Նրանք լինում են գուշ կանաչ կամ կինամոնադույն: Թրթուրների զուգը սև է, մեջքի վրա կան թուխ շերտեր, վորոնք կողքերից դեղին են:

Թրթուրները հարմնյակ են դառնում հողի մեջ, նրա մակերևույթին մոտիկ:

Սովորաբար լինում է թրթուրների յերկու սերունդ, իսկ մի քանի տարիներում—նույնիսկ յերեք:

Մարգային թիթեռի դեմ պայքարելու համար հարկավոր է հողը վարել մոտ 18 սանտիմետր խորությամբ, վոչնչացնել մոլախոտերը, ծխախոտադաշտի մոտ յերկար փոսեր փորել, վորոնք պիտի ունենան սեպածև, հավասարաչափ, 30 սանտիմետր խորությամբ պատեր և պիտի գտնվեն այնտեղ, վոր տեղից սողում են թրթուրները: Փոսերի մեջ, յուրաքանչյուր 5—10 մետրի վրա փորվում են 30 սմ խորությամբ նոր փոսեր: Փոսերի մեջ ընկած թրթուրները ճղվում—վոչնչանում են:

Կարելի յե այդ փոսերի մոտ լցնել կանաչեղեն, վոստեր, արևածաղկի տերևներ և այլն, վորոնք պետք է թունավորված լինեն փարիզյան կանաչով, մլնդեղի նատրիյով, նավթով և այլն:

Հենց վոր թրթուրները յերևան մոլախոտերի կամ գյուղատնտեսական բույսերի վրա,—վորոնք ծխախոտի մոտ են գտնվում—հարկավոր է անմիջապես թունավորել նրանց,—այդ մոլախոտերի և բույսերի վրա սրսկել կամ շաղ տալ համապատասխան թույներ:

Այդ թույներն են՝ փարիզյան կանաչը, մլնդեղը, քլորաֆին բարիումը:

Պետք է հիշել, վոր բերքահավաքից անմիջապես առաջ կամ նրա ժամանակ չի կարելի թույն սրսկել կամ ցանել ծխախոտի վրա, վորովհետև դրանից կարող է տուժել ծխախոտի համն ու հոտը:

Ծխախոտի քրիպը—դա հասակավոր միջատ է, ունի մինչև 1 միլիմետր յերկարություն, նա տափակ է, գունատ—դեղնավուն կամ շիկավուն, ունի 4 շատ նեղ թևեր:

Թրիպսի շնորհիվ ծխախոտի տերևները ծածկվում են սպիտակավուն կամ ժանգոտ շերտերով: Սրանք առաջ են գալիս նրանից, վոր թրիպսը ծծում է հյուլքը, իսկ հյուլքի փոխարեն թափանցված ոգից կազմվում են հիշյալ շերտերը, վորոնք հայտնի յեն «պաս» կամ «գամարպաս» անունով:

Թրիպսն ընդհանրապես քիչ է թույում, սակայն նա կարող է քամու միջոցով մեծ տարածություն անցնել և վարակել ծխախոտադաշտերը:

Յուրաքանչյուր եգ թրիպս իր կյանքի ընթացքում ծխախոտի տերևի վրա դնում է մոտ 100 ձու: 3—5 որից հետո դուրս են գալիս թրթուրները, վորոնք 10—19 որից մեծանում են և սկսում բազմանալ:

Թրիպսը ծխախոտի վրա գտնվում է մինչև աշնանային ցրտերը, քանի դեռ կան ծխախոտի թարմ տերևներ:

Վաղ զարնանը նա ձվեր է դնում սոխի, կարտոֆիլի նաև մի շարք մոլախոտերի տերևների վրա:

Ուրեմն թրիպսի առաջին սերունդը ծխախոտի վրա չի զարգանում: Նա ծխախոտին անցնում է հիշյալ բույսերից:

Պայքարի միջոցներ.—պետք է վոչնչացնել մոլախոտերը, ծխախոտը պիտի լինի կարտոֆիլի, սոխի, տոմատի ցանքերից հեռու, բերքահավաքից հետո հավաքել ծխախոտի ցողունները, ծխախոտը սրսկել մինչև նրա ներքևի տերևների հասունացման սկիզբը:

Սրսկելու համար հեղուկը պատրաստվում է այսպես.—

100 լիտր ջրի մեջ լուծվում է 1,5 կիլոգրամ 10 տոկոսանի ծխախոտային եքստրակտ և 1,5 կիլոգրամ կանաչ սապոն:

Մեկ հեկտար ծխախոտ սրսկելու համար հարկավոր է ե մոտ 800 լիտր ալդալիսի լուծույթ:

Կարելի չէ դործածել նաև միայն կանաչ սապոնի լուծույթ, վերցնելով սրանից 3 կիլոգրամ և լուծելով 120 լիտր ջրի մեջ:

Սրսկել հարկավոր է առավոտյան ու յերեկոյան: Պոր-հուրդ է տրվում սրսկել 2 անգամ, 5 որ ընդմիջումով:

Ծխախոտի կամ դեղձի ափսը մեծ ֆլաս է հասցնում, յիթի սաքտիկ բաղմանում է: Ափսան ունի կտր, ձվի ձև, թուխ դույն, կանաչ նախշերով:

Նա պատահում է շատ ու շատ կուլտուրական բույսերի ու մոլախոտերի վրա:

Ափսը հետևյալ ֆլասներն է հասցնում ծխախոտին.—

1. Ծծում է տերևներին հյութը և ալդալիսով խանդարում նրանց կանոնավոր զբոսացման ու հասունացման, 2. տերևները կեղտոտում է իր արտաթորութուններով, վորոնց վրա փոշի չէ նստում և տեղավորվում է սունկը, վորը սև մրի նման ծածկում է ծխախոտի տերևները:

Ծխախոտի տերևները, բացի անհաճո դույնից ու տեսքից, հորացնելուց հետո, ծխելիս շատ վատ համ ու հոտ են ունենում:

Պայքարի միջոցներ.—Վոչնչացնել մոլախոտերը, վոչնչացնել ափսից ֆլասխած առանձին տերևները, սրանց վրա հասունանալուց 2 շաբաթ առաջ սրսկել նույն լուծույթը, վորը թրիպսի դեմ է սրսկվում:

Բամբակի բվիկը քիչ է ֆլասում ծխախոտի տերևներին: Նա ֆլասում է գլխավորապես ծաղիկները և սերմատու-փերը:

Յերբեմն նա խիստ ֆլասում է վերին տերևներին:

Ծխախոտին ֆլասում է այս միջատի թրթուրների յերկ-րորդ սերունդը:

Պայքարի միջոցներ.—Հավաքել խոշոր, տուփերի մեջ կպած թրթուրներին: Ծխախոտը վաղ տնկել, ծաղիկների վրա ցանել փարիզյան կանաչ, կիսով չափ խառնելով կավ-

ճի կամ կրի հետ (չափը վերցնել կշեռքի միջոցով): Ծաղ-կահատումն ու ֆիլիչահատումը կատարել խնամքով, իսկույն և յիթ ծաղկահատել վարակված ծխախոտը, կտրատ-ված մասերը հավաքել ու այրել:

Բացի մեր հիշած ֆլասատուներից, ծխախոտին ֆլասում են բզեզները, մորիխները, բադիճները և այլն, վորոնց ֆլասն այնքան էլ զգալի չէ և նրաց դեմ պայքարելու առանձին միջոցներ չեն ձեռք առնվում:

Մակարույծ (պարադիտ) բույսերից հիշենք հետևյալ-ները.—

Ճրագախոտ—Փոքրիկ բույս է, ունի դեղնավուն դույն, ցողունի վրա, տերևների փոխարեն ունի մազմզուկներ և կապտավուն-մանուշակագույն ծաղիկներ:

Ճրագախոտը կպչում է ծխախոտի արմատներին և սն-վում է նրա հյութերով, սաստիկ քայքայում է նրան: Հողի վրա, յուրաքանչյուր ծխախոտաբույսի մոտ կարելի չէ հանդիպել ճրագախոտի ամբողջ թփերի:

Հուլիսից սկսած՝ ճրագախոտը ծաղկում է. նրա յուրա-քանչյուր թուփը տալիս է 60—100 հազար հատ սերմ:

Ճրագախոտից ֆլասված ծխախոտը լինում է թոշած, վերևի տերևները կախվում են, քանակով ու վորակով պա-կաս բերք է տալիս:

Պայքարի միջոցներ.—Հենց վոր ճրագախոտը յերևաց, անմիջապես վոչնչացնել ամբողջովին, արմատահան անելով: Արմատահանված թփերն այրել: Ծխախոտից հետո ցանել հացահատիկներ, իսկ 5—6 տարի հետո նորից կարելի չէ ծխախոտ տնկել: Հողը պետք է խորունկ վարել:

Գաղձ.—Միամյա, ծաղկող բույս է, մակարույծ, ունի բարակ ցողուն, վորի վրա կան կոծիծներ: Սրանցով նա կպչում է բույսերին, նաև ծխախոտին ու ծծում է նրանց հյութերը:

Տերևների փոխարեն ունի մազմզուկներ: Վարդագույն փոքրիկ ծաղիկները լինում են փնջաձև: Յուրաքանչյուր ծաղիկն ունի կարճ, փոքրիկ ցողուն: Սերմերը դեղնավուն-

կինամոնագուլն են և իրենց մեծությամբ հիշեցնում են խաշխաշի ծաղիկները: Ծխախոտին վնասում է նրանով, վոր փաթաթվելով նրան, պակասեցնում է նրա սնունդը, դժվարացնում է ծխախոտը խնամելու և քաղելու աշխատանքը: Ծխախոտի միջին ե վերին տերևները քաղելու ժամանակ, գաղձը ամենից շատ է դարգացած լինում: Ծխախոտի տերևները խիստ թառամում են, կինամոնի դուլն ստանում և նրանց ծայրերը չորանում են:

Պայխաբի միջոցներ.—Ծխախոտի բույսերը խնամքով մաքրել գաղձից, ծխախոտը հավաքելուց հետո դաշտից հեռացնել նրա ցողունները:

ԾԽԱԽՈՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծխախոտի շատ հիվանդություններ առաջանում են կամ սնկերից և կամ բակտերիաներից, վորոնք գտնվում են բույսերի զանազան մասնիկների մեջ:

Սուռնկերի ու բակտերիաների առաջացրած հիվանդությունները վարակիչ են, այսինքն, վորոշ պայմաններում մի բույսից մյուսին են անցնում:

Այդ հիվանդությունների դեմ կռվելու համար հարկավոր է հետևյալը.—վոչնչացնել վարակը, հիվանդությունները կանխելու նպատակով սրսկումներ կատարել կամ ծխախոտի այնպիսի տեսակներ մշակել, վորոնք չեն վարակված հիվանդություններով:

Վոչ-վարակիչ հիվանդություններն առաջ են դալիս հողի ու կլիմայի աննպաստ պայմանների շնորհիվ:

Ծխախոտի չորացման ժամանակ նա վնասվում է սնկերից և վոչ թե մակարոններից, քանի վոր այդ սնկերը վնասում են վոչ թե կենդանի, այլ արդեն մեռած բույսին:

Փորձերը և պրակտիկան ցույց են տվել, վոր հիվանդությունների մեծամասնությունը առաջ է դալիս հենց սածիլանոցներում:

Նկարագրենք ծխախոտի մի քանի ամենավնասալեր հիվանդությունները.—

Արմասափեսում: Այս հիվանդությունն առաջ է գալիս սխալավիա-բաղիկոյա կոչված սնկից, վորը դարգանում է բույսերի արմատների վրա, հետզհետե փտեցնում և սեպցնում է նրանց:

Հետևանքն այն է լինում, վոր բույսը թույլ է աճում, յերբեմն ել բոլորովին փչանում է:

Շատ հաճախ բույսի փչացած արմատների փոխարեն, կազմվում են կողքի բաղմաթիվ արմատիկներ:

Բայց և այնպես, բույսը դժվարությամբ է աճում և ուշ հասունանում:

Այս հիվանդությունը սաստիկ դարգանում է ամուր հողի վրա:

Բացի վերը հիշված սնկից, այս հիվանդությունն առաջացնում են նաև մի քանի ուրիշ սնկեր:

Արմատափտումը կամ սածիլանոցներից ե դաշտ անցնում, կամ այստեղ առաջ է դալիս յերկար ժամանակ մի միայն ծխախոտ մշակելու պատճառով:

Պայխաբի միջոցներ.—Ծխախոտատուռնկի ժամանակ պետք է ջոկել ու վոչնչացնել հիվանդ սածիլները, կատարել սածիլը տնկելու հիմնական ադրո-տեխնիկական կանոնները, քաղհանը վաղ կատարել, լավ բուկը տալ, դաշտից վտարել հիվանդ բույսերը, ծխախոտի, հացբույսերի ու յեղիպտացորենի ցանքափոխություն կատարել:

Արացող: Այս հիվանդությունն արտահայտվում է ներանով, վոր ծխախոտի ամբողջ տերևը կարծես մոխրոտված կամ ալրոտված է լինում:

Հիվանդության պատճառն «երիդաֆե» կոչված սուռնկն է: Հիվանդ ծխախոտի տերևները չորացնելուց հետո ծածկվում են պղտոր—կինամոնագուլն բծերով, հեշտությամբ փշրվում են, իսկ դործարանում փոշի յեն դառնում:

Ալրացողին նպաստում են՝ խոնավ, տաք, անքամի յեղանակը, մառախուղը, թաց հողը, խիտ ծխախոտատուռնկը:

Պայխաբի միջոցներ.—Դաշտից հավաքել ու այրել հիվանդացած տերևները: Բույսն իր ժամանակին մաքրել ներ-

քելի սերկնեցից, իր ժամանակին կատարել ծաղկահատումն
ու ֆիլիչհահատումը: Վոչնչացնել մոլախոտերը, Բերքահավաքն
ավարտելուց հետո հավաքել ցորենները: Ծխախոտը չտն-
կել խոնավ ու ցածրագիր տեղերում:

Բակեքիային չեչոսութուն: Այս հիվանդության զարգաց-
ման նպաստավոր պայմաններն են՝ հողի և ողի ավելորդ
խոնավությունը, ցածր ջերմությունը, քամին և հիվանդու-
թյունն առաջացնող բակտերիաների դոյությունը:

Սկզբում հիվանդությունն յերևան է գալիս փոքրիկ
բծերի ձևով, վորոնք դեղնավուն են լինում, բացի մեկից,
վորն ունի թուխ գույն, դառնում է դեղին բծերի կենտ-
րոնում, ունի քորոցի գլխի մեծություն: Այնուհետև այդ
բծերը մեծանալով, ստանում են պարզ-կինամոնադույն և
սուր-կինամոնադույն տեսք: Չորանալով, բծերը ծակոտ
վում են, կլորանում: Հաճախ նրանք այնքան են փչացնում
ծխախոտի տերևը, վոր նա բոլորովին անպիտքանում է:

Պայթալի միջոցներ: Դաշտում աշխատանքը չպիտի կա-
տարել այն ժամանակ, յերբ չեչոտված բույսերը թրջվել են
անձրևից կամ ցուրից, վորովհետև այս դեպքում սաստիկ
տարածվում է հիվանդությունը:

Պայքարի մի շարք միջոցներ պիտի կիրառվեն դեռ սա-
ծիլանոցում:

Չեչոտությունից վնասված ծխախոտի տերևահատը կա-
տարվում է այն ժամանակ, յերբ արդեն վերջացել է առողջ
ծխախոտի տերևահատը:

Ծխախոտի մյուս հիվանդություններից պիտի հիշել
ողակաձև չեչոտություն, մանտար, մողայիկա, խայտախտ
և այլն:

Ինչպես մենք տեսնում ենք, ծխախոտը վնասվում է
բազմաթիվ վնասատուներից ու հիվանդություններից, վորոնք
հաճախ մեծ չափով պակասեցնում են նրա բերքը և իջեց-
նում վորակը:

Ծխախոտագործական խորհանտեսություններն ու կոլ-
տնտեսությունները միայն մասսայական, ճիշտ կազմակերպ-

ված և ժամանակին մղած պայքարով կարող են վերաց-
նել այն վնասները, վոր ծխախոտին հասցնում են մի ամ-
բողջ շարք վնասատուներ ու հիվանդություններ:

ԾԽԱԽՈՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՐԵՎԱՀԱՏԸ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈՒ ԵՆ ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԵԼ ԴԱՇՏՈՒՄ

Ծխախոտի հիմնական տերևահատից հետո դաշտում դեռ
մի շարք ուրիշ աշխատանքներ ել պիտի կատարել:

Նախ, պետք է ավարտել ֆիլիչների հավաքը, վորի մա-
սին մենք արդեն խոսել ենք «ծխախոտի բերքահավաքը»
գլխում:

Յերկրորդ, նույնպես պետք է հավաքել ծխախոտի տե-
րևների այն մասը, վորը յենթարկվում է ցրտերի աղդեցու-
թյան և դառնում, այսպես կոչված՝ դաղեղներ: Այս մասին
ևս մենք խոսեցինք զրբիս վերոհիշյալ գլխում:

Յերրորդ, բերքահավաքումից հետո պետք է պոկել ու
վոչնչացնել ծխախոտի ցողունները և այլ անպիտք մնա-
ցորդները, վորոնք կարող են ծխախոտի վնասատուների և
հիվանդությունների աղբյուր դառնալ:

Հարթավայր ռայոններում, ծայրայեղ դեպքում պետք է
հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը հողը վարել
15—18 սանտիմետր խորությամբ:

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ՊԱՅԲԱՐԵԼ ԱՐՈՏԵԽՆԻ- ԿԱՅԻ, ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ՈՒ ՌԱՅԻՆԱԼԱՅՄԱՆ ԲՋԻՋՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Փորձի սոցիալիստական փոխանակություն կազ-
մակերպելու միջոցով, հնարավոր է հին ագրոտեխնի-
կական ձևերն արագությամբ փոխել նորերով, հնա-
րավոր է արագ մեքենայացնել և ուսցիոնալացնել
ծխախոտի կուլտուրան»:

Յուրաքանչյուր խոշոր, սոցիալիստական տնտեսության
կից, — լինի դա խորհանտեսություն թի կոլտնտեսություն, —
պետք է կազմակերպվի ու աշխատի ծխախոտագործության

մեքենայացման ու ռացիոնալացման ագրոտեխնիկական բջիջ:

Այս բջիջը պետք է նախաձեռնող և կազմակերպիչ լինի տնտեսութայն վերակառուցման, նոր ագրոտեխնիկա մտցրնելու և ծխախոտագործութայն մեքենայացման ու ռացիոնալացման առաջարկներն ոգտագործելու ասպարիզում,

կատարելով դանադան փորձեր, գործնականում իրականացնելով ռացիոնալացման և մեքենայացման այս կամ այն առաջարկը, այդ բջիջներն իհարկե չպիտի սահմանափակվեն իրենց աշխատանքի նեղ շրջանակում:

Նրանք պետք է իրենց աշխատանքին ներգրավեն ամբողջ կոլտնտեսային մասսային, կազմակերպեն այդ մասսային՝ նրա ուշադրությունը կենտրոնացնեն այն հարցերի շուրջը, վորոնցով զբաղվում են իրենք: Բջիջները պետք է կազմակերպեն ղրույցներ, լրագրերի, թուղթիկների, հանդեսների կոլեկտիվ ընթերցանություններ:

Բջիջները պետք է ամենուրյա փորձի փոխանակություն կազմակերպեն բրիգադների, խմբակների, առանձին կոլտնտեսականների, ինչպես և հարևան կոլտնտեսությունների բջիջների միջև:

Բջիջների հիմնական աշխատանքում ավելի շատ տեղ պիտի բռնեն ծխախոտագործության, մասնավորապես ծխախոտի բերքահավաքման ու չորացման հարցերը:

Բջիջները պետք է կազմակերպեն սերտ կապ ծխախոտագործական կոլտնտեսությունների և գլխավոր-հետադոտական հիմնարկների, որինակ, Ծխախոտագործության Համա-միութենական ինստիտուտի, ինչպես և ծխախոտագործության հարցերով զբաղվող կազմակերպությունների միջև:

Բջիջները չպետք է կազմակերպվեն անկախ, առանձնաշատ: Ամենից լավ է նրանց կազմակերպել իբրեւ ծխախոտագործական ապրանքային ֆերմաների արտադրական խորհրդակցություններին կից բանվորական խմբակներ:

Բջիջի կազմը մեծ չպիտի լինի, 7—9 հոգին բավական է:

Իրենց աշխատանքի ընթացքում բջիջները պետք է հենվեն հարվածային կոլտնտեսականների, ՀԿ(Բ)Կ և ՀԼԿՑԵՄ բջիջների անդամների վրա, ինչպես և կոլտնտեսության ու ծխախոտ. ապրանք. ֆերմաների ամբողջ ակտիվի վրա, յեթե նրանց կից բջիջներ են կազմակերպված:

Բջիջի աշխատանքների պլանում պետք է արտացոլվի կոլտնտեսության ամբողջ արտադրական աշխատանքի պատկերը, վորպեսզի հնարավոր լինի վերակառուցել, բարելավել այդ աշխատանքը, ագրոտեխնիկական նորանոր ձևեր մտցնել, ավելի մեծ չափով մեքենայացնել ու ռացիոնալացնել ծխախոտագործությունը:

Կազմակերպելով բանվորների դյուտարարական ու ռացիոնալական առաջարկների հոսանքը, բջիջները պետք է ձեռք առնեն բոլոր միջոցները, վորպեսզի այդ առաջարկները գործնականում կիրառվեն իրենց, ինչպես և հարևան կոլտնտեսությունների արտադրական գործունեյության ընթացքում:

Բջիջներն իրենց անդամներից մեկին ընտրում են քարտուղար—թղթակից, վորը և վարում է բջիջի աշխատանքին վերաբերվող ամբողջ գրագրությունը:

Իր բոլոր միջոցառումները բջիջն իրագործում է արտադրական խորհրդակցությունների, կոլտնտեսության վարչության, բրիգադի, ծխախոտա-ապրանքային ֆերմաների և ամբողջ կոլտնտեսության ընդհանուր ժողովների միջոցով:

Քիստ շատ են այն հարցերը, վորոնք պետք է ուսումնասիրվեն և լուծվեն բջիջների կողմից: Հարկավոր է միայն յոթանդ և բոլշեիկյան համառություն, հարկավոր է կոլտնտեսային մասսաների մասնակցությամբ, գործնական աշխատանքի միջոցով բարելավել արտադրությունը, կատարել ձրագրված աշխատանքը, ոեալ պայմաններ ստեղծել պլանների կատարման համար և հենց դրանով լավացնել յուրաքանչյուր կոլտնտեսականի նյութական ղրությունը:

«Մեր ծրագրի ռեալ լինելը— այդ մենք ենք ձեզ հետ, այդ կենդանի մթրդիկն են, այդ մեր կամքն է գեպի հաղթանակ և աշխատանք»:

(Սեալին)

ՉՈՐ ԾԽԱՆՈՏԻ ՀԱՇՎԱՌՔՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Ժամանակակից խոշոր, կոյեկտիվ ծխախոտագործական տնտեսությունների պայմաններում, յերբ կոլտնտեսությունների դաշտերի մեծամասնությունը տասնյակ և հարյուրավոր հեկտարների յե հասնում, չորացրած ծխախոտի հաշվառքի ու պահպանման հարցերը բացառիկ ու կարևոր նշանակություն են ստանում:

Լինում են դեպքեր, յերբ կոլտնտեսությունների և ծխախոտա-ապրանքային ֆերմաների ղեկավարները թերագնահատում են այս մոմենտները: Արդեն հավաքված, մշակված բերքի մի զգալի մասը փչանում և անփուլթ կամ անկանոն պահվելուց, յերբեմն ել ուղղակի հափշտակվում ե՝ շնորհիվ վատ հաշվառքի, հարմար շենքի և հսկողություն բացակայության և անպատասխանատու պահպանության:

Անցյալ տարվա փորձը ցույց ե տվել, թե ինչպես հաշվառքի բացակայության և չորացրած ծխախոտի անփուլթ պահպանության շնորհիվ, կոլտնտեսությունները տասնյակ և հարյուր հազարավոր ծխախոտաթելեր, ուրեմն տասնյակ հազարավոր ուղբիներ եյին կորցնում: Իհարկե, դրանից պակասուհյին կոլտնտեսականների յեկամուտները: Կոլտնտեսության մեջ վատ դրված հաշվառքը, բացի նրանից, վոր դժվարացնում, յերբեմն ել ուղղակի խախտում ե պլանային աշխատանքը, նպաստավոր հող ե սեղծում ղեղձուկների և ուղղակի հանցագործությունների համար:

Ժամանակակից պայմաններում, յերբ կոլտնտեսությունների մեծամասնությունը բավական յերկար ժամանակ պահում ե չորացրած ծխախոտի հարյուր-հազարավոր թելեր, հաճախ դրա համար նույնիսկ չունենալով բավականաչափ թվով շենքեր, այս խնդիրները խիստ մեծ կարևորություն են ստանում: Ահա թե ինչու կոլտնտեսությունների ղեկավարները, առաջին հերթին ծխախոտա-ապրանքային ֆերմաների վարիչները և բրիգադիրներները, ինչպես և բոլոր

կոլտնտեսուհիներն ու կոլտնտեսականները, վորոնք միևնույն աշխատանքային որեր են ներդրել ծխախոտի արտադրության մեջ, պետք ե լավ մտածեն ծխախոտի հաշվառքի ու պահպանության մասին, կազմակերպեն այս գործն այնպես, վորպեսզի և վոչ մի տերև ծխախոտ չկորչի: Կոլտնտեսականների ամբողջ լայն մասսան պետք ե իր ղեկավարներից պահանջի յեղաչելիք՝ ծխախոտի բերքը հարյուր տոկոսով պահպանելու և արդյունաբերությունը հանձնելու համար, թույլ չտալով նրա վորակի, ինչպես և քանակի կորուստ:

Ծխախոտի պահպանման գործը կազմակերպելիս չպետք ե նաև մոռանալ, վոր դասակարգային թշնամին—կուլակը և նրա բոլոր կողմնակիցները դեռ ևս բոլորովին չեն վոչնչացված, վոր այդ վոնակի մնացորդները մահամերձի ջղաձգությունների մեջ վոչ մի առիթ ու հնարավորություն բաց չեն թողնի մեր սոցիալիստական շինարարությանը փլասելու համար:

Ահա ձեղ փաստեր: Անցյալ տարի Արինյան ռայոնի Մերչանսկի գյուղում, շնորհիվ կոլտնտեսության ղեկավարների հանցավոր անփութության, շնորհիվ կոլտնտեսականների արթնության բացակայելուն, դասակարգային թըշնամու ձեռքով այրվեց ծխախոտի յերկու շենք, վորտեղ կար 50.000 թել պատրաստի, չոր ծխախոտ:

Այսպիսի փաստեր տեղի ունեցան նաև Ղրիմի և այլն ռայոններում:

Ահա թե ինչու կոլտնտեսություններում ծխախոտի պահպանությունը պետք ե կազմակերպել մեծ խնամքով և այդ պահպանումը հանձնարարել ամենահավատարիմ կոլտնտեսականներին, հասարակական լայն վերահսկողություն սահմանելով այս գործի վրա:

Վորպես գործնական միջոցառումներ, մենք առաջարկում ենք հետևյալը.—

1. Մինչև ծխախոտի տերեհատն ու թելումը, մանրամասն դիտել ու պատրաստել այն բոլոր շենքերը, վորոնք

անհրաժեշտ են ծխախոտի պահպանութեան համար: Կատարել բոլոր անհրաժեշտ վերանորոգումները:

2. Ծխախոտագործական-ապրանքային ֆերմաների վարիչները պետք է ամենափորձված և ամենահավատարիմ կողմնակապակցներից վաղորդք նշանակեն մարդկանց և սրանց վրա դնեն ծխախոտի քանակի ու վորակի պահպանութեան ամբողջ պատասխանատվութիւնը:

3. Կոլտնտեսութեան հաշվապահը կամ հաշվետարը պետք է վաղորդք մշակե թելած ու չորացած ծխախոտի ստացման և տեղափոխման մանրամասն կարգը և վերջինիս հետ լավ ծանոթացնեն բոլոր նրանց, վորոնք պատասխանատու յեն այս գործի համար (բրիգադիւրներ, կոլտնտեսականներ, վորոնք նշանակվում են ծխախոտը պահպանելու համար և այլն):

Բացի դրանից, հարկավոր է ծխախոտի պահպանման յուրաքանչյուր շենքի համար պատրաստել հատուկ գրքույկներ, վորոնց վրա ամեն որ պետք է գրվի տվյալ շենքում յեղած ծխախոտաթելերի քանակութիւնը:

Թե գրքույկներում ու տետրակներում և թե տախտակների վրա հաշվառքը պիտի կատարվի յուրաքանչյուր տերեւ-վահատի համար առանձին:

Տետրակներում ու գրքույկներում, բացի դրանից, գրանցումները պիտի լինեն յուրաքանչյուր բրիգադի համար առանձին, վորպեսզի ամեն ժամանակ հնարավոր լինի իմանալ, թե վոր բրիգադն ինչքան ծխախոտաթել է հանձնել և վեր տերեւատից:

Հարկավոր է մի առ մի ցուցմունքներ տալ այն մարդկանց, վորոնք գրանցումներ պիտի կատարեն տետրակներում, գրքերում և տախտակների վրա:

4. Բոլոր դեպքերում, յերբ ծխախոտը հանձնվում է պահեստ, կամ դուրս է տարվում այնտեղից, պետք է լինեն հանձնողի և ընդունողի ստորագրութիւնները, իսկ յեթե նրանցից վորեւ մեկն անգրագետ է, պետք է գրվի նրա ազգանունը:

Այստեղ մենք մանրամասն կանգ չենք առնի ծխախոտի

հաշվառքի ու պահպանման կարգի վրա, քանի վոր այդ թույլ չի տալիս մեր գրքի ծավալը և բացի այդ, դա դուրս է գրքիս նպատակներից: Մենք միայն սահմանափակվում ենք գլխավոր դիտողութիւններով: Ինչ վերաբերում է հաշվառքի բոլոր մանրամասնութիւններին, կարծում ենք, վոր դրանք պիտի մշակեն ծխախոտ-ապրանքային ֆերմաների վարիչներն ու բրիգադիւրները՝ կողմնակապակցի հաշվետարական աշխատողների հետ միասին:

Այժմ անցնենք ծխախոտի պահպանման կանոններին:

Նախ և առաջ ծխախոտի շենքը պետք է համապատասխանե հետեւյալ պահանջներին.—այնտեղ ծխախոտը պետք է միանգամայն պաշտպանված լինի քաւիներից, խոնավութիւնից ու մառախուղից, նա պետք է չեղոքացվի դրոշի ողից: Շենքում չպիտի լինեն վատ հոտեր, վորոնք վատ են ներգործում ծխախոտի վրա:

Շենքը պիտի ունենա այնպիսի ճարտարապետութեամբ, վոր լավ (չոր) յեղանակին հնարավորութիւն լինի նրան յենթարկել ողափոխութեան:

ԱՆԱ ՏԵԱՒՈՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՇԻՄԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Յերբ ծխախոտի տերեւները հանձնվում են պահելու համար, նրանց յերակներն ու պոչերը ևս պետք է չորացած լինեն, հակառակ դեպքում ծխախոտը կբորբոսնի ու կփչանա:

2. Առաջին տերեւահատիւրից ստացվող ծխախոտը, վորը պետք է հանձնվի նախաժամկետային մթերման կարգով, չորացվելուց հետո պետք է իսկույն հակ կապվի:

3. Ընդհանրապես ծխախոտը պիտի պահպանել լավ պաշտպանված շենքերում, ավելի լավ է խիտ-խիտ կախ տալով վաւ չորացրած ծխախոտն այս ձևով պահպանվելով, լինում է լավ վորակի և գույնի:

Իսկ նոսր կախ տալու դեպքում, աննպաստ պայմանների մեջ պահվելով, ծխախոտը կարող է խոնավանալ և մինչև անգամ բորբոսնել, վոր հնարավոր է մանաւանդ վատ պաշտպանված շենքերում:

4. Չոր յեղանակին պետք է բաց անել շենքի դռները կամ այլ անցքերը, իսկ խոնավ յեղանակին պինդ փակել:

5. Առանձնապես արթուն հսկողություն պիտի կազմակերպել այն ծխախոտի վրա, վորը հետադաշուած պետք է մանրակրկիտ մշակութեան յենթարկվի և վորն ունի եքսպորտային նշանակութիւն: Այսպիսի ծխախոտին պետք է շենքում հատկացնել ամենաապահով տեղ:

6. Հակ կապած ծխախոտն անմիջապէս պետք է ուղարկել ընդունման կայանը, առանց սպասելու հակերի կուտակման, քանի վոր դրանով կդժվարանա ծխախոտի պահպանութիւնը: Բացի այդ, քարշող ուշօրի պակասութեան դեպքում նաև կդժվարանա նրա առաքումը:

7. Կոլտնտեսութիւններում հակ կապած ծխախոտը կարելի յի պահել վոչ ավելի, քան 3—5 որ (ոգոմտոս—սեպտեմբերին) և 7—10 որ (հոկտեմբեր—փետրվարին): Սակայն, կրկնում ենք, վորպեսզի կոլտնտեսութեան մեջ համապատասխան շենքերի բացակայութեան պատճառով ծխախոտը չփչանա, բոլոր հակերն անմիջապէս պիտի ուղարկել ընդունման կայանները:

8. Ծայրայեղ դեպքերում, յերբ ինչ-ինչ պատճառներով հնարավոր չէ ծխախոտը շուտ ուղարկել և նա պետք է վորոշ ժամանակ պահվի կոլտնտեսութիւններում, անհրաժեշտ են հետևյալ պայմանները.—

Շենքը պետք է լավ պաշտպանված լինի ողի աղդեցութիւնից, չպիտի անցքեր ունենա: Դռներն ու լուսամուտները անպայման պետք է փակուից լինեն:

Հակերը շենքում գտնվելու ժամանակ լուսամուտները փեղկերը միշտ պետք է փակված լինեն, վորպեսզի ծխախոտը չյենթարկվի ջերմութեան աղդեցութեան և վաղաժամ ֆերմենտացիայի: Շենքը պարբերաբար պետք է ողախովի (բոլոր այն որերին, յերբ յեղանակը չոր է), վորպեսզի այն տեղ խոնավութիւն չառաջանա:

Վոչ մի դեպքում չի կարելի ծխախոտի հետ միեւնոյն շենքում պահել ուրիշ, հոտ ունեցող ապրանքներ ու մթերք-

ներ, ինչպէս և հեղուկով լցված անոթներ, վորովհետև դա կանգորադառնա ծխախոտի վորակի վրա:

Ճիւղմանտացիայի չյենթարկված ծխախոտի հակերը լավ պահպանելու համար, նրանք պիտի դրվեն դարակների վրա:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ ՅԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՑ-ՎԱԾՔՆԵՐ

Բարձր վորակի ծխախոտ ստանալու համար, անհրաժեշտ է վոչ միայն կանգնավոր խնամք տանել նրա աճման ու քերքահավաքման ժամանակ, այլ և այդ խնամքն ավելի մեծ ծավալ պիտի ստանա ծխախոտի հետագա մշակման ընթացքում: Դրա համար հարկավոր են հատուկ շենքեր—ծխախոտի ժարահներ և տաքացվող չորանոցներ:

Վերջին տարիներս ծխախոտացանքերի տարածութիւնն արագութեամբ ընդարձակվում է, մինչդեռ յեղած շենքերի քանակութիւնը չի համապատասխանում այդ աճման:

1932 թվականի հունվարի 1-ին յեղած շենքեր ու կառուցվածքները քանակը անբավարար եր նույն թվականի ծխախոտատունկի համար: Այդ քանակի մեջ մտնում էին քի ստանդարտ շենքերը ու կառուցվածքները և թե այն շենքերը, վորոնք ընդունվել էին կոլտնտեսութիւն մտած նախկին մենատնտես գյուղացիներից:

Շենքերի, մանավանդ նախկին մենատնտես գյուղացիների համայնացրած շենքերի դրութիւնը չի համապատասխանում ծխախոտի չորացման պահանջներին: Այդ շենքերը վերանորոգման մեծ կարիք ունեն:

Բացի դրանից, անցյալ տարի սկսված և կառուցված մի շարք շենքեր չեն ավարտվել, վորոնք կարող են անդամորել մոտ 3445 հեկտար ծխախոտ: Հետևապէս, այս տարի այդ շենքերն ոգտագործելու դեպքում, վորոշ չափով կբավարարվեն ընթացիկ տարվա ծխախոտատունկի պահանջները:

Այս ավայրերի հիման վրա, ներկա տարվա շինարարութ-
յան պլանը կազմված է այնպես, վոր ծխախոտի բերքի
մինչև 93—95 տոկոսն ապահովված լինի համապատասխան
շենքերով ու կառուցումներով:

Ծրագրված է կառուցել 946 ծխախոտամարազներ և 625
տաքացվող չորանոցներ, վորոնք պիտի սպասարկեն 16880
հեկտար ծխախոտի: Յեթե նաև հաշվենք անցյալ տարի կի-
սատ մնացած շենքերը, վորոնք այս տարի պիտի ավարտ-
վեն,—ապահովված կլինի 39,614 հեկտար ծխախոտ, կամ
այս տարվա ծխախոտատունկի 93—95 տոկոսը:

Ծրագրված շինարարությունն արժե 12 միլիոն 819 հա-
զար ռուբլի, վորից 4 միլիոն 668 հազար ռուբլին բաց է
թողել պետությունը կոլտնտեսություններին՝ իբրև յերկա-
րատե վարկ: Մնացած 8 միլիոն 151 հազար ռուբլին պետք
է ներդնեն կոլտնտեսությունները,—փողով, աշխատանքով
ու նյութեղենով:

Ծխախոտագործական ռայոնների բոլոր աշխատողները,
մանավանդ կոլտնտեսականները շատ լավ զիտեն, վոր ծխա-
խոտի վորակը, հետևապես նրա արժեքը կախումն ունի
անհրաժեշտ շենքերից և վոր վորակից էլ կախումն ունի
կոլտնտեսության յեկամուտը, ուրեմն նաև աշխատանքային
որվա արժեքը: Ներկայումս շինարարության աշխատանք-
ները չեն ապահովում ծխախոտաձեղնված պլանների կատա-
րումը այն հիմնական պատճառով, վոր այդ շինարարության
վրա չի կենտրոնացված կոլտնտեսային մասնաների ուշադ-
րությունը, իսկ շինարարության ղեկավար աշխատողները
նստել են ու շինանյութերի յեն սպասում, փոխանակ դրանք
փնտռելու տեղում, փոխանակ այդ հարցը դնելու ծխախո-
տագործական բրիգադների ակտիվի ու հարվածայինների
առաջ:

Աշխատանքը չի ծավալված նաև ծխախոտի բերքահա-
վաքման առաջին շրջանի—հուլիս-ոգոստոսի տաք յեղանակ-
ներն ոգտագործելու նախապատրաստության համար: Մինչ-
դեռ այդ նպատակով պետք են մի քանի պարզ, կառուց-

ված քներ—շարժական շրջանակներ, բողոններ, ջերմոցային
ապակյա շրջանակներից կառուցված չորանոցներ և այլն:

Իսկ այդ պարզ կառուցվածքները ոգոստոսի շոգ օրերին
կարող են մասամբ փոխարինել հատուկ շենքերին, իսկ
ծխախոտի մշակությունը դրանից չի տուժի, նյութական
ծախսերն էլ քիչ կլինեն, հետևապես զգալի կերպով կիջնի
հումուլի ինքնարժեքը:

Ծխախոտագործական-ապրանքային ֆնդմանների ղեկա-
վարները, ծխախոտի չորացմանը պատրաստվելին, պետք է
հաշվի առնեն այդ մոմենտները: Նրանք պետք է վաղորոք
հաշվի առնեն կառուցվածքների թիվը, այդ հարցի շուրջը
զորահավաքեն ծխախոտագործ բրիգադների ուշադրությունը,
ամենամեծ չափով ոգտագործեն իրենց ունեցած նյութական
միջոցները: Այս միջոցով զգալի չափով կկրճատվեն վերա-
դիր ծախքերը և կբարձրանա ծխախոտագործության յեկա-
մուտը:

Գրքիս 104 էջում բերում ենք ռայոնների ծխախոտագոր-
ծական պլանը, վորը պետք է կատարվի այս տարի:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Լ Ր Ա Յ ՈՒ Մ Ն Ե Ր

1. ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԱՎԱՅՈՒՄԸ ԱՄԲՈՂՁ ԲՈՒՅՍԵՐՈՎ

Ծխախոտի բերքահավաքն ամբողջ բույսերով (թփերով)
ամենալայն չափով կիրառվում է Ամերիկայի և այլ յեր-
կրների ծխախոտագործական ռայոններում, վորտեղ սիգար-
ներ են պատրաստում: Մեղանում, ԽՍՀՄ-ում այդպիսի բեր-
քահավաքը կիրառվում է մախորկա ստանալու համար: Դեռ
1856 թվին փորձեր են յեղել ղեղին ծխախոտերն էս հավաքել
ամբողջ թփերով, բայց մինչև այժմ դա չտարածվեց մե-
ղանում: Սակայն, պետք է նկատել, վոր մեր ժամանակնե-
րում, յերբ բերքահավաքը կատարվում է լարված պայման-

№ ըստ կարգի	Ռազմական կամ մարզեր	Տարածվող շրջաններ	Մարտեր	Տարածվող շրջաններ	Տարածվող շրջաններ	Մարտեր	Տարածվող շրջաններ
1.	Ղրիմի	89	176	2690	2399,4	671,6	1727,8
2.	Սեպերյան	128	121	3630	1787,1	679,0	1108,1
3.	Գորյայի-Կլուչի	43	76	1245	849,6	322,8	526,8
4.	Հունական	24	45	710	177,0	112,5	64,5
5.	Կրասնոդար	32	65	970	721,2	230,8	409,4
6.	Սլավյան	21	49	700	525,0	168,0	357,0
7.	Մայկոպի	42	42	840	608,6	196,6	412,0
8.	Ապշերոնի	16	10	290	57,3	18,3	39,0
9.	Բեկուրեչենի	90	98	1880	1416,8	538,4	878,4
10.	Լաբրնյան	85	87	1710	1368,2	461,6	906,6
11.	Հայկական	21	17	430	280,6	126,3	154,3
12.	Սոչու	46	124	1150	1052,0	368,0	684,0
13.	Տուրքեսի	11	14	310	163,6	52,4	111,2
14.	Շապսուգի	6	15	200	159,0	50,9	108,1
15.	Գեղենլիկի	10	16	290	188,6	60,4	128,2
16.	Անապայի	11	6	230	89,0	28,5	60,5
17.	Տրեռնի	8	16	240	170,4	54,5	115,9
18.	Պավլովյան	5	6	200	60,0	20,0	40,0
19.	Տիսուրեցի	6	7	240	72,0	24,0	48,0
20.	Արմավիրի	6	7	240	72,0	24,0	48,0
21.	Վանսույան	5	6	200	60,0	20,0	40,0
22.	Բրյուսովեցի	6	7	240	72,0	24,0	48,0
23.	Ն. Պակուսկի	4	4	140	42,0	14,0	28,0
24.	Կուրգանյան	10	10	200	146,0	46,7	99,3
25.	Ուրաղնի	6	8	260	78,0	26,0	52,0
26.	Տեմրյուկի	4	4	150	45,0	15,0	30,0
27.	Դադարյանի Ի. Ս. Հ.	9	9	180	107,1	66,500	40,600
28.	Ադիգեյի	14	46	600	392,8	177,8	215,0
29.	Չեչենյան Ի. Մ.	—	5	50	36,8	23,0	13,0
30.	Չերքեզիայի Ի. Մ.	—	20	200	144,0	77,1	66,9
31.	Կարաչայի Ի. Մ.	—	4	40	28,8	17,1	11,7

Ընդամենը . . . 758 | 1120 | 20595 | 13369 | 47,15,786513,3

ներում, յերբ դեռ ծխախոտագործությունը բավականաչափ
չի մեքենայացված,—պետք է կիրառել ծխախոտի բերքա-
հավաքն ամբողջ բույսերով: Թեև զրանից մի քիչ տուժում
է բերքի վորակը, բայց և այնպես, բերքի կորուստ չի լի-
նում: Այս ձևի բերքահավաքն ավելի քիչ աշխատանք է

պահանջում և սովորական բերքահավաքից եյապես տար-
բերվում է:

Ինչպես է կատարվում ամբողջ բույսերով բերքահավաքը:
Նախապես դաշտում կիրառվում են ագրո-տեխնիկական
մի քանի միջոցառումներ, վորոնց շնորհիվ ծխախոտի տե-
րեներն ավելի լավ, և վոր գլխավորն է, միաժամանակ են
հասունանում: Դա կատարվում է վաղ ծաղկահատման, ման-
քակրկիտ ֆիլիչահատման միջոցով. ներքևի տերեները—
դիպսարն ու խաշվածան կտրատվում են մոտ 20—25 սմ
բարձրությամբ: Այսպես նախապատրաստված և բավակա-
նաչափ հասունացած ծխախոտի թուփը կտրվում է ամբող-
ջովին, ցողունի հետ միասին և այս դրությամբ չորացվում
է (տես գրքի 4-րդ գլխի «դ» բաժինը): Այնուհետև մշակ-
վում է սովորական կարգով:

Չորացած տերեները կտրվում են ցողունից, տեսակա-
վորվում են, փնջվում և հակ կապվում: Սովորաբար բեր-
քահավաքման մոմենտը հասած է համարվում, յերբ անաչի
տերեները աչքի յեն ընկնում պատշաճ տեխնիկական հու-
սունությամբ: Սա ծխախոտի հասունության ամենալավնը-
շանն է, իսկ ուրիշ կերպ չի կարելի այդ հասունությունը
վորոշել, վորովհետև ցողունների վրա տերեները յերբեք
հավասարաչափ չեն հասունանում: Այս պատճառով բերքա-
հավաքն սկսում են՝ հենց վոր ծխախոտի հիմնական մասը—
անաչը հասունանա: Այդ ժամանակ վերին տերեները մի
փոքր թերահասուն կլինեն, բայց այդ թերությունը կաւե-
լի յե վերացնել չորացման ժամանակ:

Ամբողջ բույսերով բերքահավաքը նույնպես չի կարելի
կատարել անձրևի, ցողի և շոգ ժամանակ: Բույսերը քաղ-
վում են ձեռքով: Դործ են ածվում մի շարք գործիքներ—
դանակներ, մանգաղներ, զերանդներ և այլն: Ծխախոտի
արդյունաբերության Համամիութենական Ինստիտուտի
ավյաների համաձայն, վործված բանվորը մեկ ժամում կա-
րող է քաղել մինչև 2000 թուփ, այսինքն մեկ հեկտար
քաղելու համար հարկավոր կլինի 5—6 բանվոր:

Քաղելուց հետո հարկավոր է հենց դաշտում թփերը շա-
րել փայտիկների վրա, մոտ 1 մետր յերկարությամբ: Ծը-
խախտան այս դրությամբ չորացվում է տաքացվող չորանոց-
ներում, կամ արևի տակ մարազներում և ծածկած տեղերում:

Ամբողջ բույսերով հավաքելու առավելությունները.— 1. արագ բերքահավաք և քիչ աշխատող ձեռքեր, 2. տերևնե-
րի շարվածքի կրճատում 80 տոկոսով, 3. ավելի քիչ խը-
նամք չորացման ժամանակ, քանի վոր մարազում կամ այլ
տեղ կախված ծխախոտը նույն տեղում մնում է մինչև չո-
րացման վերջը:

Ամբողջ բույսերով հավաքելու բերությունները.— 1. մա-
րազին կից շենքերն յերկու անգամ ավելի տարողություն
պիտի ունենան:

2. Տերևները լրիվ չեն հասունանում և դրանով իջնում
է տեսակավորությունը:

3. Քանակի կորուստ—10 տոկոսով-կորչում են բույսերի
վերին մասերը, յերբ ծաղկահատ է կատարվում: Չորացման
ժամանակ ես, վոր կատարվում է ցողունների հետ միասին
—տերևները կորցնում են չոր բաղադրությունների մի ըզ-
գալի տոկոսը:

4. Հնարավոր չէ ֆիլիչների բավարար բերք ստանալ:

5. Հարկավոր են ավելի շատ փոխադրական միջոցներ,
իսկ արհեստական չորացման ժամանակ—ավելի շատ վառե-
լիք և աշխատողներ—ծխախոտը խնամելու, չորանոցը լց-
նելու և դատարկելու համար:

6. Յերբ անհրաժեշտ է եքսպորտային հումուլթ պատ-
րաստել, ծխախոտը փունջ կապել, պահանջվում է լրացուցիչ
բանվորական ուժ, կծկված և ծալծկված տերևներն ուղղե-
լու համար:

Ծխախոտը թփերով հավաքելու նշանակությունը պարզ
յերևում է Ծխախոտի արդյունաբերության Պետական Ինս-
տիտուտի դաշտագործական բաժնի 1931 թ. փորձերի հե-
տեյալ տվյալներից (փորձերը կատարվել են Արկադիա տի-
կուլսկ տեսակի վրա).—

	Չոր ծխա- խոտի կշիռը	Տոկոսները
1. Ամբողջ թփերով բերքահա- վաք, առանց տերևվահատի:	12,86	68,9
2. Բոլոր տերևները քաղվել են միանգամից:	14,46	77,6
3. Յերկու տերևահատ մի ան- գամից. մնացած տերևները ցո- ղունների հետ միասին դեղնեց- վել ու չորացվել են մարազում:	14,14	75
4. Միևնույնը չորացվել է ըջանակների վրա:	14,36	77
5. 2 տերևահատ կատարվել է մի անգամից, մնացածը քաղվել և չորացվել է ցողունների հետ միասին, դաշտում:	17,16	92
6. Բոլոր տերևները հավաքվել են 3 նվազ:	18,64	100

2. Ֆիլիչների ՅեՎ ԳԱԶԵԼՆԵՐԻ ԲԵՐՔԱՆԱԿԸ

Ֆիլիչները վորպես լրացուցիչ բերք, հավաքվում են այն
դեպքում, յերբ մեր արդյունաբերությունը զգում է նրանց
կարիքը: Իսկ մենք խորհուրդ տվինք ընդհանրապես ծխա-
խոտի աճման ժամանակ, նրա գլխավոր տերևների բերքը
լավացնելու համար, կտրատել յերկրորդական ճյուղերը—
ֆիլիչները: Այս բանը հարկավոր է կատարել նաև ծխա-
խոտի դաշտերի վաղաժամ ուժասպառման և ծխախոտի վը-
նասատուների և հիվանդությունների դեմ կռիվելու համար:
Այնուամենայնիվ, յեթե ֆիլիչների պահանջ կա, նրանք
պետք է լրիվ հավաքվեն: Նրանց բերքն էս զգալի յե-
կամուտ է տալիս խորհրտեսություններին և կոլտնտեսու-
թյուններին:

Ֆիլիչները կարող են ոգտագործվել յերկու ձևով. — 1.
հատուկ խնամք տանել նրանց, տերևվահատի ժամանակ,

ցողունի վերին մասի վրա թողնել 3—4 լավագույն յերկրորդական ճյուղեր, իսկ սրանցից ամին մեկի վրա թողնել 3—4 տերև: Հասունանալուց հետո, այս տերևները քաղվում են սովորական ձևով և տաքացվող շենքերում չորացվելով, լավ հումուլթ են տալիս:

2. Բոլոր ֆիլիչները քաղվում են իրենց ցողունների հետ միասին, շարվում են պարանի վրա, դեղնեցվում և չորացվում են արևի տակ կամ տաքացվող շենքերում:

Առաջին ձևով ավելի քիչ քանակությամբ, բայց լավ վորակի չոր ծխախոտ է ստացվում: Յերկրորդ ձևով յերկու անգամ ավելի, բայց ցածր վորակի ծխախոտ է ստացվում: Առաջին դեպքում մեկ հեկտարից ստացվում է 1,6 ցենտներ, իսկ յերկրորդ դեպքում—3,2 ցենտներ: Առաջին դեպքում հարկավոր է 260 ժամվա աշխատանք, յերկրորդ դեպքում—250 ժամվա (Ծխախոտի արդյունաբերություն Համաժողովենական Ինտիտուտի տվյալներից): Պետք է ինկատի ունենալ, վոր ֆիլիչներից ստացված ծխախոտն իր հատկություններով տարբերվում է գլխավոր տերևների ծխախոտից, ուստի արդյունաբերությունը պահանջում է ֆիլիչներն առանձին հակ կապել:

Կա նաև մի տեսակ ծխախոտի հումուլթ, վորը վերջին յերկու տարում հարկավոր է յեղել մեր արդյունաբերության: Դա թե գլխավոր տերևների և թե ֆիլիչների ցուրտը տարած մասերն են, այսպես կոչված՝ գաղենները, Դագենների արդյունքը քիչ է, նրանք ծխելու համար սակավ պետքական են: Դագենները դաշտից հավաքվում են ամբողջ բույսերով: Սովորաբար առաջին ցրտերից հետո տաք յեղանակներ են լինում և գաղենները չորացվում են հենց դաշտում: Առավոտները և մառախլապանտ որերին, յերբ նրանք այնքան ել փխրուն չեն և չեն փշրվում, հավաքվում են զամբյուղների կամ պարկերի մեջ և տարվում նշանակված տեղը, հակ կապելու համար: Այնուհետև հանձնվում են արդյունաբերության: Պետք է ասել, վոր գաղենները ստացվում են՝ շնորհիվ կոլտնտեսությունների և խորհրտնտեսու-

թյունների վատ աշխատանքի: Դագենները խղճուկ մնացորդներն են այն հսկայական կորուստներից, վոր ունենում են կոլտնտեսություններն անժամանակ բերքահավաքման շնորհիվ: Ահա թե ինչու կոլտնտեսությունների այսորվա լողունը պետք է լինի՝ «վոչ մի տերև չպետք է քնասվի ցրտերից»:

Սոցիալիստական արդյունաբերությունը պետք է մատակարարել ծխախոտի բարձրորակ հումուլթ—ահա ծխախոտագործական կոլտնտեսությունների կազմակերպչականֆինանսական ամրապնդման, նրանց կենցաղի ամրապնդման գրավականը:

3. ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԱՆԱՎԱՔՄԱՆ ՈՒ ՉՈՐԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՅԻՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՄՈՏԱՎՈՐ ՀԱՇՎԱՐԿ

Ծխախոտի բերքահավաքման ու չորացման համար անհրաժեշտ ինվենտարի և նյութեղենի քանակը պետք է հաշվել նախորոք, այդ աշխատանքների պլանը կազմելու ժամանակ: Այդ նույն ժամանակ պետք է հաշվել և բրիկադների վրա բաժանել յեղած ինվենտարն ու նյութեղենը և պակասորդի մասին հայտեր (զայավկաներ) ներկայացնել:

Ինվենտարը պետք է վազորոք դիտել և անհրաժեշտ վերանորոգում կատարել:

Ինվենտարի ու նյութեղենի քանակը պետք է համապատասխանի կատարվելիք աշխատանքների ծավալին և ժամկետներին:

Հանձնարարվում են ինվենտարի ու նյութեղենի հետևյալ քանակությունները՝ յիթե հավաքվելու յե 10 հեկտար ծխախոտատունկ.

ՆՅՈՒԹԵՂԵՆ

Ինչ նյութեղեն է հարկավոր	Նրանց քանակը 10 հեկտար ծխախոտի համար	Ծանոթութիւն
Քոկ (պարան)	120 կ. գր	Յերբ 1 հեկտարից ստացվում է 10-12 ցենտն.
Փայտ տաքացվող չորանոցների համար	30-35 տոնն	Չոր ծխախոտի 1 միավոր փայտ:
Կեռեր ծխ. կախիլու համար	2000-2500 հատ	4-5 թելին 1 կեռ:
Փայտիկներ հակ կապիլու համար	3000-3600 հատ	

ԻՆՎԵՆՏԱՐ

Ինչ ինվենտար է հարկավոր	Քանակը	Ծանոթութիւն
Ասեղներ (ծխ. թելիլու)	25 հատ	
Կշեռք տանորդական	1 »	
» նժաճներով	1 »	
Դանակներ	3 »	
Արկղներ	4-5 »	

Բացի դրանից, հարկավոր է չորանոցի մոտ հասցնել մի քանի կիսատակառններ և նախատեսել ջուր կրելու աշխատանքը: Զուրը կարող է պետք զալ առաջին տերեւահատի (դիպսարի) թելերը լվալու համար:

4. ԴԱՍՐԵՆԹԱՅՔՆԵՐ ԱԳՐՈՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԾԽԱԽ. ԱԳՐԱՆՔ. ՖԵՐՄԱՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Սոցիալիստական խոշոր տնտեսութեան պայմաններում աշխատանքի արտադրողականութիւնը հսկայական չափով բարձրանում է այն դեպքում, յերբ այդ տնտեսութիւնը սպառազինվում է տեխնիկապես և մասսայական չափերով բարձրացվում է ծխախոտադործական կադրերի վորակավորումը:

Միայն սոցիալիստական տնտեսութեան ձևերն են, վոր լայն հնարավորութիւն են տալիս ոգտագործել բարդ մեքենաները և ծխախոտադործական կատարելագործված շենքերը:

Այդ ձևերն են, վորոնց շնորհիվ աշխատողները կարող են արագութեամբ յուրացնել վարժանքները և բարձրացնել իրենց վորակավորումը:

Քանի վոր մինչև վերջին ժամանակներս ծխախոտադործութիւնը չի մեքենայացված, քանի վոր դեռ լայն չափով ձեռքի աշխատանք է կատարվում և վորակյալ աշխատողներ են պահանջվում—վորակավորման և ագրոտեխնիկական դիտելիքների բարձրացման հարցերը մեծ կարեւորութիւն են ստանում: Նրանց լուծումից խոշոր չափով կախված է ծխախոտի բարձր բերքը, ծխախոտի քանակն ու վորակը:

Հաշվի առնելով այս կարևոր հանգամանքը, ծխախոտի արդյունաբերութիւնը 1932 թվականին կոլտնտեսային սիստեմին բաց է թողնում 116,700 ուրբի՝ դասընթացքներ կազմակերպելու համար, 65428 ուրբի—ագրո-կոլտնտեսական նպատակներով և 649872 ուրբի—ագրո-տեխնիկական աշխատողներ պահելու համար. ընդամենը 832,000 ուրբի: (Ստորև կտանք այդ գումարը ուսյոնների միջև բաշխելու աղյուսակը):

Դասընթացքների համար բաց թողնված միջոցները կոլտնտեսային սիստեմը պետք է ոգտագործե այսպես.

ա) Ծխախոտադործական արտադրական բրիգադների պատրաստութիւն (յեռամայա դասընթացքներ):

բ) Ծխախոտա-ապրանքային ֆերմաների վարիչների պատրաստութիւն (յեռամայա դասընթացքներ):

գ) 25 գյուղատնտեսների վերապատրաստութիւն (միամայա դասընթացքներ):

դ) 52 ագրոտեխնիկների վերապատրաստութիւն (վեցամայա դասընթացքներ):

Բացի դրանից, միամայա դասընթացքներ պիտի կազմակերպվին ծխախոտը չորացնողների, տեսակավորողների և հակ կապողների—ընդամենը 1627 մարդու համար, ի հաշիվ համապատասխան ֆոնդերի (50 տոկոսն ի հաշիվ կոլտնտեսութիւնների):

Մասնաշաղկան ագրո-կուլտուրական միջոցառումները կարգով պետք է ծախսվի՝

- ա) Գյուղատնտեսական ցուցահանդեսների համար 20200 ու-
բ) Ագրո-հողամասերի համար 12500 ու.
գ) Համագումարների և կոնֆերանսների » 16,900 ու-
դ) Ագրոտեխնիկական գրականու-
թյան (ձրի) վրա 15828 ու.

1932 թ. Ա.Կ.Բ.Ո.-ՄԻՋՈՑԱԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ընդամենը	Ուսանողներ և աղագյին մարզեր	Ագրո պե-տոնալի պահելու համար	Դասըն-թացքի համար	Մասնա-շաղկան ագ-րո միջոց-առումներ	Ընդամենը
1	Դրիմի	58212	11990	8000	78202
2	Սեվերյան	65628	10760	8000	84388
3	Գ. Կյուրդի	38820	7270	3800	49890
4	Տեմրյուկի	6408	—	600	7008
5	Հունասական	29976	6995	3000	39971
6	Կրասնոդարի	19740	2740	1900	24380
7	Սլավյան	16740	2640	1800	21380
8	Մալկոպի	26748	5640	3200	35588
9	Ապշերոնի	26412	4420	1800	32632
10	Բելոռեսյանի	30276	5190	4000	39466
11	Լաբինյան	25668	4450	3000	33118
12	Հայկական	19764	5895	2000	27659
13	Սոչու	61824	10970	7000	79794
14	Տուրքեսի	18420	3090	1600	23110
15	Շապուգի	5184	1815	300	7299
16	Գեղնջիկի	11676	1925	1200	14801
17	Անապայի	11676	1780	1100	14556
18	Տիմաշևի	15420	1780	1100	18300
19	Բրյուխովցի	9144	1530	700	11374
20	Տիլտրեցի	17580	1305	800	19685
21	Ն. Պոկրովսկի	6624	1080	700	8404
22	Պավլովյան	11304	1155	700	13159
23	Վանովյան	9144	2310	500	11954
24	Արմավրի	12756	2450	800	16006
25	Կուրգանյան	9144	1610	700	11454
26	Ուրաղնինի	9144	1160	600	10904
27	Ադիգեյի Ի. Մ.	27480	10950	4000	42430
28	Չեչենյան Ի. Մ.	8640	900	350	9890
29	Չերքեզիայի Ի. Մ.	10980	900	700	12580
30	Կարաչայի Ի. Մ.	9720	900	300	10920
31	Դաղստան	19620	900	1178	21698
Ընդամենը		649872	116700	65428	832000

5. ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԸ ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔՄԱՆ ՈՒ ԶՈ-ՐԱՅՄԱՆ ՄԵԶ

Անցյալ տարի մամուլը բավաքան աչքի ընկնող դեր խաղաց ձխախոտատուների կամպանիայում:

Ցերկրամասի կենտրոնից դեպի բոլոր հիմնական ձխա-խոտադործական ուսյոնները գործուղվեցին «Կոլխոզնայա պրավդա», «Կոմունիստիս», «Պրիչինկ» և «Մուրճ-Մանգաղ» (ներկայումս «Գրոն») լրագրերի շրջիկ խմբագրութունները:

Այս շրջիկ խմբագրութունները մասնաշաղկան լայն աշ-խատանք եյին ծավալում կոլտնտեսականների մեջ, անխնա-յորեն ջրի յերես հանում և խարազանում ուսյոնական կոլ-տնտեսային ղեկավարության մեջ գտնված ամեն ուսնդի ուղորտունիստներին, ինչպես և ծուլ կոլտնտեսականներին: Մյուս կողից նրանք հայտաբերում և լայնորեն ժողովրդա-կանացնում եյին բոլոր հարվածայիններին ու ենտուղիասա-տներին, տարածում եյին նրանց փորձը: Այսպիսով շրջիկ խմբագրութուններն իսկապես վոր իրականացրին սոցիոց-ման և հարվածայնության բարձր ձևերը և այս հիմուն-քով պլանները թե կատարվեցին և թե գերակատարվեցին:

Ներկա տարվա բերքահավաքման ժամանակ առանց բա-ցառության բոլոր ձխախոտադործական ուսյոններում կան տեղական, ուսյոնական լրագրերը և այդ խնդիրներն այժմ հիմնականում նրանց վրա յին ընկնում:

Կոլտնտեսային բազմատիրաժ թերթերը դեռ նս բավա-կանաչափ չեն առաջադիմել, իսկ տեղ-տեղ ել այդպիսի լրա-գրեր բոլորովին չկան: Հետևապես, ուսյոնական լրագրերի պարտականությունն է աջակցել յեղած լրագրերին և կազ-մակերպել նորերի հրատարակությունը:

Ծխախոտադործական արդյունաբերությունը, հանձինս «Սոյուզտաբակսիրյո»-յի, այս տարի ձխախոտադործական հիմնական ուսյոնների լրագրերին բաց է թողնում խոշոր միջոցներ և նրանց առջև հետևյալ հիմնական խնդիրներն է դնում:—

1. Գործնական ոգնություն կոտնտեսային բազմատիրութ թերթերին, խմբագրներին խորհրդակցություններ, գյուղթղթակիցների հավաքներ, բրիգադների առաքում գեպի կոտնտեսությունները, շրջիկ խմբագրություններ, թերթերի մատակարարում բրիգադներին և այլն:

2. Ծխախոտի հերթական կամպանիաների ամենորյա լուսաբանություն:

3. Կոտնտեսությունների ծխախոտա-ապրանքային ֆերմաների միջև սոցմրցման կազմակերպում:

4. Թե առանձին բրիգադների և թե կոտնտեսուհիների ու կոտնտեսականների իսկական հարվածային աշխատանքի ղրսևորում և ժողովրդականացում: Ծխախոտա-ապրանքային ֆերմաների միջև փորձի փոխանակման կազմակերպում:

Դրա հետ միասին պետք է հայտարարել և ջախջախել կոտնտեսությունների և ծխախ.-ապրանք. ֆերմաների ղեկավարության մեջ յեղած ոպորտունիզմը, պետք է հայտաբերել ծուլերին, կորդիչներին և գործի հաջողությունը վիժեցնողներին:

5. Կոտնտեսային լայն մասսաներին մոբիլիզացիայի յենթարկել՝ արտադրանքի վորակի, աշխատանքի բարձր ղիսցիպլինայի և արտադրողականության համար և կորուստների ղեմ պայքարելու:

6. Կազմակերպել ու ղեկավարել սոցմրցումը իրենց և հարևան աայոնների կոտնտեսությունների միջև:

7. Գումարել ծխախոտագործ հարվածայինների (թե կանանց և թե տղամարդկանց) աայոնական և միջաայոնական հավաքներ, կնքել սոցիալիստական յերաշխալորության պայմանագրեր՝ պլանները կատարելու և գերակատարելու համար:

8. Կազմակերպել գյուղթղթակիցների հարվածային բրիգադներ, շրջագայություններ, հսկիչ պոստեր, փորձի փոխանակություն և այլն:

9. Կազմակերպել ծխախոտի տերևահատի և չորացման որինակելի, ցուցադրական աշխատանք, վորին պիտի մաս-

նակցեն մասնադետ կոտնտեսուհիներն ու կոտնտեսականները և մամուլի հարվածայինները: Այսպիսով ցույց տալ, թե ինչ վորակի աշխատանք պիտի կատարվի և ինչպես պիտի պահպանվեն ագրոտեխնիկական կանոնները:

10. Կազմակերպել աշխատանքները կարճ ժամկետերում կատարելու գործը, — աայոնական ծխախոտագործական կոտնտնություններին կից ստեղծել շտաբներ և լրագրերի եջերում սիստեմատիկորեն ցույց տալ, թե ինչպես պետք է կարճ ժամկետերում կատարվեն ծխախոտի բերքահավաքն ու չորացումը: Ցուցադրել լավագույն ծխախոտա-ապրանքային ֆերմաների փորձը, վորոնք կարողացել են ամենակարճ ժամկետերում կատարել իրենց պլանը: Միևնույն անել նաև առանձին բրիգադների ու կոտնտեսականների վերաբերմամբ:

11. Շրջագայություններ կազմակերպել, ստուգելու աշխատանքի կազմակերպումը ծխախ. ապր. ֆերմաներում: Լրագրերում լուսաբանել, թե առանձին բրիգադներում ինչպես են դասավորված ուլժերը, ինչպես են ոգտագործվում աշխատող ձեռքերը, լծկանն ու ինվենտարը, ինչպես է դւլված աշխատանքի հաշվառքը, ինչպես են կատարվում արտադրութի նորմաները, արդյոք վերացված են դիմադրկությունն ու հավասարանքը:

12. Կոտնտեսային լայն մասսաների ուշագրությունը ղորահավաքել աայն հարցերի շուրջը, վորոնք վերաբերում են ծխախոտի տերևահատի, թեկելու և չորացնելու մեքենայացման ու աացիոնալացման, Լրագրերի եջերում ժողովրդականացնել աայ բնագավառում յեղած նվաճումները: Կազմակերպել առաջարկների հավաք և աացիոնալիզատորական հաշիվ-պատվեր, վոր ներկայացվում է աացիոնալիզատորներին, գյուտարարներին — կոտնտեսականներին:

Կոտնտեսություններում ուսցիոնալացման ու մեքենայացման փորձի փոխանակությանը ներղրավել խորհոտնտեսությունները և Համամիութենական Ծխախոտագործական ինստիտուտի փորձակայաններին:

13. Տալ ազրոտեխնիկական եջեր, վորտեղ կոնկրետ կերպով պիտի ցուցադրվին ծխախոտի տերեւահատի, թելելու և չորացնելու ազրոտեխնիկական ձևերը:

14. Առանձնահատուկ հսկողութեան տակ առնել ծխախոտա-ապրանքային ֆերմաներում կոլտնտեսուհիների և կոլտնտեսականների կուլտուր-կենցաղային սպասարկման հարցերը և լրագրել եջերում ցույց տալ այս աշխատանքի լավ ու վատ նմուշները:

Նկարագրել լավագույն մանկամուտները, մանկահրապարակները, հասարակական սննդի կազմակերպումը և առաջին անհրաժեշտութեան առարկաների վաճառքը:

15. Լրագրերի եջերում ամեն որ լուսաբանել ռաշոնների մրցման յերկրային կոնկուրսի ցուցիչների կառարուումը և հսկողութիւնն ունենալ այդ գործի վրա:

16. Կազմակերպել շրջիկ խմբագրութիւններ, ուղարկել սրանց առանձին գլուղխորհուրդները՝ կոլտնտեսութիւններում լույս ընծայելով տեղական հատուկ համարներ:

ՀԱՎԵԼՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՔԱՂՎԱԾՔ ԴԵՂԻՆ ԾԽԱԽՈՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՐԻՅ, ՎՈՐՈՆՔ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ ՅԵՐԿՐԴՈՐԾԿՈՄԻ ԿՈՂՄԻՅ, 1932 ԹՎԻ ՀԱՄԱՐ

ԲԵՐՔԱՆԱՎԱՔ

1. Տերահատի սկիզբը համարել ծխախոտի ստորին տերևների տեխնիկական հասունութիւնը: Բերքահավաքումը պետք է վերջանա վոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 25-ը:

2. Յերկրամասի բոլոր ռաշոնների համար սահմանվում է տերահատի հետևյալ քանակը.—

ա) Սակավատերի տնտեսների համար 4—5

բ) Բազմատերի » » 5—6

Ծանոթութեամբ, 2ի թույլատրվում բերքահավաքման ժամանակ խառնել զանազան տերահատերի տերևները, 2ի

թույլատրվում հավաքել լրիվ հասունացած, թառամած տերևները:

3. Ստորին տերևների թելումը պետք է տեղի տերահատից հետո մեկ որից վոչ ավելի, մնացած տերևների թելումը—յերկու որից վոչ ավելի:

Ծանոթութեամբ, Հիվանդ և մեքենայաբար վնասված տերևները թելվում, չորացվում և հետագա մշակման են չենթարկվում առանձին:

ԴԵՂՆԵՑՈՒՄ ՅԵԼ ԶՈՐԱՑՈՒՄ

1. Ծխախոտի դեղնեցումը կատարվում է Պետական Ծխախոտագործական Ինստիտուտի և տեղերի ազրոտեխնիկական պերսոնալի ցուցմունքների համապատասխան:

Ծանոթութեամբ, Թաց ծխախոտը կուլտերով դեղնեցնել չի թույլատրվում:

2. Տաքացվող շենքերում և արևի տակ չորացումը կատարվում է Պետական Ծխախոտագործական Ինստիտուտի և տեղերի ազրոտեխնիկական պերսոնալի ցուցմունքների համաձայն:

Ծանոթութեամբ 1. Իբրև ընդհանուր կանոն, թույլ է տրվում վազոնների վրա կախել միայն միևնույն տեսակի ծխախոտ (ըստ հասունութեան, տերահատի և այլն): Թափված տերևների հավաքումը պարտադիր է:

Ծանոթութեամբ 2. Վազոններից թելած ծխախոտը կարելի չէ վերցնել միայն չորացրած ծխախոտը թեթեակի խոնավացնելուց հետո:

ՀԱՎԵԼՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

ՔԱՂՎԱԾՔ 1932 ԹՎԻՆ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՎԵԼԻՔ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՇՎԻՑ

ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԱՆԱՎԱՔԸ

1. Հավաքվում են միայն տեխնիկապես հասունացած տերևները:

Զհասունացած և թոշնած տերևները չեն հավաքվում և վորպես բերք:

Վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, վոր տերևները չափից դուրս հասունանան:

2. Զի թույլադրվում միաժամանակ հավաքել տարբեր տերևները (խառնել նրանց):

3. Բոլոր ծխախոտագործական ուսուցանողների համար հետևյալ քանակությամբ տերևահատ և սահմանվում.—

Սակավատերև ծխախոտների համար—4—5 տերևահատ (Պլատանա—Արկադիա և այլն):

Բազմատերև ծխախոտների համար—5—6 տերևահատ (Արկադիա—տիկկուլակ և այլն):

4. Բոլոր ուսուցանողներում ծխախոտի բերքահավաքը պետք և ավարտվի սեպտեմբերի 25-ից վոչ ուշ:

5. Հիվանդ, վարակված, մեխանիկորեն վնասված և այլ տերևները բերքահավաքման ժամանակ պետք և բաժանվեն նորմալ, առողջ և անվնաս տերևներից:

6. Տերևահատից հետո վոչ մի դեպքում չի կարելի դաշտում, շարքամեջերում տերևներ թողնել:

ԾԽԱԽՈՏԻ ԹԵԼՈՒՄԸ, ԴԵՂՆՈՒՄԸ

1. Ծխախոտը թելելու ժամանակ հիվանդ, վարակված և մեխանիկորեն վնասված տերևներն անպայման բաժանել նորմալ, առողջ տերևներից:

2. Ծխախոտը դաշտից մինչև թելելու տեղը տանելիս, մինչև թելելը պահելիս, թելելու, դեղնեցնելու, ինչպես և չորացնելու ժամանակ թույլ չտալ, վոր նա ավելորդ տաքություն վերցնի, մեխանիկորեն վնասվի և աղտոտվի:

3- Ծխախոտի ստորին տերևների թելումը կատարվում և տերևահատից վոչ ուշ, քան մեկ օր հետո,—յեթե նա թելելի վրա շարված գրությամբ և դեղնեցվում, իսկ մյուս տերևները թելումը—տերևահատից վոչ ուշ, քան յերկու օր հետո:

4. Ամեն մի թելի վրա շարվող ծխախոտը պետք և լինի միևնույն տերևահատից, միևնույն հասունության, միևնույն չափի տերևներով և այլն:

5. Անձրեից կամ ցողից թրջված ծխախոտը չի կարելի կույտերով դեղնեցնել:

6. Թելելու և դեղնեցնելու ժամանակ, յերբ ծխախոտը դարավում և հատակի վրա, նրա տակ անպայման պետք և փովի չոր ծղնոտ, խոտ, խոիր և այլն:

7. Թելումը և դեղնեցումը ճշտությամբ կատարելու համար անպայման հարկավոր և ուսուցիչ Պետական Ծխախոտագործական Ինստիտուտի և տեղերի աղբյուր տեխնիկական աշխատողների ցուցմունքներով:

ԾԽԱԽՈՏԻ ԶՈՐԱՑՈՒՄԸ ՏԱՔԱՅԻՆ ԾԵՆՔԵՐՈՒՄ ՅԵԼ ԱՐԵՎԻ ՏԱԿ

1. Արևի տակ չորացնելիս ծխախոտի տեղը պետք և լավ պաշտպանված լինի սառը և չոր քամիների ազդեցությունից:

2. Վորպեսզի տերևները մեխանիկորեն չվնասվեն, նրանք չորանոցից պետք և դուրս բերվեն այն ժամանակ, յերբ ծխախոտը մի փոքր խոնավ կլինի:

3, Զոր ծխախոտի թելերը հանվում են միայն նրանից հետո, յերբ բոլորովին չորացել են տերևների մակերևույթը և նրանց միջին յերակը:

4. Բարձր վորակի ծխախոտի ուսուցանողներում (ն. Ծովափ, ն. Մայկուպի շրջան, Գյուլչի ուսուց) բոլոր տեսակի տերևների (բացի դեղնաբերից և խաշլամայից) միջին յերակը վերջնականապես չորացվում և մաքաբներում, առանց վազոնների արևի տակ տանելու, վորպեսզի չտուժի ծխախոտի դուրսը:

ՀԱՎԵԼՎԱԾ ՅԵՐՐԱՌԴ

ՔԱՂՎԱԾՔ ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔՄԱՆ ՈՒ ՉՈՐԱՅՄԱՆ ՎՈՐԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՑ

Կատարվող աշխատանքները	Վերականգնողական, վերականգնողական և վերականգնողական աշխատանքները	Աշխատանքի իջեցումը տեղի ունեցող, վերականգնողական և վերականգնողական աշխատանքները	Վատ աշխատանքի համար	Շատ վատ աշխատանքի համար
Տերևահատ	1. Քաղել տեխնիկայի հասունացած տերևները չիթողելով վոր նրանք չափից դուրս հասունանան: 2. Հիվանդ, վարակված, չափից դուրս հասունացած տերևները քաղել (կտրել) և դարձել առանձին: 3. Քաղված տերևները կանոնավոր դարձել շարքամեջերում: 4. Սալը բեռնելիս հետևել վոր դաշտում տերևներ չմնան:	10 6 4 5	15 8 5 7	
Ծխախոտի տեղափոխումը	1. Տերևները դարձել ամուր, նրբանց վերին ծալքերը դեպի ներս (դարձվում են արկղներում, տեղափոխում, սալի վրա և այլն): 2. Դարձելիս չհամարել և չհամարել տերևները: 3. Տեղափոխությունը կատարել առանց կորստի և առանց ծխախոտի փշրելու: 4. Տեղափոխելիս ծխախոտն անպայման ծածկել բեռնակապով, պարկերով և այլն: 5. Տերևները բարձիլ բրդաշերտից ուղեւորները համաձայն:	25 8 8 6 3	35 11 11 8 5	
Ծխախոտի թեւումը	1. Թելի վրա ծխախոտը շարել նորմալ խտությամբ, նայած թե նա ինչպես և չորացվելու: 2. Հիվանդ, վարակված, չափից դուրս հասունացած կամ լավ չհասունացած տերևները շարել առանձին:	7 6	10 80	

1	2	3	4
	3. Թելելու ժամանակ տերևները չհամարել, չհաշվել և չթափել:	5	7
	4. Պոչի մեջտեղը անդրս անցկացնել ախպես, վոր թելը լինի պոչի ծալքից վոչ պակաս քան 1 սանտիմետր հեռու:	4	6
	5. Տերևները շարել ախպես, վոր շիտակ կողմը դրսից լինի:	3	4
	6. Թելած ծխախոտը կանոնավոր դարձել կույտերով:	—	—
		25	35
Ծխախոտի դեղնումը մարագում	1. Ծխախոտի տակ անպայման պետք է փռվածք (ծղոտ, խսիլ) լինի 25—30 սմ. հաստությամբ:	5	7
	2. Ամեն մի կույտում պիտի լինի միևնույն տերևահատի և տեսակի ծխախոտ:	8	12
	3. Տեղափոխելիս չհամարել, չհաշվել և մեխանիկորեն չվնասել տերևներին:	4	6
	4. Վարակված, չափից դուրս հասունացած, լավ չհասունացած տերևները դարձել առանձին:	4	6
	5. Ամեն որ հետևել ողի ջերմության և չիթողել վոր տերևները չափից դուրս տաքութուն առնեն:	4	6
		25	35
Թելած ծխախոտի դեղնումը շրջանակները կամ վազոնները	1. Շրջանակները կամ վազոնները մարագից դուրս բերել այն ժամանակ, յերբ չկա մառախուղ, քամի և առատ ցրդ:	5	8
	2. Վազոնների վրա կախել միևնույն տերևահատի և տեսակի ծխախոտ:	8	10
	3. Յերբ շրջանակները կամ վազոնները շոգ ժամանակ դրոշմեն են, սովերել նրանց:	—	—
	4. Շրջանակները ու վազոնները տեղավորել ախպես, վոր թելերն ուղղված լինեն հյուսիսից հարավ:	—	—
	5. Շրջանակները շերտից դուրս բերել և ներս տանել առանց տերևների կորստի և մեխանիկական վնասման:	5	8

Ծխախոտի դեղ- նույն ապացուցվող չորանոցում	6. Հիվանդ, չափից դուրս հառու- նացած և այլ նման տերևների թելերը կախել առանձին վազոն- ները ու շրջանակները վրա:	7	9
		25	35
	1. Դեղնեցնելիս ողի ջերմություն- ը պիտի լինի 30—35 աստիճան ըստ Ցելսիուսի: 2. Վազոնների վրա կախել միև- նույն տերևատի և տեսակի ծխախոտ: 3. Չափից դուրս հասունացած, հիվանդ և այլ տերևները դեղ- նեցնել առանձին վազոնների վրա 4. Վազոնները չորանոց տանելիս չթողնել վոր տերևները կամ ամ- բողջ շաբբը մեխանիկորեն փլատ- վին:	8 6 5 6	10 9 7 9
		25	35
Չորացումը արե- վի տակ	1. Բոլոր թափված տերևները հա- վաքել: 2. Յուրաքանչյուր շրջանակի կամ վազոնի մեջ լցնել միևնույն տե- րևատի և տեսակի ծխախոտ: 3. Շրջանակներն ու վազոնները ներս ու դուրս տանել առանց տե- րևների և ամբողջ թելերի կորս- տի և մեխանիկական փլատման:	7 9 9	9 13 13
		10	13
		4	6
Չորացումը առ- բացվող շենքե- րում (շաբաթին կուրստեսական- ների համար)	1. Չորանոցում պիտի լինի միա- տեսակ ծխախոտ: 2. Շենքում տեղավորել սահման- ված չափից վոչ ավելի վազոններ 3. Ջերմությունն ավելացնել և ողափոխություն կատարել հավա- սարաչափ դեղին ծխախոտի ամ- բողջ քանակությունը տեղավո- րելուց հետո: 4. Վազոններ բռնելիս կամ դա- տարկելիս հավաքել բոլոր թափ- ված տերևները: 5. Վազոնները չորանոցից դուրս տանելիս թույլ չտալ, վոր տերև- ները մեխանիկորեն փլատվեն:	— 5 6	— 7 9
		25	35

Չորանոցում	1. Ջերմությունն ավելացնել և ողափոխություն կատարել (չո- րացնելու համար) այն մոմենտից սկսած, յերբ ընդունված լինի հավասարաչափ դեղին ծխախոտի ամբողջ քանակը: 2. Տերևները չորացնելիս ջեր- մությունը պիտի լինի 37-50 աս- տիճան ըստ Ցելսիուսի, իսկ խո- նավությունը—50 տոկոս: Պոչերի և յերակների չորացման համար ջերմությունը պիտի լինի 50-55 ըստ Ցելսիուսի, իսկ խոնավու- թյունը—40-45 տոկոս: 3. Ծխախոտի չորացման ընթաց- քում թույլ չտալ, վոր ջերմու- թյունն ու խոնավությունը հան- կարժակի փոխվեն: 4. Չորացումը պիտի տևի 4-5 օր, հաշված նաև շենքը լցնելիս ու դատարկելի:	7	10
		7	10
		7	10
		4	5
		25	25

ՀԱՎԵԼՎԱԾ ԶՈՐՈՐԴ

ԱՐՏԱԴՐՈՒՅԹԻ ՄՈՏԱՎՈՐ ՆՈՐՄԱՆԵՐԸ ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔՄԱՆ ՈՒ
ԶՈՐԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ձև №	Ըստ կարգի	Աշխատանքի տե- սակներն ու պայ- մանները	Մեքենաներ	Արտադրույ- թի նորմա- ներ	Հաշվավորը և	Մարդիկ	Աշխատ. միա- վորի գնահա- տումը 1 հեկ-	Աշխատ. դրժ- վարության կամ վերական- գիմի ծախս
1.		Բերհաձագ						
		Ապրիլի տերեվահատ	—	1	—	8,75	8,75	Ծանր
		Մանրատերև . . .	—	1	—	8	8,0	հու-
								ոարակ
2.		2-րդ տերեվահատ	—	1	—	8	8,0	»
		Մանրատերև . . .	—	1	—	8	8,0	»
								»
3.		3-րդ տերեվահատ	—	1	—	8	8,0	»
		Մանրատերև . . .	—	1	—	12	12,0	»
								»

4.	4-րդ տերեվահատ						
	Խոշորատերև . . .	—	1	—	8	10,0	Ծանր
	Մանրատերև . . .	—	1	—	10	12,5	» »
5.	5-րդ տերեվահատ						
	Խոշորատերև . . .	—	1	—	6,5	8,13	» »
	Մանրատերև . . .	—	1	—	8	10,0	» »
	Թելում						
	Խոշորատերև . . .	—	25	թել	—	5,0	» »
	Մանրատերև . . .	—	20	»	—	6,25	» »
6.	Տերեվահատ յեղ						
	քելում						
	ա) 1-ին յեղ 5-րդ						
	Խոշորատերև . . .	—	12	»	—	1	10,42
	Մանրատերև . . .	—	10	»	—	1	12,5
	բ) 2-րդ, 3-րդ, 4-րդ						
	Խոշորատերև . . .	—	18	»	—	1	6,94
	Մանրատերև . . .	—	15	»	—	1	8,33
7.	Զորացումը յեղ դեղ-						
	նացումը						
	1 Արեվով						
	Թելերի կախելը . .	—	200	»	—	1	0,5
	Վազոնների ներս						
	ու դուրս տանելը .	—	1200	»	—	1	0,08
8.	Թելերի հանելն ու						
	փունջ կապելը . .	—	600	»	—	1	0,17
9.	2. Փակ շենքում						
	լցնելն ու դատար-						
	կելը	—	600	»	—	1	0,17
10	Զորացման խնամք						
	3. Զանազան տեսակ						
	չորացում						
	Արևով	—	175	»	—	1	0,57
	Հետո չորանոցում .	—	300	»	—	1	0,41
	Դատարկելը, Թելից						
	հանելն փունջ ու						
	կապելը	—	600	»	—	1	0,21

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն. ախարան	2
Ներածություն	6
Գլուխ առաջին	
Միասնորի բերանավազման կազմակերպչական նախապատ-	
րաստման աշխատանքները	9
Գլուխ յերկրորդ	
Մեկ լիտրի բերանավազմ	
ա) Նախնական դիտողություններ	14
բ) Տերևահատ	18
գ) Միասնորի տեղափոխությունը դաշտից	23
դ) Կանաչ ծխախոտի Թելումը	25
ե) Թելած ծխախոտի ստորաօտումը դեղնեցման	
և չորացման համար	29
Գլուխ յերրորդ	
Միասնորի դեղնեցումը	30
ա) Խնչումն և դեղնեցման ելույթները	31
բ) Միասնորի դեղնեցման հիմնական մոմենտները	33
1) Զթելված ծխախոտի դեղնեցումը	34
2) Թելած և կուտակված ծխ. դեղնեցումը	36
3. Դեղնեցում շարժական շրջանակների վրա	37
4. Միասնորի դեղնեցումը վազոնների վրա	38
5. Դեղնեցումը տաքացվող շենքում	38
6. Վերջնի պետք և դեղնեցնել ծխախոտը և վոր ձևն և	
ամենից լավ	39
Գլուխ չորրորդ	
Միասնորի չորացումը	40
ա) Միասնորի չորացումն արևի տակ	41
1. Միասնորի չորացումը շարժական շրջանակների վրա	42
2. Միասնորի չորացումը վազոնների վրա	45
3. Զորացումը փայտիկներով	45
4. Միասնորի չորացման ամենատարածված ձևերից մեկը	46

5. Ծխախոտի չորացումը վրանների և շենքերի պատերի վրա	48
6. Ծխախոտի չորացումը տաքացվող շենքերում	50
1. Ինժեներ Յուրդանակու սխառեմի չորացումը	53
2. Յուրդանակու չորացումը ծխախոտը չորացնելու կանոնները	55
3. Ինչ անել, վոր արհեստականորեն չորացվող ծխախոտն իր գույնով և վորակով հավասարվի արևով չորացվող ծխախոտին	58
4. Ինչպես չափել չորացող ուղի շերտաշերտերը	60
5. Գյուղացիական տիպի արհեստական չորացումներ	62
7. Ապակյա չորացումներ	64
դ) Չորացումն ձեռքով չորացում	66
դ) Ծխախոտի թփերի, ֆիլիչների և գազելների չորացումը	66

Պլուխ հիմքեր

Հշխատանքի կազմակերպումը յեվ ույժերի դասավորությունը ծխախոտի բերքահավաքման ու չորացման ժամանակ	68
---	----

Պլուխ վեցերորդ

Ծխախոտի բերքահավաքման ու չորացման աշխատանքների մեխանիզացումն ու ուղիորդությունը	75
---	----

Պլուխ յոթերորդ

Ծխախոտի դաշտային վնասատուներն ու հիվանդությունները յեվ նրանց դեմ կռիվելու միջոցները	84
Ծխախոտի հիվանդությունները	90
Ծխախոտի հիմնական տերևահատը կատարելուց հետո ել ինչ պիտի անել դաշտում	93
Ծխ. կոլտնտ. և ապրանք. ֆերմաներում ագրոտեխն. մեքենայաց. և ուղիորդական բջիջների կազմակերպման մասին	93

Պլուխ ութերորդ

Զոր ծխախոտի հաշվառումն ու պահպանումը	96
--------------------------------------	----

Պլուխ իններորդ

Ծխախոտագործական շենքեր յեվ այլ կառուցվածքներ	101
--	-----

Պլուխ տասներորդ

Լրացումներ	
1. Ծխախոտի բերքահավաքը ամբողջ բուսերով	103
4. Ֆիլիչների և գազելների բերքահավաքը	107
3. Ծխախոտի բերքահավաքման ու չորացման համար անհրաժեշտ նյութերը ու ինվինտարի մոտավոր հաշվարկ	109
4. Դասնթացները ագրոտեխնիկական և ծխ. ապր. ֆերմաների աշխատողների վորակավորման բարձրացման համար	110
5. Մամուլի դերը ծխախոտի բերքահավաքման ու չորացման մեջ	113

Հավելված առաջին

Քաղվածք ծխախոտի վերաբերյալ ագրոտեխնիկական կանոնները	
Բերքահավաք	116
Ինքնեցում և չորացում	117

Հավելված յերկրորդ

Քաղվածք 1932 թ. ծխախ. խորհուրդ. յեվ կոլտնտ. հերկայացվելիք ագրոտեխնիկական հաշվից	
Ծխախոտի բերքահավաքը	117
Ծխախոտի թելումը, դեղնումը	118
Ծխախոտի չորացումը տաքացվող շենքերում և արևի տակ	119

Հավելված յերրորդ

Քաղվածք ծխ. բերքահավաք. յեվ չորացման վորակային ցուցիչների ստանդարտներից	120
---	-----

Հավելված յորրորդ

Արտադրության մատակարարմանը ծխախոտի բերքահավաքման յեվ չորացման ժամանակ	123
---	-----



Ответственный редактор А. Г. Авакьян Технический редактор Г. М. Маркьян	№ 2613 АС-36	Сд. в набор 14/VII—1932 г. Сд. в печать 6/X—1932 г. Об'ем 4 ^{1/2} печ. листа Тираж 2000 экз.
--	-----------------	--

Уполкрийлита № 1668. Газ.-кн. тип. СККПО. Статформат Б6 125X176 Заказ № 3664
Гор. Ростов на Дону.



ՀՀ Ազգային գրադարան



NL0287609

ԳԻՆԵ 60 ԿՈՊ.
ЦЕНА 60 КОП.

41328

18532



« На армянском языке

ՇԵԼԵՏԵՐԻԼԻ

СУШКА И ХРАНЕНИЕ
ТАБАКА

Перев. А. Мазманьян

№ 50 „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԳԱԶՈՒՄ

ՀԱՅՏՈՎ-ԴՈՆ ՍՈՍՈՐՏԱՆ ՓՈՂ. 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ ԿԵՆԳՈՅԵԼՏԲ